

ՍՈՆՅԱ ՇՐԱՅԲԵՐ ՎԱՅՑ

ԽՈՍՏԱՑԱ, ԵՍ ԿՊԱՏՄԵՄ



ԵՐԵՎԱՆ-2017

Գիրքը տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Անգլերենի նրբությունների խորհրդատու՝
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բոստոնի Նորթ Իստերն համալսարանի (ԱՄՆ)
իրավագիտության դոկտոր

Խմբագիր՝ **ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ**
բանասիրական գիտությունների դոկտոր

«Խոստացա, ես կպատմեմ» հուշագրության հեղինակը՝ Սոնյա Վայցը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տառապել է Կրակովի գետտոյում ու 5 համակենտրոնացման ճամբարներում, ուր հրեաներին բնաջնջում էին: Սոնյայի 84 հոգուց բաղկացած ընտանիքից վերապրել են միայն ինքն ու քույրը՝ Բլանկան: Գիրքը ցնցող պատկերներով նկարագրում է ֆաշիստների ռասայական խտրականություններն ու գազանությունները: Գրքում կան նույն թեմային վերաբերող Սոնյայի բանաստեղծությունները: Հուզիչ այս հուշապատումը միաժամանակ լի է հավատով, թե մարդկությունն ի վերջո կդառնա իմաստուն, և այլևս չեն լինի բռնություններ ու ցեղասպանություններ, ինչպիսիք էին Հոլոքոստը, 1915 թվականի հայերի և վերջին՝ Կամբոջիայի ցեղասպանությունները:

Գիրքը հանձնարարվում է ընթերցող լայն լսարանին և առաջին հերթին երիտասարդությանը:

ՍՈՆՅԱ ՇՐԱՅԲԵՐ ՎԱՅՑ
ԽՈՍՏԱՑԱ, ԵՍ ԿՊԱՏՄԵՄ

Թարգմանությունը անգլերենից

Աելիտա Դոլուխանյանի

SONIA SCHREIBER WEITZ
I PROMISED I WOULD TELL

Translated from English into Armenian

by Aelita Dolukhanyan

SONIA SCHREIBER WEITZ
J'AI PROMIS DE RACONTER

Traduit de l'anglais par

Aelita Dolukhanyan

СОНЯ ШРАЙБЕР ВАЙЦ
Я ОБЕЩАЛА, ЧТО РАССКАЖУ

Перевод с английского

Аэлиты Долуханян

Նվիրվում է քրոջս՝ Բլանկային,
որի խիզախությունն ու սերը ուժ տվեցին ինձ գոյատևել,
և ամուսնուս՝ Մարկին,
որի սերն ու ըմբռնումը բուժեցին իմ
մարմինն ու հոգին:

Սոնյա Վայցը (1928-2010) վերապրել է Կրակովի գետտոն և 5 նացիստական համակենտրոնացման ճամբարներ:

Ազատագրումից հետո տեղափոխվել է Միացյալ Նահանգներ, ամուսնացել և ընտանիք կազմել: Սոնյան իր ողջ կյանքը նվիրել է, ինչպես խոստացել էր նահատակ մորը, Հոլոքոստի մասին ճշմարտությունը պատմելուն:

Սոնյա Վայցը նաև բանաստեղծ է և պոեզիայում նույնպես վերարտադրել է իր ապրած ցավը: Հոլոքոստի թեման երկար տարիներ դասավանդել է հազարավոր աշակերտների և մեծահասակների:



Սոնյա Վայցի դուստր Սանդրա Շրայբեր Վայցը և Աելիտա Դոլուխանյանը (Բոստոն, 2015թ.)

ԱՌԵՐԵՍՎԵՆՔ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԵԶ ՀԵՏ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴ

Առերեսվենք պատմությանը և մեզ հետ՝ ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագրեր պատրաստելու կազմակերպություն է, որը ծառայություններ է մատուցում ուսուցիչներին և աշակերտներին՝ դիմակայելու XX դարի պատմության մեջ տեղ գտած ռասիզմի, հակասեմիտականության և անհանդուրժողականության երևույթներին: Ծրագիրը հնարավորություն է տալիս ավագ դպրոցներում, համալսարաններում և մեծահասակների կրթական դասընթացներում ուսումնասիրելու Հոլոքոստը, հետազոտելու այնպիսի բարոյական խնդիրներ, ինչպիսիք են՝ անմարդկայնացումը, հարմարվողականությունը, իշխանության չարաշահումը, անխոհեմ հնազանդությունը իշխանությանը և անհատական պատասխանատվությունը, ինչպես նաև այս խնդիրների կարևորությունը ռասիզմի, խտրականության և բռնության հարցերում, որոնք ժամանակակից հասարակությունը պետք է լուծի:

Առերեսվենք պատմությանը և մեզ հետ դասընթացները հետազոտում են մարդկային վերաբերմունքի շարքը՝ անձնական, խմբային և ազգային, որոնք հնարավոր դարձրին Հոլոքոստի տեղի ունենալը:

Առերեսվենք պատմությանը և մեզ հետ դասավանդվում է ավելի քան 500.000 աշակերտների՝ հանրակրթական, մասնավոր և հոգևոր դպրոցներում: Ավելի քան 30.000 մանկավարժներ Միացյալ Նահանգներից, Կանադայից և այլ երկրներից մասնակցել են սեմինարներին և վերապատ-

րաստման դասընթացներին: Կազմակերպությունն ունի ռեսուրսների գրադարան Մասաչուսեթի Բրուկլայն քաղաքում, և այս գրադարանը ուսուցիչներին տրամադրում է գրքեր, պարբերական մամուլ, դասախոսներ, տեսահոլովակների մեծ հավաքածու՝ Առերեսվենք պատմությանը և մեզ հետ¹ դասընթացներում օգտագործվելու համար: XX դարի պատմության և դեռահասների զարգացման վերաբերյալ շարունակական հետազոտությունները դարձել են մի քանի հրապարակումների նյութ: Առերեսվենք պատմությանը և մեզ հետ դասագրքերի մեջ մտնում են «Ժամանակի տարրերը» („Elements of Time“), որ կցվում է Հոլոքոստի վերապրածների տեսահոլովակներին, և «Ընտրել մասնակցությունը» („Choosing to Participate“), որ նկարագրում է անձեր և խմբեր, որոնք փորձել են բերել դրական փոփոխություններ ժողովրդավարական մասնակցության միջոցով: Այս հրապարակումները մշակված են աշակերտներին մտածել տալու, թե ինչպես են Հոլոքոստի դասերը կապված իրենց այսօրվա կյանքի հետ:

¹ Թարգմանությունը կատարված է «Խոստացա, ես կպատմեմ» գրքի առաջին հրատարակությունից: Առերեսվենք պատմությանը և մեզ հետ կազմակերպության կայքէջն է՝ www.facinghistory.org:

ՍՈՆՅԱ ՎԱՅՅԻ ԴԱՍԵՐԸ ՀԱՎԵՐԺԻ ՀԱՄԱՐ ԵՆ

Հոլոքոստը վերապրած Սոնյա Վայցի գիրքը ուղղակի ցնցեց ինձ: Եվ ես որոշեցի այն հասանելի դարձնել հայ ընթերցողին: Բոստոնում հանդիպեցի Սոնյա Վայցի համակրելի, կենսասեր և սոցիալական արդարությանը նվիրված դասերը՝ Սանդրա Շրայբեր Վայցին: Երբ մենք հանդիպեցինք, նա պատրաստվում էր տեղափոխվել իր պատմական հայրենիքը՝ Իսրայել, ուր վաղուց ընտանիքով բնակվում էր իր քույրը: Շատ շնորհակալ եմ, որ նա տվեց իր համաձայնությունը, որպեսզի մոր գիրքը թարգմանեմ հայերենի:

Ուսանողական տարիներին կարդացել էի «Աննա Ֆրանկի օրագիրը» և հիշում եմ՝ գիրքս տալիս էի շատերին և գրեթե ստիպում, որ կարդան: 1962-ին ես տեսել եմ Օսվենցիմի մահվան ճամբարը, որն անխոս դատապարտում է ֆաշիստներին, որոնք լուսավոր XX դարում միլիոնավոր անմեղ մարդկանց և առաջին հերթին հրեաներին ողջակիզել են: Քիչ է մնում գիտակցությունդ կորցնես, երբ տեսնում ես մանկական կոշիկների, ակնոցների, մարդկանց մազերի հսկայական բլուրները: Տեղեկանում ես, որ կենդանի մարդկանց վրա, առանց անզգայացման, դրվել են բժշկական գիտափորձեր, տեսնում մարդու մաշկից պատրաստված պայուսակներ և լուսամփոփներ: Եվ ահա այս ամենի միջով անցել է Սոնյա Վայցը, որի 84 հոգուց բաղկացած գերդաստանից կենդանի են մնացել միայն ինքը և քույրը՝ Բլանկան: «Խոստացա, ես կպատմեմ» („I promised I would tell”) գիրքը վավերագրական

է. նրանում ոչինչ չափազանցված ու գունազարդված չէ: Միաժամանակ այս գիրքը կյանքի գեղեցկությունն ընկալող, մարդու վեհ կոչումը փառաբանող, ռասայականությունը մերժող ու աստվածային կատարելության գաղափարը մարդու մեջ իրականացած տեսնելու սթափեցման մի պատգամ է:

Իր գրքի առաջաբանում Սոնյա Վայցը իրավացիորեն նշում է, թե երիտթուրքերի կազմակերպած հայերի բնաջնջումը ցավալիորեն ժամանակին չճանաչվեց որպես ցեղասպանություն, և դրա անպատժելիությունը հանգեցրեց հրեաների Հոլոքոստին:

Մեծ մարդասեր և հայ ժողովրդի բացառիկ բարեկամ Ֆրանց Վերֆելը «Մուսա լեռան քառասուն օրը» հոյակապ վեպում ներկայացնում է, թե վայրենի ու քոչվորական բնագոյով ինչպես են թուրքերը բնաջնջում հայերին՝ դատարկելով նրանց պապենական հայրենիքը բնիկ տերերից, յուրացնելով նրանց արդար քրտինքով ստեղծած բարիքները:

Սոնյայի գիրքն ունի բանաստեղծական հատվածներ, որովհետև նա նաև գրող է, ու նրա բանաստեղծություններում այնքան լույս ու կենսասիրություն կա, այնքան ցնցող ու բնական են մարդկային վշտի, ափսոսանքի, հուսահատության, նաև հույսի ու արդարության հաղթանակի նկատմամբ ունեցած հավատի դրսևորումները: Գիրքը վավերական է, սակայն գրքում Սոնյան ունի գրական թվացող գլխավոր ու դրվագային կերպարներ՝ հայրը, մայրը, Բլանկան, Նորբերտը, Գիզան և ուրիշներ:

Որքան՝ գեղեցիկ է Բլանկայի կերպարը, որն իրենից ութ տարի փոքր Սոնյային սիրում էր սեփական կյանքից ավելի, ու հզոր այդ սերն օգնում է, որ նրանք հրաշքով դուրս գան մահվան հովտից ու հայտնվեն ապրողների աշխարհում:

Հոլոքոստը և հայերի ցեղասպանությունը չպետք է մոռացվեն: Սա է Սոնյա Վայցի գրքի գերագույն պահանջը: Հոլոքոստի և հայերի ցեղասպանության վերաբերյալ ստեղծված է ահռելի գիտական և գեղարվեստական գրականություն: Դրանք փաստերով վերլուծում է նաև մեր օրերի Միացյալ Նահանգների մարդու իրավունքների պաշտպան Սամանտա Պատուերը իր «Դժոխային խնդիր» („A problem from Hell“) գրքում, որում ներկայացված են հայերի ցեղասպանությունն ու Հոլոքոստն ամենայն մանրամասնությամբ:

Սոնյա Վայցի գիրքը միաժամանակ հրաշալի ռեքվիեմ է ֆաշիզմի զոհ դարձած իր միլիոնավոր ազգակիցներին նվիրված: Այս ռեքվիեմի ազդեցիկ հնչյուններում կա այն հույսն ու հավատը, թե մի օր գուցե մարդկությունն ուշքի գա ու հասկանա, թե պատասխան է տալու ոճրագործության համար, և չի կարելի հանուն իշխանության, հարստամոլության, հզոր դառնալու մոլուցքի բանական ու անմեղ մարդկանց զանգվածային ձևով ոչնչացնել, ինչպես վնասակար միջատների:

«Ո՞ւր էիր Աստված: Որտե՞ղ է մարդը», - հարցնում է Սոնյան:

պրոֆ. Աելիտա Դոլուխանյան

SONIA WEITZ'S LESSONS ARE FOR ETERNITY

Sonia Schreiber Weitz's book detailing her story of Holocaust survival shocked me and stayed with me. Hence, I decided to bring this book to the Armenian audience.

In Boston, USA, I was fortunate to meet Sonia Weitz's daughter, Sandra J. Schreiber Weitz, a generous, charming, and life-affirming woman who has dedicated much of her professional life to helping youth and promoting social justice. When we met, Sandy, as Sandra goes by, was preparing to move to Israel where her twin sister had been living for a long time with her family. I want to express my deepest gratitude to Sandy Weitz, the Executor of Sonia Schreiber Weitz's estate (1928 – 2010), for giving me permission to translate this book from English into Armenian.

As a student, I remember reading Anne Frank's "The Diary of a Young Girl," and recall loaning my copy of that book to friends and family, practically forcing them to read it. In 1962, as a young student, I visited the Auschwitz concentration camp, which is a living condemnation of Nazism. At Auschwitz, I had a hard time not passing out, and was haunted by the images of the hills of children's shoes, eyeglasses, and human hair, all belonging to the victims of the camps, most of them Jews. At Auschwitz, we saw how the Nazis carried out medical experiments on humans without any anesthesia. Then we saw the unspeakable horror of handbags and lampshades made of human skin. The crematoria

with gas chambers left us all wondering how this devastation can be brought on by one human on the other.

And Sonia Weitz lived through the horrors of the Krakow Jewish Ghetto, Auschwitz, and four other concentration camps. Of Sonia's 84-person family, only Sonia and her sister Blanca survived the Holocaust.

Sonia Weitz's book "I Promised I Would Tell" is a documentary of her experiences. Sonia tells it like it was, without exaggeration and hyperbole, and it is the power of this documentary approach that communicates the enormity of the inhumanity, calamity and devastation brought on by the Holocaust. At the same time, Sonia Weitz's book communicates hope by showing the power of the human spirit to survive, to see the beauty of life. Sonia Weitz also condemns bigotry and racism. Reading this book will help humanity become better by learning from the mistakes of the past, and live up to the divine mandates of doing good and rejecting evil.

In the preface to her book, Sonia Weitz refers to the "Armenian Genocide" as historically forgotten. As Hitler famously said in 1939, "Who, after all, speaks today of the annihilation of the Armenians?" And we all know that what followed the "historically forgotten" Armenian Genocide, as Sonia Weitz characterized it, is the unspeakable horror of the Holocaust.

In his novel "The Forty Days of Musa Dagh," great humanitarian and author Franz Werfel documented the plight of Armenians at the hands of Turks who savagely slaughtered them with the intent of emptying Armenia's historical homeland of its native population and appropriating their wealth. As a result of

such brutality, more than one and a half million Armenians perished in the Armenian Genocide perpetrated by the Ottoman Empire. Lack of condemnation by world powers led to Hitler following the Ottoman script of annihilation, and more than six million Jews perished in the Holocaust perpetrated by Nazi Germany. Sonia Weitz's hope is that we will learn from the memory of these atrocities, and the memory will "shield us from repeating such unthinkable evil."

"I Promised I Would Tell" is full of poetry because Sonia was a poet. Her poetry is striking and full of lyricism, light, life affirmation. Through her poems, Sonia touches on issues of human grief, loss, desperation. At the same time, her poetry is hopeful.

In this book, Sonia brings to life the stories of other Jewish victims and survivors. We come to know her Father, Mother, Blanca, Norbert, Giza, and others.

How beautiful and inspiring is the image of Blanca, Sonia's sister, who takes Sonia under her wing. Blanca was eight years older than Sonia, and loved the latter more than her own life. The power of their sisterly love helped them survive the valley of death and find themselves in the world of the living.

Neither the Holocaust, nor the Armenian Genocide should ever be forgotten. It is books like this that help accomplish that mission, and Sonia Weitz's book is a major contribution to the body of literature on the subject.

A significant amount of scholarship has been conducted on the Holocaust and the Armenian Genocide. One of the recent books that particularly stands out is scholar, diplomat, and human

rights advocate Samantha Powers's Pulitzer prize-winning "A Problem from Hell" where she documents both the Armenian Genocide and the Jewish Holocaust in great detail. It is the testimony of survivors like Sonia Schreiber Weitz that has helped advance scholarship on the subject, and give voice to the victims and survivors.

Sonia Weitz's book is also an eloquent and resounding requiem for the millions of Jews that became victims of the Holocaust. This requiem honors their memory, and communicates faith and hope that the day will come when humanity regains its consciousness and realizes that atrocities like this are unacceptable, and must be universally condemned. And we should never allow annihilation of people in the name of a super-race, blind authority, quest for power, and obsession for control.

Sonia Weitz teaches us all not to be indifferent bystanders. She starts out by asking where was God, but ends asking where was man. In Sonia's eloquent words:

"But now I feel God wasn't dead
And *where was man* I ask instead?"

Prof. Aelita Dolukhanyan

LES LEÇONS DE SONIA WEITZ POUR L'ÉTERNITÉ

Le livre de Sonia Weitz qui a vécu l'Holocauste, m'a causé un vrai choc. J'ai décidé de faire connaître cela aux lecteurs arméniens. J'ai rencontré à Boston Sandra Schreiber Weiz, la fille sympathique, pétillante de vie et dévouée à la justice sociale de Sonia Weiz. Lorsque nous nous sommes rencontrées, elle avait l'intention de partir pour Israël, sa patrie historique où sa sœur vivait depuis longtemps avec sa famille. Je lui suis très reconnaissante d'avoir consenti que je traduise en arménien le livre de sa mère. Lorsque j'étais encore étudiante, j'ai lu le *Journal d'Anna Frank* et je me souviens que je passais le livre à de nombreux amis en les contraignant presque à le lire. En 1962, j'ai visité le camp de concentration d'Oświężim, accusateur silencieux des crimes nazis qui, en ce XX^e siècle de lumières, ont brûlé des millions d'innocents et de Juifs en premier lieu. On est prêt à perdre connaissance en voyant ces montagnes de petits souliers, de lunettes et de cheveux. On apprend que des expériences médicales ont été pratiquées sur des êtres vivants sans anesthésie ; on voit des lampes et des sacs à main fabriqués à partir de peau humaine. Voilà tout ce que Sonia Weitz a dû souffrir. Elle seule et sa sœur Blanca sont restées vivantes des 84 membres de leur famille. Le livre *J'ai promis de raconter (I promised I would tell)* est documentaire et rien n'y est inventé, ni exagéré. En même temps, ce livre est une sorte de précepte invitant à connaître la

beauté de la vie, à louer la haute vocation de l'homme, à rejeter le racisme et à voir réalisée dans la nature humaine l'idée de la perfection divine. Dans la Préface de son livre, Sonia Weitz note que l'extermination des Arméniens, organisée par les Jeunes-Turcs, n'a malheureusement pas été reconnue en son temps et son impunité a conduit à l'Holocauste.

Franz Werfel, ce grand humaniste et ami exceptionnel du peuple arménien, décrit dans son remarquable roman *Les quarante jours de Moussa Dagh* comment les Turcs, avec leur instinct sauvage de nomades, exterminaient les Arméniens, dépeuplant la patrie de leurs ancêtres de ses habitants autochtones, s'appropriant tout ce qui avait été créé par leur honnête labeur.

Dans le livre de Sonia Weitz, il y a des parties poétiques, parce qu'elle est aussi écrivaine, et combien de lumière et de joie de vivre l'on trouve dans ses poésies, combien vibrants et naturels sont les manifestations de douleur humaine, de regrets, de désespoir, mais aussi d'espoir et de foi en la victoire de la justice. Bien que le livre de Sonia soit documentaire, on y trouve des personnages principaux et épisodiques qui semblent des héros de roman, tels son père, sa mère, Blanca, Norbert, Guisa et d'autres.

Que le personnage de Blanca est admirable ; elle aime Sonia, qui est sa cadette de plus de huit ans, plus que sa propre vie. Et c'est cette grande affection qui les aide à se sauver miraculeusement de la vallée de la mort pour retourner dans le monde des vivants.

Le Génocide des Arméniens et l'Holocauste ne doivent pas être oubliés. C'est précisément là l'exigence du livre de Sonia Weitz. Une immense littérature scientifique et artistique est consacrée au Génocide des Arméniens et à l'Holocauste. De nos jours aussi, ils sont analysés d'après les faits par Samantha Power, défenseur des droits de l'homme aux Etats-Unis, dans son livre *A problem from Hell (Un problème venu de l'enfer)* où le Génocide des Arméniens et l'Holocauste sont présentés en détail.

Le livre de Sonia Weitz est en même temps un beau requiem consacré aux millions de ses compatriotes tombés victimes du nazisme. Dans les notes impressionnantes de ce requiem on entend de l'espoir et de la foi en ce que l'humanité peut changer d'idée et comprendre un beau jour qu'il n'est pas permis d'exterminer des millions d'êtres raisonnables et innocents au nom du pouvoir, de la richesse et de la manie de la grandeur, comme on le fait pour les insectes nuisibles.

«Où est Dieu? Où est l'homme?» demande Sonia Weitz.

Prof. Aelita Dolukhanyan

УРОКИ СОНИ ВАЙЦ ДЛЯ ВЕЧНОСТИ

Книга Сони Вайц, пережившей Холокост, меня просто потрясла. И я решила донести это до армянского читателя. В Бостоне я встретила Сандру Шрайбер Вайц, симпатичную, жизнерадостную и преданную социальной справедливости дочь Сони Вайц. Когда мы встретились, она собиралась ехать на свою историческую Родину, в Израиль, где давно уже жила ее сестра с семьей. Я очень благодарна, что она дала свое согласие на то, чтобы я перевела книгу ее матери на армянский язык. В студенческие годы я читала «Дневник Анны Франк» и помню, что свою книгу передавала многим и почти заставляла их прочитать ее. В 1962 г. я побывала в лагере смерти Освенцима, без слов обличающий фашистов, которые в просвещенном XX веке заживо сжигали миллионы невинных людей и в первую очередь евреев. Человек чуть не теряет сознание, увидев горы детских туфель, очков и человеческих волос. Узнаешь, что над живыми людьми ставились медицинские опыты без наркоза, видишь сумки и лампы, изготовленные из человеческой кожи. И вот, через все это прошла Соня Вайц, из 84 членов семьи которой остались в живых только она и ее сестра Бланка. Книга под названием «Я обещала, что расскажу» (*I promised I would tell*) документальна; в ней ничего не придумано и не приувеличено. В то же время, эта книга является своего рода заветом, призывающим познать

красоту жизни, воспеть высокое призвание человека, отвергнуть расизм и увидеть осуществленной в человеке идею божественного совершенства. В предисловии своей книги Соня Вайц отмечает, что истребление армян, организованное Младотурками, к сожалению, не было признано своевременно, как геноцид, и его безнаказанность привела к Холокосту.

Великий гуманист и исключительный друг армянского народа Франц Верфель в своем прекрасном романе «Сорок дней Муса Дага» описывает, как турки истребляют армян, диким инстинктом кочевников, опустошая Родину их предков от коренных хозяев, присваивая все, что было создано их честным трудом.

В книге Сони есть поэтические части, потому что она и писательница, а сколько света и жизнерадостности в ее стихотворениях, как потрясающи и натуральны проявления человеческого горя, сожаления, отчаяния, а также надежды и веры в торжество справедливости. Хотя книга и документальна, у Сони в книге есть кажущиеся литературными главные и эпизодичные персонажи – её отец, мать, Бланка, Норберт, Гиза и другие.

Как прекрасен образ Бланки, больше собственной жизни любящей Соню, которая на восемь лет младше нее. И эта сильная любовь помогает им чудом спастись из долины смерти и попасть в мир живых.

Геноцид армян и Холокост не должны быть забыты. Именно в этом высшее требование книги Сони Вайц. Огром-

нейшая научная и художественная литература посвящена Геноциду армян и Холокосту. Они анализируются по фактам и в наши дни защитницей прав человека США Саманти Пауэр в книге *A problem from Hell* («

Геноцид армян и Холокост.

Книга Сони Вайц одновременно является прекрасным реквиемом, посвященным миллионам её соотечественников, ставших жертвами фашизма. В впечатляющих нотах этого реквиема звучат надежда и вера в то, что в один прекрасный день человечество может одуматься и понять, что ему придется ответить за преступления, и что нельзя ради власти, богатства и мании величия уничтожать массы разумных и невинных людей, как вредных насекомых.

«Где Бог? Где человек?» вопрошает Соня.

проф. Аэлита Долуханян

ՆԱԽԱԲԱՆ

«Այս փորձառությունը մեր հասկացությունից այն կողմ է: Հարցրեք ցանկացած վերապրածի»,- ասում է Էլի Վիզելը¹: «Ամեն վերապրած Ձեզ կասի, ով չի ապրել կատարվածի մեջ, երբեք չի իմանա այն: Եվ ով անցել է դրա միջով, չի բացատրի իր ապրածը ո՛չ իրականում, ո՛չ լիովին: Վերապրածի հիշողության և դրա արտացոլման միջև կա մի պատ, և դա չի կարող ճեղքվել: Անցյալը պատկանում է անցյալին, և վերապրածը չի կարող ճանաչել իրեն այն բառերում, որոնք կապում են իրեն անցյալի հետ»:

Հուլոքոստի վերապրածները, որոնք կիսում են իրենց պատմությունները, վկա են կանգնում, փոխանցում են բոցի մի կայծը, կիսում պատմության մի դրվագ և հիշում նրանց անունից, ով աղաչել է իրենց պատմել այս պատմությունը:

Սոնյա Վայցը կիսում է իր պատմությունը: Նա կյանքի է կոչում միլիոնավոր երեխաների, տղամարդկանց և կանանց, որոնք Եվրոպայում սպանվեցին, որովհետև նրանք հրեա էին: Նրա անձնական հուշերը և պոեզիան պատմություն են ստեղծում մայրերի, հայրերի, քույրերի, եղբայրների, որդիների ու դուստրերի համար: Երբ Սոնյան խոսում է, հավաքական հիշողությունը հալչում է, և ծնվում է հիշողություն ամեն ընտանիքի համար:

¹ Էլի Վիզել (1928-1916) – գրող, քաղաքական գործիչ, պրոֆեսոր, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1986թ.): Ծնվել է Ռուսիայում և վերապրել Օսվենցիմի ու Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարները:

Կա ինչ-որ հակասություն Սոնյայի հուշերում և Հոլոքոստի մյուս վերապրածների պատմություններում, որն ինձ խորապես շփոթեցնում է: Ինչպե՞ս է այդպիսի խավարի մեջ փայլում նրանց լույսը, այդքան ատելությունից գալիս նրանց սերը, այդքան անարգանքներից երևում նրանց արժանապատվությունը, և ինչպես է այդպիսի հուսահատությունից գալիս նրանց հույսը:

Սոնյան ուսուցիչ է: Նա հավատում է, որ իր աշակերտներն ու հասուն ուսանողները, ում նա ուսուցանում է, կարող են ցատկել դեպի Սոնյայի անցյալը և այնտեղից դուրս ելնել խիզախությամբ՝ հոգ տանելու իրենց հարևանների համար:

Նա նոր իմաստ է բերում այս ասացվածքին. «Ուսուցչի ազդեցությունը հավիտենական է»:

Սոնյան ընդունում է ամեն մի հրավեր՝ հանդիպելու Առերեսվենք պատմությանը ուսուցիչների հետ ու խոսելու Առերեսվենք պատմությանը լսարաններում, որովհետև նա լի է հույսերով ու գեղեցկությամբ:

Այս գիրքը մեկ այլ միջոց է նրա համար՝ կապի մեջ մտնելու երեխաների հետ, որոնք, նա վստահ է, նոր աշխարհ կստեղծեն բոլորի համար: Մենք շնորհակալ ենք Սոնյային իր տոկունության, նվիրվածության և բարեսրտության համար:

Մարգո Ստերն Ստրոմ
Գործադիր տնօրեն, Առերեսվենք պատմությանը,
Բրուկլայն, 1993

ԱՌԱՋԱԲԱՆ

Որպես Շոահի¹ (Shoah) վերապրած, ես գալիս եմ մի այլ աշխարհից, մի տիեզերքից, ուր ցեղասպանությունն իրականացվում է գիտական ճշգրտությամբ՝ իրականացնելով երեք հիմնական գաղափարներ՝

1. Դուք չեք կարող ապրել մեր մեջ որպես հրեա
2. Դուք չեք կարող ապրել մեր մեջ
3. Դուք չեք կարող ապրել...

Այո՛, մենք տանջվում ենք հասկանալու անհավատալին՝ մի ժամանակաշրջան, երբ մահվան գործարանները գործի էին դրվել մի ինքնակոչ «գերազգի» կողմից, որոնց հաջողություններն ընդլայնվում էին շատ այլ ժողովուրդների համակրողների և համագործակցողների կողմից:

Ես գալիս եմ խավարի դարից, երբ իմ ազգը, նույնիսկ մանուկները, դատապարտված էին խոշտանգումների և մահվան, միայն այն պատճառով, որ նրանք հրեաներ էին: Իհարկե, ոչ բոլոր գոհերն էին հրեաներ, սակայն բոլոր հրեաները գոհեր էին:

Մի բուռ վերապրածներ ջանում էին վկայել, ոմանք լռությամբ, որը թերևս ամենի պատշաճ վկայությունն է, և ոմանք խոսքով:

Այդպիսի ահռելի մեծածավալ ողբերգությունը ստեղծում է անսովոր մի առիթ ուսումնասիրելու, հարցաքննելու,

¹ Հոլոքոստը երբայերեն կոչվում է նաև Շոահ:

վիճելու և, հուսով ենք, սովորելու: Դասեր և զուգահեռներ...
Սովորել մարդկայնություն: Իրավ, ի՞նչ ենք սովորել:

Հայկական ջարդերը դեռ մինչև հիմա պատմականորեն «մոռացված ցեղասպանություն են»: Կամբոջիայի ողբերգությունը ևս մի ուրիշ սպի է մարդկության վրա: Այս ժողովուրդները և բազում ուրիշները, բոլորը եղել են նախապաշարմունքի և տգիտության զոհեր՝ զրկված ազատությունից և արժանապատվությունից: Ասվել է, թե Օսվենցիմից հետո ամեն ինչ հնարավոր է: Ուրեմն, Հոլոքոստը մարդկայնության վերացման «փորձնական ծրագիր էր»: Կամ պետք է ընկալենք այն որպես մի աննախադեպ իրադարձություն, բայց ոչ անխուսափելի, որի դասերը չե՞ն կարող, չպե՞տք է անտեսվեն:

Ցեղասպանությունը վերջնական հետևանքն է ատելության, նախապաշարմունքների, տգիտության և անտարբերության: Երբ մարդկանցից քավության նոխազ դարձնելու ու ստերեոտիպերի վերածելու դեմ չեն պայքարում, բոլորս դառնում ենք ստրկացած: Մեզնից նրանք, ովքեր վերապրել են այդ՝ այն այլ իրականությունը, ուր խավարը համարյա ամբողջական էր, պարտավոր ենք զգուշացնելու Ձեզ, որովհետև մենք գիտենք, որ նմանատիպ հանգամանքներում այն կարող է նորից պատահել ցանկացած տեղում, ցանկացած ժողովրդի հետ:

Մենք՝ Հոլոքոստի վերապրածներս, հավաստի կապակցող օղակն ենք այս աշխարհի և «այն այլ վայրի» միջև: Բայց ինչպե՞ս կարող է մարդ վկայություն տալ անասելիի մասին: Մեզնից ոմանք փորձում են և ձախողվում... և նորից փորձում, որովհետև մենք չենք համարձակվում լուռ մնալ:

Սովորական չափանիշները չեն վերաբերում Հոլոքոստին: Նույնիսկ լեզուն է անկարող, և այնպիսի բառեր, ինչպես քաղց, վախ, տաք, ցուրտ և ցավ, կորցնում են իրենց իմաստը: Իրականում Հոլոքոստը ոճիր է առանց լեզվի: Այնուամենայնիվ, մենք պարտավոր ենք խոսել նրա մասին և պետք է հիշենք սերնդեսերունդ, որովհետև եթե մենք հիշում ենք, ապա հիշողությունը (մենք հույս ունենք) կպաշտպանի կրկնելուց այդպիսի աներևակայելի չարիք:

Սոնյա Շրայբեր Վայց

ՆՎԻՐՎԱԾ Է YOM HA' SHOAH-ԻՆՑ²

Եկե՛ք, կատարե՛ք այս հսկա ցատկն ինձ հետ
դեպի այլ աշխարհ... այլ մի վայր,
ուր լեզուն անկարող է, և պատկերներն անհնարին
ժխտում են մարդու գիտակցությունը...
Մեռնում խենթության զոհասեղանին:

Եկե՛ք, կատարե՛ք այս հսկա ցատկն ինձ հետ
դեպի այլ աշխարհ... այլ մի վայր
և գնանք մարդկայնության մթագնումի հետքերով...
Ուր երեխաներին այրեցին,
մինչ մարդկությունը նայում էր,
և տիեզերքը դեռ պետք է իմանա՝ ինչու...
դեռ պետք է իմանա՝ ինչու:

² YOM HA' SHOAH-ն Հոլոքոստի զոհերի հիշատակի օրն է, որն Իսրայելում նշում են 1953-ից:

1 *ԼՈՒՅՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ¹* *1928-1939*

Երբ ես երեխա էի, աշխարհն ինձ համար ապահով տեղ էր: Հենց այդպես էլ պետք է լինի մատղաշ տղայի կամ աղջկա համար: Բայց 1939-ին, երբ ես ընդամենը տասնմեկ տարեկան էի, իմացա սարսափելի ճշմարտությունը:

Աշխարհն ապահով տեղ չէր, ո՛չ, եթե դու հրեա էիր և ապրում էիր Եվրոպայում: Իրականում, աշխարհը բնավ անվտանգ չէր: Այն վտանգավոր ու դաժան տեղ էր՝ բնակեցված ինձ, իմ ընտանիքին և իմ ազգին ուղղված կոտանքների ենթարկող ու ոչնչացնող մարդկանցով:

Իմ տունը Լեհաստանում էր՝ Եվրոպայի կենտրոնական մասում գտնվող երկրում: Ես ծնվել եմ այնտեղ 1928-ի օգոստոսին հին, գեղեցիկ Կրակով քաղաքում: Ծնողներս, քույրս և ես ապրում էինք մի պարզ, բայց հարմարավետ բնակարանում Կազիմիրեցի վրա՝ հրեական հատվածում: Մորս անունն էր Ադելա Ֆինդեր Շրայբեր: Ինչպես այդ ժամանակ մայրերի մեծամասնությունը, նա տնային տնտեսուհի էր՝

¹ Թարգմանության մեջ բնագրում կամ տողատակերում իմ կողմից բերվել են լեհերենից, անգլերենից, գերմաներենից, ֆրանսերենից կատարված որոշ բառերի և դարձվածքների բացատրություններ, երբեմն թարգմանության կողքին դրել եմ բնագրային տարբերակը: Ավելացրել եմ նաև մի շարք տեղեկատվական տողատակեր: - Ա.Ղ.:

նվիրված իր ամուսնու ու երեխաների խնամքին և բարեկեցությանը:

Հայրս՝ Յանեկ Շրայբերը, միջին դասակարգի գործարար էր: Նա Կրակովում ուներ փոքր խանութ, ուր վաճառվում էին կաշվի և կոշիկի պարագաներ: Մինչև այսօր կարող եմ հիշել, ես և իմ զարմիկները պահմտոցի էինք խաղում դարսված դաբադած կաշվի կտորների վրա: Շատ տարիներ անց, երբ ես տեղափոխվեցի Փիիբադի քաղաքը, որը Մասաչուսեթի կաշվեգործական քաղաքն է, կաշվի հոտն ասես ինձ հետապնդեր:

Քույրս՝ Բլանկան, ութ տարով ինձնից մեծ էր, և ես դեռ մանկության ժամանակ պաշտում էի նրան: Ես թմբկիկ փոքրիկ աղջիկ էի՝ ուղիղ մազերով, կճատ քթով, որը ես ստում էի: Երբ Բլանկան մոտ 14 տարեկան էր, սկսեց ժամադրվել Նորբերտի՝ մի գեղեցիկ երիտասարդի հետ, որն ապրում էր մեր փողոցի վրա՝ Կրակովի Վիսլա գետի մոտ:

Ամեն օր Նորբերտը Բլանկայի գրքերը հրեական միջնակարգ դպրոցից քարշ էր տալիս տուն: Հենց սկզբից ես սիրում էի Նորբերտին, թեև նա ծաղրում էր ինձ՝ որպես գլուխս ամպերի մեջ երագողի և կոչում էր Փայրեկ կամ կճատ քիթ: Ես հաճախ ուղեկցում էի Նորբերտին ու Բլանկային, երբ նրանք ձեռք ձեռքի զբոսնում էին Կրակովի գեղեցիկ հանրային զբոսայգում: Որքա՛ն համբերատար էին նրանք լսում իմ մանկական շաղակրատանքը և սրընթաց երևակայությունը:



*Սոնյայի տատիկը իր երեխաների հետ:
Սոնյայի մայրն առջևում է:*

Հայրս և նրա ընտանիքը քաղաքի մարդիկ էին՝ գեղեցիկ, զարգացած և նրբաճաշակ: Մորս ընտանիքը Կրակովը շրջապատող գեղեցիկ, լայնատարած գյուղաշխարհից էր: Ամեն ամառ մայրս գնացքով երկար ճանապարհ կտրելով՝ տանում էր քրոջս ու ինձ իր ընտանիքի ազարակը՝ Ռայսկոում: «Ռայ» լեհերեն նշանակում է «Դրախտ», և իրականում ազարակը դրախտային էր:

Այն լիքն էր ծաղկի պարտեզներով, պտղատու այգիներով և փարթամ մարգագետիններով: Այնտեղ կային նաև ձիեր, կովեր, հավեր և սագեր: Պապիկս վախճանվել էր, երբ տատիկս դեռ բավականին երիտասարդ էր եղել, այնպես որ տատիկս էր վարում ազարակի գործերը: Մենք բոլորս շատ հպարտ էինք մեր տատիկ Ռաքելով²:

Ամառներն ազարակը լցված էր ծիծաղով և ուրախությամբ: Շատ զարմիկներ ունենալով՝ ես միշտ շատ երեխաների հետ կարող էի խաղալ: Իմ քեռի Յուլիկը, որն ապրում էր հարևան գյուղում, այցելության էր գալիս պոնի նստած: Թե՞

² Անգլերեն՝ Rachael (Ռեյչել):

իշուկի վրա: Ինչևէ, ես հիշում եմ իմ հռիռոցը, որովհետև նրա ոտքերը քարշ էին գալիս հողոտ ճանապարհին:

Ամեն շաբաթվա վերջին հայրս գալիս էր, ու մենք գնում էինք զբոսախնջույթի: Մի անգամ ես ընկել էի կովի գոմաղբի մեջ, նույնիսկ մանրակրկիտ լողանալուց հետո ոչ ոք, հորիցս բացի, ինձ չէր մոտենում: Ամենից շատ հիշում եմ թարմ թխված հացի հոտը՝ վրան քսված տանը սարքած սալորի մուրաբայի և յուղալի կաթի հաճույքը, որ խմում էինք տատիկիս պատրաստած համեղ ձվածեղն ուտելուց հետո:

Տատիկս ուներ փոքր մի շուն՝ Օրի անունով: Նա բոլորովին ճերմակ էր, միայն աչքի շուրջն էր սև: Որքան էի սիրում նրան: Մի անգամ, երբ մեր արձակուրդի ավարտից հետո վերադառնում էինք տուն, Օրին ընկավ Կրակովի գնացքի հետևից՝ ինձ հետ լինելու համար: Բայց նրա ոտքերը շատ կարճ էին, և նա շուտով հոգնեց ու հրաժարվեց: Հայրս բնավ խնդիր չունեի սրա հետ և ասաց. «Քաղաքում շներ չկան: Չափազանց վտանգավոր է»:

Վտանգավոր էր ինձ համար շուն ունենալը, ես մտածեցի, կամ թե քաղաքը վտանգավոր վա՞յր էր շան համար: Իհարկե, քաղաքը կարող էր վտանգավոր տեղ լինել: Նույնիսկ որպես շատ փոքր երեխա ես դա գիտեի: 1930-ականներին Կրակովն ուներ մեծաքանակ հրեա բնակչություն: Քաղաքում ապրող 250.000 բնակիչներից մոտ 60.000-ը կամ մեկ քառորդը հրեաներ էին: Փաստորեն ողջ Լեհաստանում կալին շատ հրեաներ. նրանք այնտեղ էին ապրել տասներորդ դարից: Թեև այդ ժամանակ Լեհաստանում ապրում էին

ավելի քան երեք միլիոն հրեաներ, նրանց հազվադեպ էին հավասարի պես վերաբերվում իրենց լեհ հարևանները: Սա հատկապես ճշմարիտ էր դառնում, երբ Լեհաստանում դժվարություններ էին: Երբ լեհ մարդիկ տառապում էին, հրեաներն արյունաքամ էին լինում:

Իմ վաղ տարիներից ես հիշում եմ Կրակովի փողոցներում հրեաների ջարդեր, դաժան հարձակումներ: Հենց որ ես սովորեցի կարդալ, աչքիս առաջ էին գալիս հրեշավոր խոսքեր. «Մահ հրեաներին»՝ նկարված պատերին ու փողոցների նշաններին: Կարծում եմ՝ ես ընդամենը հինգ տարեկան էի, երբ առաջին անգամ սրտումս զգացի տարօրինակ ցավ և այրող արցունքներ աչքերումս, երբ լսեցի ծնողներիս փսփսոցը. «Նրանք նորից ծեծում են հրեաներին»:

Մի միջադեպ հատկապես վառ է: Հորս սափրում էին վարսավիրանոցում, երբ լսեց, թե ինչ-որ ուսանողներ իմ դպրոցի թաղամասում հարձակվում էին հրեաների վրա: Հայրս դուրս վազեց վարսավիրանոցից և շտապ եկավ իմ դպրոց՝ ուղիղ իմ դասարան: Նա դեռ աչքիս առաջ է: Նրա դեմքի կեսը սափրված էր, իսկ մյուս կեսը փրփուրով էր ծածկված: Նա այնքան զվարճալի տեսք ուներ, որ ես սկսեցի ծիծաղել ու ծիծաղել, և նա էլ միացավ իմ ծիծաղին: Չնայած նմանատիպ միջադեպերի՝ ես ինձ ապահով ու պաշտպանված էի զգում: Ես չէի հավատում, թե իրականում երբևէ որևէ չարիք կարող է պատահել ինձ կամ իմ ընտանիքին:

Բայց վատ բաներ կարող էին մեզ պատահել, և ծնողներս դա գիտեին: 1930-ականների սկզբին նրանք վախով

տեսել էին, թե ինչպես Ադոլֆ Հիտլերը և նրա նացիստ հետևորդները սանձազերծել են իրենց սարսափելի իշխանությունը Գերմանիայում՝ զրկելով Գերմանիայի հրեաներին իրենց իրավունքներից, ստորացնելով նրանց որպես մարդկային էակներ: Հետո՝ 1936-ին, ծնողներիս երկյուղը վերածվեց չհավատալու, երբ Հիտլերն անցավ Գերմանիայի սահմաններից այն կողմ և սկսեց մաս առ մաս նվաճել Եվրոպան: Ի՞նչ կպատահեր, երբ ազահ նացիստները աչք դնեին Լեհաստանի վրա:

Ես երևի յոթ կամ ութ տարեկան էի, երբ առաջին անգամ պատահաբար ուշ գիշերներին լսեցի ծնողներիս ահաբեկված խոսակցությունները: Հաճախ հորեղբայր Լեոնն ու մորաքույր Բերտան միանում էին նրանց: Կրկին ու կրկին չորս մեծահասակները քննարկում էին այն հարցը, թե ինչ է պետք անել: Պետք է մնա՞լ Լեհաստանում և աղոթել, որ աշխարհը կարողանա կանգնեցնել Հիտլերին: Թե՞ պետք է հեռանալ երկրից: Հարցը հարց էր բերում: Եթե նրանք հեռանային Լեհաստանից, ո՞ր պիտի գնային:

Ոչ մի տեղ Եվրոպայում ապահով չէր: Ամենահավանական վայրերը Եվրոպայից դուրս էին: Դրանցից մեկը Պաղեստինն էր՝ հրեաների հինավուրց հայրենիքը: Բայց հազարավոր տարիներ Պաղեստինը ղեկավարվել էր այլ ազգերի կողմից: Հիմա այն Բրիտանիայի ձեռքում էր:

Հայրս, որը սիոնիստ էր և հետևաբար գտնում էր, թե հրեաները պետք է վերադառնան իրենց նախնիների երկիր, պնդում էր հոգուտ Պաղեստինի: Բայց ինչպե՞ս կարող էր նա

լքել իր հորը, որը շատ հիվանդ էր: Ինչպե՞ս կարող էր այդպես վերցնել կնոջն ու երեխաներին ու նրանց հանել Լեհաստանից: Հիշում եմ, որ մայրս ասում էր, թե կյանքը Պաղեստինում շատ դժվար է: Բացի այդ, սարսափելի ճշմարտությունն այն էր, որ մենք չէինք կարող գնալ Պաղեստին, եթե նույնիսկ ընտրեինք այդ ճանապարհը: Ամեն անգամ հայրս նշում էր այնտեղ գնալը. հորեղբայրս նրան մեղմորեն սաստում էր. «Մի՛ գժվիր, Յանեկ», - ասում էր նա: Չնայած Բալֆուրի դեկլարացիային, բրիտանացիներն այլևս չէին աջակցում Պաղեստինում հրեաների պետականության հաստատմանը, իսկ արաբները չէին կամենում, որ նոր հրեաներ մտնեն իրենց երկիր:

Մյուս վայրը, որ մեր ընտանիքը կարող էր ընտրել, Միացյալ Նահանգներն էին: Բայց այստեղ էլ լուրջ խնդիր կար: Միացյալ Նահանգներն ունեին քանակային խիստ սահմանափակումներ: Այդ քանակային սահմանափակումները որոշում էին՝ ինչ քանակով մարդ որոշակի երկրներից ամեն տարի ինչ քանակով կարող էր մտնել Միացյալ Նահանգներ: 1930-ականներին ողջ թվային սահմանափակումը թույլատրում էր, որ տարեկան 154.000 մարդ մտնի երկիր: Այս թվաքանակից 84.000 պետք է լինեին բրիտանացիներ և իռլանդացիներ, ժողովուրդներ, որոնք վտանգի մեջ չէին: Թվային սահմանափակումը բոլորի համար Լեհաստանից՝ քրիստոնյա և հրեա, միայն մոտ 5000 էր, որ նշանակում էր քրիստոնյա լեհեր կարող էին լրացնել ամեն տարվա չափաքանակը: Մինչ ծնողներս անհանգստանում էին ու սպասում,

սարսափելի ճշմարտությունն ակնհայտ էր դառնում: Մենք համարվում էինք ավելորդ բնակչություն: Ոչ ոք աշխարհում մեզ չէր ուզում:

1939-ի ապրիլի 28-ին ծնողներիս վատթարագույն երկյուղն իրականացավ: Այդ օրը Հիտլերը կանգնեց Ռեյխստագի (Գերմանիայի պառլամենտ) առաջ և հայտարարեց իր նորագույն ծրագիրը: Գրավելով Հռենոս գետի տարածքները, Ավստրիան և Չեխոսլովակիան՝ հիմա հայտարարեց, թե լեհական միջանցքը՝ նեղ հողակտոր, որ ընկած է Գերմանիայի և Լեհաստանի միջև, իրավացիորեն պատկանում է Գերմանիային: Բոլորս գիտենք, թե լեհական միջանցքի հավակնությունը միայն սկիզբն էր: Դա միայն ժամանակի հարց էր, մինչև նա կներխուժեր Լեհաստան:

Քանզի լեհերը պատրաստվում էին կռվի, Նորբերտը հազարավոր ուրիշ երիտասարդ տղամարդկանց հետ զորակոչվեց բանակ: Այդ ամռան վերջին ընտանիքս և Նորբերտի ծնողները գնացին այցելելու նրան՝ Կրակովից դուրս գտնվող զինվորական ճամբարում: Ես հիշում եմ՝ շատ ձիեր կային: Հիմա ես հասկանում եմ, թե որքան զավեշտալի էր, որ լեհական բանակը հույս ուներ Հիտլերի ռազմական մեքենան կանգնեցնել ձի հեծած: Այդ ժամանակ, սակայն, ես միայն հիշում եմ, որ մտածում էի, թե պատերազմը կսկսվի: Այս խառը պահին մեկտեղ Բլանկան և Նորբերտը նշանվեցին, որ ամուսնանան:

Գերմանիայի ներխուժումը Լեհաստան սկսվեց 1939-ի սեպտեմբերի 1-ին: Ես ու հայրս խմորեղենի խանութ էինք

մտնում, երբ հանկարծ լսեցինք տագնապի ձայնը. շչակների ձայնը բոլորին զգուշացնում էր թաքնվել: Մենք գնացինք ամենամոտ ապաստանը՝ մտածելով, թե դա ևս մեկ ուսուցողական վարժություն է: Բայց, իհարկե, դա այդպես չէր: Երբ ճանապարհ ընկանք դեպի տուն, հասկացանք, որ Լեհաստանն ու Գերմանիան պատերազմի մեջ են: Գերմանացիներն անվանում էին իրենց ներխուժումը *Blitzkrieg*, որը նշանակում է կայծակնային պատերազմ: Պատմության մեջ նման հարձակում չէր եղել: Ալիք առ ալիք գերմանական ինքնաթիռները թռչում էին մեր գլխավերևում, մինչ հազարավոր տանկեր և բեռնատարներ անցնում էին լեհական սահմանը: Ամեն ոք Լեհաստանում աղոթում էր դրսի աշխարհից օգնություն ստանալու համար, բայց օգնություն չեկավ: Վեց օրում գերմանական տանկերը մտան Կրակով:

Բլանկան խիստ անհանգստանում էր Նորբերտի համար: Երբ ռումբերը թափվում էին պատերազմի առաջին օրերին, նա հրաժարվեց մեզ հետ գալ հակաօդային ապաստարան: Ի՞նչ կլիներ, եթե Նորբերտը լուր ուղարկեր, և ինքը տանը չլիներ այն ստանալու համար:

Նորբերտը հրաշքով տուն վերադարձավ: Մինչ պարտված լեհական բանակը նահանջում էր, Նորբերտը կարողացավ փախչել և թաքնվել ագարակում, ուր թաղեց զինվորական համազգեստն ու փաստաթղթերը: Նա նաև երախտագիտությամբ ագարակատիրոջ կնոջից ստացավ կանացի զգեստի տարբեր տեսակներ: Հետո նա ճանապարհվեց դեպի Կրակով՝ սողալով ստորգետնյա կոյուղու համակարգով: Նա

վերջապես տուն հասավ այնքան գարշահոտ ու սարսափելի տեսքով, որ սեփական մայրը չճանաչեց նրան: Մենք բոլորս կիսեցինք Բլանկայի ցնծությունը, երբ Նորբերտի եղբայր Մարսելը բերեց հոյակապ լուրը, թե Նորբերտն ապահով էր:

Նորբերտի տունդարձի լուրը միակ պայծառ կետն էր մռայլ, սև բնապատկերում: Ամեն օրը բերում էր նոր սարսափներ, հրեաներին իրենց իրավունքներից զրկող նոր հրամանագրեր: Ճշմարիտ է, որ լեհերը տառապել են գերմանական օկուպացիայից: Նրանք նույնպես դաժանորեն հալածվել են իրենց գերմանացի գերողներից: Բայց որպես հրեաներ մենք կրկնակի զոհ էինք, նախ նացիստներից, հետո բազում լեհ հարևաններից: Մենք դարձանք զոհերի զոհը:

Այնուամենայնիվ, կյանքը շարունակվում էր: Եվ չնայած մոլեգնած իելագարությանը՝ Բլանկան և Նորբերտը որոշեցին ամուսնանալ: Քանի որ երեք հրեաներից ավելի չէր թույլատրվում հավաքվել միասին, իմ սիրելի քրոջ թաքուն հարսանիքը տեղի ունեցավ նկուղում: Ամսաթիվն էր 1939-ի նոյեմբերի 12-ը, գերմանացիների՝ Կրակով մտնելուց ինը շաբաթ անց: Ես հիշում եմ, թե ինչպես էի բռնել հյուսված մում՝ ծիսակատարությունը լուսավորելու համար: Լսելով փողոցից եկող ձայները՝ ձեռքս դողում էր:

Բոլոր իմ ազգականներից և սիրելիներից միայն Բլանկան և Նորբերտն ինձ հետ փրկվեցին Ողջակիզումից (Holocaust): Այսպիսով, նրանց հարսանիքի հուշը դառնաքաղցր է՝ հույսի քաղցրությունը հուսահատության և դառնության այն իմացության մեջ, որ հույսի հիմք չկա:

1964-ին, ի նշանավորումն Նորբերտի և Բլանկայի ամուսնության քսանհինգամյակի, ես իմ զգացմունքները նրանց գաղտնի հարսանիքի մասին արտահայտեցի այս բառերով:

ԳԱՂՏՆԻ ՀԱՐՍԱՆԻՔ

...Եվ այսպես նրանք պսակվեցին գաղտնի վայրում,
Մի բուռ մարդիկ... խոնավ նկուղային սենյակ,
Ո՛չ նվագ, ո՛չ ծաղիկներ և ո՛չ գեղեցիկ ժանյակ՝
Հարսի ու փեսայի համար,
Ցանկալ մի փոքր ժամանակ, որ նրանք
կարող են վերցնել
Կրակված ու խավարի մեջ սուզված մի երկրում՝
Գիտակցելով, թե դաժան վաղը
Կգա շատ շուտով:
Այս անգամ նրանց հրաժեշտը
անդիմանալի մղձավանջ է,
Այնպիսի մղձավանջ, որն արթնանալուց
հետո չի ցրվում:
Յուրաքանչյուրը նրանցից դատապարտված է
անօգ հուսահատության
Մասնավոր դժոխքում:

Որպես լեհական բանակի սպա և հրեա՝ Նորբերտը կրկնակի թիրախ էր նացիստների համար: Այսպիսով, Նորբերտն ու Բլանկան սկսեցին իրենց ամուսնական կյանքը

գաղտնի, որ նշանակում էր՝ նրանք գնում էին մի ազգականի մոտից մյուսը, մի «ապահով» տնից՝ մյուսը: Սկզբում ծնողներս խրախուսում էին նրանց հեռանալ Լեհաստանից և ուղևորվել արևելք՝ դեպի Խորհրդային Միության ուղղությամբ, ուրիշ երիտասարդ հրեաների հետ: Ես սարսափով եմ հիշում, որ մայրս ու հայրս պատրաստվում էին ինձ՝ իրենց փոքրիկ Սոնեչկային (*Soneczka*) ուղարկել նրանց հետ, որովհետև «երեխաներին պետք է փրկել»: Բայց ի վերջո, Նորբերտն ու Բլանկան որոշեցին մնալ: Եվ այսպիսով, ես կարողացա մնալ ծնողներիս հետ: Իմ մեծագույն ցանկությունն էր միշտ լինել մորս և հորս, Բլանկայի և Նորբերտի հետ:

2 ԴԵՊՐԻՍԱՎԱՐ 1939-1941

Շուտով 1939-ը մոտեցավ ավարտին: Նոր տարին բերեց ավելի սահմանափակումներ, ավելի նվաստացումներ, ավելի շատ բռնություններ: Գերմանացիները թալանեցին մեր տները և խլեցին հրեաների սեփականությունն ու հիմնարկները (հաճախ պարզապես հանձնելով լեհերին): Ես հիշում եմ՝ մեր բնակարանը հանկարծակի դատարկվեց, որովհետև մենք ամեն ինչից պետք է հրաժարվեինք: Ես հիշում եմ տանը լսվող արձագանքը:

Ես կարող եմ վառ ձևով հիշել հորս պահվածքը, երբ լսեց մեր ընտանիքի առաջին գոհի՝ իմ քեռի Հենեկի մասին: Հենեկն ամուսնացած էր իմ հորաքույր Սոնյայի հետ, որը հորս կրտսեր քույրերից մեկն էր: Հորաքույր Սոնյան և քեռի Հենեկն ապրում էին մեզնից ոչ հեռու գտնվող Ռզեսժով (Rzeszów) քաղաքում: Հենեկը Ռզեսժովում հարուստ մարդ էր՝ իր համայնքի առաջնորդը:

Քեռի Հենեկը քաղաքում չէր, երբ գեստապոն (գերմանական գաղտնի ոստիկանություն) եկավ նրա հետևից: Նրա փոխարեն գեստապոն ձերբակալեց հորաքրոջս: Երբ Հենեկն իմացավ կնոջ ձերբակալման մասին, շտապ վերադարձավ նրան փրկելու: Նացիստներն ազատ արձակեցին Սոնյային, որ շտապեց տուն՝ իր միակ որդի Վիտեկի մոտ: (Երկուսն էլ

հետագայում սպանվեցին Ռեզեստովի գետտոյում): Գեստապոն հետո Հենեկին Ռեզեստովի մյուս առաջնորդների հետ ուղարկեց նոր շինված Օսվենցիմ, որը 1940-ին գործում էր որպես քաղաքական բանտարկյալների ճամբար: Մի քանի շաբաթ անց հորաքույր Սոնյան աճյունասափորում ստացավ իր ամուսնու մոխիրը: Հայրս հոնգուր-հոնգուր լաց եղավ: Սա իմ կյանքում առաջին անգամն էր, երբ տեսա հորս լաց լինելիս: Բայց դա վերջինը չէր:

1940-ի ընթացքում գերմանացի զինվորները հսկում էին փողոցները՝ զոհեր որոնելով: Երբեմն զոհերը գիտուն ռաբբիներ էին կամ հրեա գիտնականներ: Նացիստները սավիրում էին այդ բարեպաշտ ծեր մարդկանց, պոկում մորուքները և ստիպում նրանց բարձրաձայն աղոթել, պարել կամ կատարել տարբեր նվաստացուցիչ գործողություններ՝ նացիստների զվարճացման համար:

Հրեաներին սպանելը դարձել էր սովորական: Մեզ անմիջապես կսպանեին, եթե ձախ ձեռքին չկրեինք սպիտակ օղագոտի՝ Դավթի կապույտ աստղով: Ես հիշում եմ՝ ձեռագործեցի իմը: Ժամեր տևեց, բայց ես շատ հպարտ էի իմ ձեռքի գործով: Ուզում էի ձեռքիս այս օղագոտին հպարտության նշան լինի՝ թեկուզ միայն ինձ համար:

1940-ի ապրիլին գերմանացիները հայտարարեցին, թե մինչև նոյեմբերի 1-ը Կրակովը պետք է դառնա գերմանական քաղաք, որը պետք է ազատվի իր «հրեական տարրերից»: Հրեաները, որոնք ցանկանում էին մնալ քաղաքում, պետք է դիմեին հատուկ թույլտվություն ստանալու: Իշխանությունները տվեցին մոտ 30.000 *Ausweise*, որը նշանակում է թույլտվություն: Հրեաներից մշտապես պահանջվում էր այս փաստաթղթերը ներկայացնել ստուգման համար, և նրանց



*Հորեղբայր Հենեկի միակ որդին՝
Վիտեկը (կենտրոնում), սպանվեց
Ռզեստովի գետտոյում:*

անմիջապես արտաքսում էին, եթե դրանք նրանց մոտ չկային: Շատ մարդիկ կամովին լքեցին Կրակովը, որպեսզի խուսափեն ստիպողական արտաքսումից, մյուսները բռնի արտաքսվեցին: Կարծում եմ՝ մոտ այս ժամանակ էր, որ ծնողներս ինձ տարան մոտակա Տարնով, որտեղ ունեինք որոշ ազգականներ: Գուցե ծնողներս կարծում էին, թե փոքրիկ քաղաքում կլինեի ավելի ապահով:

Ժամանակի ընթացքում Տարնովում Կրակովից ուրիշ ազգականներ էլ միացան մեզ: Նրանց մեջ էր Լեոնը՝ հորս չորս եղբայրներից մեկը: Նա եկավ իր կին Բերտայի և իրենց

երկու աղջիկների՝ Բլանյայի և Նյուսյայի հետ, որոնք երկուսն էլ տարիքով ինձ մոտ էին: Քանի որ նրանք ապրում էին մեզ մոտ՝ Տարնովում, իմ զարմիկները և ես դարձանք շատ լավ ընկերներ: Մենք բոլորս մտահոգված էինք հորեղբայր Լեոնի համար, որը հիվանդ էր թոքախտով: Նրա մշտական հազը կարծես դանակ էր՝ խրված մեր սրտերում, որովհետև մենք ոչնչով չէինք կարող նրան օգնել:

Այս ժամանակ նացիստները հավաքում էին հրեաներին և նրանց գնդակահարում հանրային հրապարակում: Արյունը գետի նման հոսում էր Լեհաստանի մեծ ու փոքր քաղաքների և գյուղերի փողոցներում: Տարնովը բացառություն չէր: Իմ ընտանիքի մեծ մասը սպանվեց այնտեղ, ներառյալ Լեոնն ու իր ընտանիքը և իմ սիրելի տատիկ Ռաքելը:

Իմ ընտանիքի անդամներից մեկին հանրային հրապարակում մասնատեցին:

Հորս կրտսեր քրոջ՝ Բրոնյայի պատմությունը հատկապես ճնշող է: Բրոնյան գեղեցիկ աղջիկ էր, միայն մեկ տարով մեծ Բլանկայից: Նա ամուսնացած էր Վիլելի՝ գեղեցիկ, հանդուգն երիտասարդի հետ: Ինչ-որ ձևով նրանք կարողացել էին ձեռք բերել կեղծ «արիական» փաստաթղթեր: Այդ փաստաթղթերով նրանք ամեն ձևով հակադրվում էին նացիստներին: Նրանք Դավթի պարտադիր աստղը չէին կրում: Եվ նրանք հեծանիվներով ուրախ շրջում էին Տարնովում՝ չենթարկվելով հրեաներին հեծանիվ ունենալն արգելող օրենքին: Վերջ ի վերջո մեկը նրանց մատնեց: Բրոնյային և Վիլելին կրակեցին ու սպանեցին փողոցում:

Մեկ այլ ողբերգական հուշ կապվում է Տարնովում ունեցած իմ ընկերներից մեկի հետ: Նրա անունը Միրիամ էր: Մի օր գերմանացիները նրան փողոցում կանգնեցրին: Նրանք հարվածեցին նրա բերանին՝ ջարդելով բոլոր ատամները: Ես հիշում եմ, թե ինչպես էի ակնապիշ սարսափով նայում նրա այլանդակված դեմքին: Դրանից հետո նա անհետացավ, և ես այլևս նրան չտեսա: Ամիսներ, գուցե տարիներ դրանից հետո ես մղձավանջներ էի տեսնում. իմ բոլոր ատամները ջարդվում էին:

Իրականում ես մղձավանջում էի ապրում: Միաժամանակ միայն տասներկու տարեկան էի և ունեի աղջնակի հույսեր ու երազանքներ: Այսպիսով, այս բոլոր պատմությունների մեջ ես առաջին անգամ սիրահարվեցի: Նա կաթնավաճառի որդին էր, և ես խենթանում էի նրա համար: Նա կիրթան ուներ: Մտքումս կա հատուկ մի տեսարան, ուր նա իմ պատուհանի տակ կիրթառ է նվագում:

Ես աշխարհին նայում էի նաև մանկան տեսանկյունից: Ես խորապես փոթորկվել և շփոթվել էի սեփական մորս խառնվածությունից ու տառապանքից, երբ իմ Ռեաքել տասիկը սպանվեց: Վերջ ի վերջո կարծում էի, որ *մամուսյան* (լեհերեն մայրիկ բառի փաղաքուշ ձևը) հասուն է, և ես չէի կարծում, թե հասուն մարդիկ ունեին իրենց ծնողների կարիքը: Բայց ես ընդամենը տասներկու տարեկան էի: Եվ ես հաստատ ունեի իմ ծնողների կարիքը: Ես չափազանց շատ ունեի նրանց կարիքը: Անկախ նրանից, թե ինչ էր կատարվում իմ շրջապատում, քանի ծնողներս հետս էին, ես ինձ ապահով էի զգում:

1941-ի մարտին մենք վերադարձանք Կրակով: Մեր վերադարձի առիթով տոնելու պատճառ չկար, որովհետև մեզ թույլ չտվեցին վերադառնալ մեր տուն: Փոխարենը մայրս, հայրս և ես հազարավոր ուրիշ հրեաների հետ քշվել էինք Կրակովի գետտոն: Բլանկան և Նորբերտն էլ եկան: Գուցե նրանք կարծում էին, թե ավելի ապահով կլինի գետտոյի ներսում, քան թե դրսում թաքնված:

1941-ի մարտի 29-ին գետտոն փակվեց պատերի ներսում, իսկ պատերի վերևում փշալարեր էին: Գերմանացի զինվորները հսկում էին դարպասները, որպեսզի ոչ մի հրեա չկարողանա դուրս գալ առանց հատուկ թույլտվության: Դուրս տանող դարպասները միշտ փակ էին, բայց ներս տանող դարպասները շարունակում էին միշտ բաց մնալ: Եկող ամիսներին գերմանացիները հարևան համայնքներից հազարավոր հրեաներ քշեցին գետտո: Գետտոն դարձավ լեփլեցուն, այնպես որ մի ժամանակ ծնողներս և ես կիսում էինք մի սենյակը երեք ուրիշ ընտանիքների հետ: Առանձնության համար մենք առաստաղից ծածկոցներ էինք կանխել: Բայց ոչինչ չէր կարող հեռու պահել թշվառության հնչյուններից:

Այս բանտի պատերի ներսում մեր օրերը լի էին քաղցով, կեղտով, հիվանդությամբ: Մեր գիշերները լի էին անհայտության սարսափով: Ցանկացած պահ կարող էր բերել ավելի վատ ճակատագիր, քան գետտոյում ապրելը, և այդ ճակատագիրն անհայտ ուղղությամբ գնալն էր:

Այս ստիպողական գնալը՝ ճանաչված որպես «վերաբնակեցման տեղափոխություն», մասն էր այն մեծ ստի, որ

ասում էին նացիստները: «Մենք կարիք ունենք ձեր հմտությանը, ձեր աշխատանքը կարևոր է: Ձեզ կկերակրեն և կվերամիավորեն Ձեր ընտանիքների հետ»: Մենք լսում էինք սուտը, բայց մեր սրտի խորքում չէինք հավատում դրան: Ինչոր ձևով մենք գիտեինք, որ մեզնից խլվածները ուղարկվում էին դեպի իրենց մահը:

Հիսունն անց ցանկացած մարդու, ցանկացած երեխայի (տասնչորսից ցածր) և հիվանդներին (նրանք, որոնք ֆիզիկապես ու մտավոր հաշմանդամ էին) նրանք առաջինն էին տանում: Քանզի երեխաների կախարդական տարիքը տասնչորսն էր, իմ ծնողները կարողացան ձեռք բերել փաստաթղթեր, որ հաստատում էին, թե ես տասնչորս եմ:

Նացիստները հավաքում էին նրանց, որոնց «ընտրել էին» և նախրի նման լցնում էին բեռնատար վագոնները: Մեզնից մեծ մասն այլևս երբեք չտեսավ այդ մարդկանց: Այս բանաստեղծության բառերն արտահայտում են, թե ես ինչ էի զգում այդ ժամանակ:

ԼՈՒՌ ԱՐՉԱԳԱՆՔ
Աչքերս մեկ հառեցի
հավերժության վրա,
ականջներս մեկ լսեցին
լուռ արձագանքն իշխող,
առանց կարեկցանքի...
սիրո... մարդկության...
որ բթացնի ցավը:

3 *ԳԵՏՏՈՆ* 1941-1943

1941-ի մարտին, երբ մեր ընտանիքը բռնությամբ քշվեց գետտո, ես տասներկու և կես տարեկան էի: Ես այնտեղ մնացի երկու տարի: Այդ տարիների ընթացքում ես իմ մտքերը գրառեցի իմ օրագրում: Ես միշտ սիրել եմ գրելը և գետտոյում հասկացա, որ գրելն օգնում էր ինձ մի փոքր թեթևորեն հաղթահարել իմ շրջապատի սարսափները: Ես հատկապես սիրում էի բանաստեղծություն գրել, այսպիսով իմ օրագրում նույնպես ներառեցի բանաստեղծություններ:



*Սոնյայի մայրը՝ Ադելա Ֆինդեր
Շրայբերը*

Չնայած իմ օրագիրը չփրկվեց պատերազմից, գետտոյում ապրածի և գրածի հուշերը չխամրեցին: Այսպիսով, 1946-ին՝ պատերազմի ավարտից մեկ տարի հետո, ես նստեցի գրելու գետտոյում իմ կյանքի մասին: Իրականում ես փորձեցի հիշողությունից վերականգնել օրագրիս նախնական էջերը: Հետևյալ էջերը պարունակում են «վերականգնված օրագրի» անգլերեն թարգմանությունը, որը ես գրել եմ 1946-ին:

4 marca 1943 roku zamknięto nas
do 1 obozie koncentracyjnym (K-2)
Płaszów.

Trudno się było przygotować do
wysokiej prędkości, do obłąkanego, zimnego
baraku, do prania i kąpieli, do projektantów
i placów... trudno było stać godziwie
na obłąkanym APPL-placu, o trójkątnej
formie "żuńce" liczącej dwa razy "Pauze"...

...Pamiętam zimą dziesięć kwarantann...
(Ważny Lager trzeba było dognieć kwarantannami;
Hito Kacimura, mój wódz i żona)..
Najbardziej racjonalnym problemem było
na APPL-placu i wytało nas do
magazynu po magazynie do pracy...

Էջ Մոնյայի վերականգնված օրագրից

Օրագիրը

1941 ապրիլ

Գետոռ մտնելուց մեկ ամիս անց հրաման եկավ, որ ես պետք է գնամ աշխատելու: Մեկ օր ուրիշ երիտասարդների և ինձ խցկեցին մի բեռնատար ավտոմեքենա և դուրս տարան գետտոյից՝ գերմանացիների զորանոցների զուգարանները մաքրելու համար: Գիշերը, երբ վերադարձանք գետոռ, զինվորներն իրենց զվարճանքի համար ստիպեցին մեզ երգել «Տակառները դուրս գլորեք» („Roll Out the Barrel“): Նրանք ծիծաղում էին մեզ պատճառած նվաստացումից, որ այդպիսի զվարճալի մեղեդի պիտի երգենք, ամբողջ օրը իրենց կեղտը մաքրելուց հետո: Նրանք նույնպես ծիծաղում էին, որովհետև մենք երգում էինք լեհերեն, մի լեզու, որ գերմանացիներն ավելի ստորակարգ էին համարում:

Մայրս լալիս էր, որ ես պետք է այս աշխատանքն անեի, նա սաստիկ լալիս էր, չնայած ջանում էր այդ թաքցնել: Հայրս ծխում էր մի գլանակ մյուսի հետևից: Նա ինձ նայում էր սիրով ու խղճահարությամբ: Նա մեղմ շշնջում էր. «Սա պատերազմ է: Սա սարսափելի պատերազմ է»: Ես կարծում եմ՝ նա իրեն մեղավոր էր զգում: Խեղճ մարդը գիտեր, որ անգամ գետտոյում, եթե դու ունես ավել դրամ կամ ինչ-որ արժեքավոր բան, հաճախ հնարավոր էր գտնել ուժեղ մեկին երեխայիդ փոխարեն աշխատելու համար: Եվ այսպիսով, եթե ինքը փող ունենար, հնարավոր էր, որ նա գտներ աշխատավոր, որ փոխարիներ իր սիրելի աղջկան: Բայց մեր փողը հազիվ էր

բավարարում ուտելիք գտնելու համար, և արժեքավոր իրեր այլևս չէին մնացել: Աշխատանքի գնալիս ես կարող էի տեսնել հորս անօգնական լինելը:

1941 նոյեմբեր

Մի երեկո ես հոգնած ու քաղցած վերադարձա տուն և դռան մոտ տեսա հորս: Նա շատ անհանգիստ էր երևում և շատ գունատ էր: Նա խնդրեց ինձ լուռ մնալ, քանի որ մայրս հիվանդ էր: «Հիվանդ: Ինչպե՞ս կարող էր այդ պատահել», - հարցրի ես: Ես երբեք մորս հիվանդ չէի տեսել: Թույլ լիներ, թե ոչ, մայրս միշտ կժպտար, կգրկեր ինձ և կասեր ինձ, թե ամեն ինչ կշտկվի, որ իրավիճակը կլավանա, որ մենք շուտով կգնանք տուն, որ ուրբաթ երեկոյան սպիտակ սփռոցի վրա նորից մոմեր կլինեն, և ամեն ինչ լավ կլինի: Անաղմուկ ես մտա մութ սենյակը: Նա քնած էր: Ես վառեցի թույլ լույսը և մոտեցա: Նրա դեմքն այրվում էր, և աչքերը պղտոր էին: «Մամուսյու», - շշնջացի ես: Ես ծունկի իջա նրա մահճակալի մոտ և դիպա ճակատին: Նա հեռավոր հայացքով աչքերը հանեց ինձ: «Տե՛ր Աստված, նա ինձ չի ճանաչում»:

Ավելի ուշ՝ այդ գիշեր, նրան տարան գետտոյի հիվանդանոցը: Նա շատ հիվանդ էր՝ տառապելով մինիսգիտից: Քանի որ հիվանդանոցը վարակիչ հիվանդների համար էր, ոչ մեկին մեզնից չէր թույլատրվում նրան այցելել: Բայց ինչ-որ ձևով Բլանկան կարողացավ ավել ուտելիք ձեռք բերել և գաղտնի հասցնել մորս: Ես ու հայրս անվերջ հետ ու առաջ էինք անում հիվանդանոցի առաջ: Շաբաթներն անցնում էին

մշտական վախով, թե հիվանդանոցը կարող է տարհանվել, կամ մինչև մորս առողջանալը հիվանդներին կարող էին մահապատժի ենթարկել:

Վերջապես մի օր մայրս վերմակով փաթաթված եկավ պատուհանի մոտ և ձեռքով արեց մեզ: Օ՛հ, որքան լավ էր նրան տեսնելը: Շուտով նա տուն եկավ, գունատ և սկար: Բլանկան շարունակում էր ապօրինի և ինչ-որ հնարավոր ձևով մեր մոր համար լրացուցիչ ուտելիք գտնել:

1942

1942-ի գարունը եկավ, մենք համարյա գումար չունեինք: Այսպիսով, մի օր վերցրի մեր վերջին փողը և գնացի հացի փոփց հաց գնելու: Ես երկար նայեցի հրաշալի բուրավետ թարմ հացերին: Ես նայեցի հացթուխին և շնչակտուր ու հանկարծակի ասացի մտքումս երկար կրկնած հարցը. «Կվստահե՞ք ինձ տալ 10 հաց ամեն մեկը ինը զլոտիով, և ես վաղն առավոտյան փողը կբերեմ»: Պատասխանը եղավ արագ՝ «Լավ»:

Հավատս չէր գալիս: Այնքան հպարտ էի ինքս ինձնով: Ես վերցրի տասը հացերը և վազեցի մի շենքից մյուսը, մի բնակարանից մյուսը՝ վաճառելով ամեն հացը տասը զլոտիով: Պարզ մաթեմատիկա: Ամեն օր ես կարող էի բավարար փող վաստակել իմ ընտանիքի համար մի հաց գնելու: Երբ առավոտը եկավ, ես սլացա փուռը և գնեցի հացը: Մի քիչ ամաչելով, բայց երջանիկ, ես տվեցի հացը իմ խորապես զարմացած մորը: Դժբախտաբար այս նախաձեռնությունը երկար

չտևեց: Գերմանացիներից հրամաններ եկան փակելու գետտոյի հացի փոերը:

Ինչևէ, մեզ փող էր հարկավոր: Այսպիսով *մամուսյան* մշակեց հետևյալ պլանը: Մեր ապրած տան հետևում կար պարտեզ՝ երբեմնի գեղեցիկ, բայց հիմա շագանակագույն և լի մոլախոտերով: Այդ փոքրիկ հետնաբակում մամուսյան հիմնեց մանկանոց այն երեխաների համար, որոնց կյանքը ժամանակավորապես խնայված էր, բայց որոնց ծնողներին ամեն օր քշում էին ստրկական աշխատանքի:

Այդ ծնողներից շատերն ուրախությամբ վճարում էին ինչ կարող էին՝ իրենց երեխաներին մեր խնամքին հանձնելու համար: Դեռ մուօ էր, երբ առավոտներն արթնանում էի և սլանում գետտոյի մի շենքից մյուսը՝ հավաքելով քնաթաթախ երեխաներին՝ մեր բակը բերելու համար: Մինչ մայրս եփում էր ու լվացք անում, ես զվարճացնում էի երեխաներին իրենց սիրելի հեքիաթներով: Իմ երևակայությունն անսպառ էր, և արևի լույսի տակ ես դիտում էի նրանց երջանիկ ժպտացող դեմքերը՝ լի զարմանքով և հույսով:

Հաճախ, երբ երեխաները ննջում էին, ես նստում էի այդ չորացած պարտեզի ծառի ստվերում: Վայելելով հանգստի թանկարժեք քիչ պահերը՝ ես լրացնում էի օրագրիս էջերը՝ իմ մտքերով և զգացմունքներով: Ես գրեցի, որ ես անսահման կամենում էի լինել լավ ու բարի և օգտակար իմ *մամուսյային*: Ես նույնպես գրեցի կյանքի մասին, թե որքան թանկ էր այն, և որքան էի ուզում, որ սարսափելի պատերազմն ավարտվի: Իմ մանկական ձեռագրով ես աղոթքներ էի

գրում՝ աղաչելով Աստծուց օգնություն: Ինչ-որ ձևով, ես հավատում էի, թե նա կլսի իմ աղոթքները և կպատասխանի դրանց: Ես հավատում էի, թե ապագան կլինի ավելի լավը: Այդ երանավետ, օրհնված խաղաղ պահերին ես բանաստեղծություններ էի գրում:

ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ

...խաղաղ պահ,
որ բուժվի հոգիս,
որ հանգստացնի
սրտիս տրոփյունը
...խաղաղ ժամանակ,
որ ինձ ողջ դարձնի
և հանգստանալու հնարավորություն տա:

Հունիս 1942

Գետտոյում գտնվելու երկրորդ տարվա հունիսյան մի օր մայրս հիվանդացավ: Այս անգամ նա հրաժարվեց հիվանդանոց գնալ: Նա չէր ուզում ժամանակ վատնել՝ լինելով մեզնից բաժանված: Թերևս նա գիտեր, որ մեր միասնական ժամանակը կարող էր կտրվել ցանկացած օր: Ծերերի, հիվանդների ու երիտասարդների փոխադրող բեռնատար վագոնները մշտապես գնում էին, և այդ մարդկանցից երբեք լուր չէր լինում:

Ամեն օր ես և հայրս մորս դուրս էինք հանում պառկելաթախտի վրա: Այստեղ՝ իմ ծառի ստվերում, ասես նա իրեն

ավելի հանգիստ էր զգում: Հաճախ հայրս նրան նայում էր հեռվից: Հայրս թվում էր այնքան տխուր ու ամոթխած՝ իր անօգնական լինելու պատճառով: Միրտս ցավում էր նրա համար, բայց ես գիտեի, որ չեմ կարող մոտենալ և քննարկել իր զգացմունքները: Նա գուցե առավել խղճալի էր, քան մնացածներս:

Դանդաղորեն մորս առողջությունը վերականգնվում էր: Նորից, ինձ թվում էր, մեր փոքրիկ բույնը փրկված: Ես սկսեցի սովորել մի «ընդհատակյա» դպրոցում, ուր հանդիպեցի ուրիշ երիտասարդների: Կրթությունը, իհարկե, արգելված էր գետտոյում, բայց այնտեղ կար նվիրյալ հրեա ուսուցիչների մի խումբ, որը նախագծեց մեզ համար դասերի պլան՝ տալով մեր երիտասարդ կյանքերին որոշ չափով կազմակերպվածություն և չենթարկվելու պայքարի զգացում:

Իմ նոր դպրոցական ընկերները հրավիրեցին ինձ «պիկնիկի», և ես սովորեցի պարել: Ես երկար զբոսանքի էի գնում իմ ընկերուհի Ռենայի հետ, որը սիրահարված էր Բուբեկին, մինչ ես խենթանում էի Երժիկի համար: Ես ու Ռենան միմյանց հասկանում էինք: Ի վերջո երկուսս էլ դեռահասներ էինք:

Ծնողներս նույնպես պնդեցին, որ ինչ-որ օգտակար արհեստ սովորեմ: Այսպիսով, ես դերձակի օգնական էի: Այդ վարպետությունն օգնեց ինձ աշխատանք գտնել Մադրիի կոչվող գործարանում: Քանզի որպես դերձակուհի ես անհրաժեշտ էի գերմանացիներին, ես կարողացա խուսափել վաղ արտաքսումից:

Մենք գետտոյում ունեինք շատ ակտիվ դիմադրական շարժում: Իմիջիայլոց, իմ ընկերներից շատերն այդ շարժմանն էին մասնակցում: Մի պահ ես պատրաստվում էի թողնել գետտոն ու միանալ ընդհատակին՝ նացիստների դեմ պայքարելու համար: Բայց քանի որ լեհ պարտիզանները հազվադեպ էին իրենց միավորումներում ընդունում հրեա տղամարդկանց և կանանց, հրեա մարտիկները հսկայական խոչընդոտներ պետք է հաղթահարեին: Մենք պետք է փոխեինք մեր արտաքինն այնպես, որ լեհ երևայինք:

Իմ կճատ քիթը, որն այդքան շատ ատել էի, իմ օգտին էր: Բայց քանի որ լեհերի մեծ մասն ուներ բաց գույնի մաշկ և շիկահեր էր, իմ թուխ մազերը խնդիր էին: Այսպիսով, մայրս մազերս շեկ ներկեց: Հետո ինչ-որ ձևով նա և հայրս կարողացան ձեռք բերել անհրաժեշտ կեղծ թղթերը, և ես պատրաստ էի գնալու:

Դժբախտաբար երիտասարդների այն խումբը, որ մեկնեց ինձնից առաջ, մատնվեց լեհերի՝ նացիստների հետ համագործակցողների կողմից: Լեհերը մատնեցին նրանց գետտապոյին՝ շաքարի մի խդճուկ տոպրակի պարզևատրման դիմաց: Գետտապոն նրանց բոլորին գնդակահարեց: Երբ ծնողներս լսեցին այս բռնության մասին, որոշեցին, որ ես պետք է մնամ գետտոյում:

Սակայն ոչ բոլոր լեհերն էին մեզ դեմ դուրս եկել: Օրինակ, մի լեհ ընտանիքի անդամներ իրենց կյանքը վտանգի ենթարկեցին՝ թաքցնելով Յաժային՝ Նորբերտի զարմուհուն:

Նրանց խիզախության արդյունքում Յաժան կենդանի մնաց պատերազմի ժամանակ:

Միաժամանակ կյանքը գետտոյում դառնում էր «շիկացած»: «Վերաբնակեցման» ցուցակներն անընդհատ երկարում էին: Առանց մեր իմացության մենք դատապարտված էինք մահվան, բայց նախ նացիստները մեզ ենթարկում էին անտանելի ֆիզիկական ու մտավոր խոշտանգումների:

Հոկտեմբեր 1942

Անխուսափելիորեն ամառը վերածվեց աշնան: Այդ ժամանակ մանկանոցը, որ մենք վարում էինք, այլևս չէր գործում: Նացիստները բոլոր երեխաներին վերցրել էին վերաբնակեցման համար: Հոկտեմբերյան մի օր ես, նստած իմ ծառի տակ, գրում էի, երբ լսեցի մորս ձայնը. «Սոնյա՛, *Sloneczko!*» (Նա հաճախ էր ինձ կոչում «Արևիկ»): Պատուհանի մեջ ես տեսնում էի նրա ուրվագիծը. «Նե՛րս եկ, բալիկս: Դբսում ցրտում է»:

Մի պահ կանգնեցի դռան մոտ և թափանցող հայացքով նայեցի այն կեղտոտ վերմակին, որը բաժանում էր մի ընտանիքը մյուսից: Հետո հայացքս տեղափոխվեց մորս վրա: Ես նայեցի նրան, կարծես թե նրան առաջին անգամ էի տեսնում: Այն, ինչ տեսա, ցնցող էր ու անակնկալ: Ակնհայտորեն ես երկար ժամանակ նրան մոտիկից չէի նայել: Հանկարծակի հասկացա, որ նրա մազերը ճերմակել են: Նրա ժպիտից պակասում էին ատամներ: Նրա ձեռքերը ճաքճքած էին ու անխնամ, ու նրա աչքերը շատ-շատ տխուր էին:

Այդ երեկո ես երկար նստեցի պատուհանի մոտ՝ դիտելով արնակարմիր մայրամուտը: Աստղերը շողում էին, ինչպես մաքուր ոսկին: Լուսինը բարձրացավ՝ ծաղրելով իմ երազանքներն ու հույսերը: Ես փակեցի աչքերս և արցունքների միջից հիշեցի մանկությունս: Թվում էր, թե հարյուր տարի առաջ էր, որ ես դպրոց էի գնում, խաղում էի ուրիշ երեխաների հետ և անհամբեր սպասում էի գարնան գալուն: Որքան լավն էր եղել իմ կյանքը: Սակայն նույնիսկ այդ ժամանակ վտանգի նշաններ էին եղել իմ շուրջը:

ԻՆՉՊԵՍ ԿԻՄԱՆԱՅԻՆՔ

Ինչպես կիմանայինք,

Ինչ վտանգի նշաններ գուշակեինք,

Մենք դիտում էինք ամպերը

Եվ լսում մոտակա որոտը,

Մինչ կայծակը խփեց

Եվ ցրեց խավարը,

Բայց դա անցյալում էր:

Ես խորասուզված էի անցյալի մտածումների մեջ և երևակայորեն պատկերացնում էի ապագան, երբ զգացի մազերս շոյող մորս ձեռքը: Այդ պահին սենյակը շատ ցրտել էր: Մենք անկողին մտանք միմյանց տաքացնելու: Մենք լուռ հանգստացանք երկար ժամանակ այդ մութ կեղտոտ սենյակում: Բառերի կարիք չկար: Ես գիտեի, որ մայրս ինձ սիրում էր, առավել քան իր սեփական կյանքը: Իհարկե նա Բլանկա-

յին սիրում էր նույնչափ: Նա Նորբերտին էլ էր սիրում՝ ասես հարազատ որդու: Բայց Բլանկան և Նորբերտը իրար ունեին: Իսկ ե՞ս: Մորս աչքին ես դեռ երեխա էի, և նա խիստ մտահոգված էր, թե ինձ ինչ կպատահի:

Իրականում ես միայն սովորական դուստր էի: Ես համոզված էի, որ շատ բաներ կարող էի ավելի լավ արած լինել: Ես կարող էի ավելի լսող եղած լինել: Ես կարող էի ինձ պահել ավելի կանացի: Բայց ես մորս խորապես սիրում էի: Այդ գիշեր ես հասկացա, թե «մայր» բառն ինձ համար ինչ էր նշանակում:

Ու այդ գիշեր ինձ արթնացրեց հորս ոտնաձայնը: Նա շատ հուզված էր: Նա արտասանեց միայն երկու բառ. «Նորից տեղահանում»: Ես կիսաքուն նստեցի մահճակալին և նայեցի նրան. «Ո՞ւմ են տանում այս անգամ», - հարցրի ես: «Պառկի՛ր, բալե՛ս», - մորս ձայնը աներևակայելի հանգիստ էր: «Աստծու կամքն է»:

Ես սեղմվեցի մորս: Մենք ջերմ էինք ու հանգիստ: Ես կարող էի զգալ նրա սրտի զարկը: Ես ամբողջ ուժով սեղմվեցի նրան: Ես ուզում էի նրան զգալ իմ կողքին: Ես կարիք ունեի մտերմության: Ես ուզում էի մորս միայն ինձ համար: Ես վախենում էի, թե սա կարող էր լինել մեր վերջին գրկախառնությունը, մոտիկ լինելու մեր վերջին հնարավորությունը: Ես չէի համարձակվում շարժվել: Բայց աչքերս լայն բաց էին՝ հառած կեղտոտ, գորշ առաստաղին: Նրա բազուկը կրծքավանդակիս վրա էր, և ես լսում էի մորս կարճ, կտրատվող շնչառությունը:

Մենք սպասեցինք: Ամեն պահը թվում էր հավիտենականություն: Ինչ-որ տեղ ժամացույցը խփեց կեսգիշեր: Հանկարծակի լսվեցին ծանր քայլեր և սարսափով ակնկալած դռան թակոց: Համազգեստով երկու տղամարդ ուժով հրեցին դուռը և ներս մտան սենյակ: «Աղելա Շրայբեր», - ասաց մի ձայն: «Հագնվե՛ք: Անմիջապե՛ս»: Ես սառեցի: Մայրս նստեց մահճակալի ծայրին և սկսեց դանդաղ հագնել գուլպաներն ու կոշիկները: Նա գլխաշորով կապեց գլուխը: «Տաք հագնվի՛ր», - շարունակեց ձայնը: «Դու երկար ճանապարհ ես գնալու»:

Ես վազեցի բակ: Ես ճչացի գիշերվա մեջ, բայց շուրթերիցս ձայն դուրս չեկավ: Չայներս գլխիս մեջ էին: Ինձ թվում էր կիսելագարվեմ վշտից ու կատաղությունից: Ես կանգնած էի քարի պես՝ նայելով վեր՝ լռության մեջ հայիռյելով երկնքին:

Իրականում գիշերը բավական խաղաղ էր ու գեղեցիկ: Պարզապես 1942 թվականի հոկտեմբերյան գիշեր: Ինչպե՞ս էր հնարավոր, որ երկինքն այդքան խաղաղ էր, և ո՞ր էր Աստված:

Հանկարծակի ես գտա ձայնս: Աղաղակեցի. «Աստվա՛ծ, օ՛, Աստվա՛ծ, օգնի՛ր»: Ինչպե՞ս կարող ես թույլ տալ, որ սա պատահի: Ինչպե՞ս կարող ես չհուզվել այս մանկան համար, ում մորը բռնությամբ տանում են:

Դողացնելով վերադարձա դեպի տուն: Լսեցի դռների բացման և փակման ձայնը ու ոտնաձայներ փողոցում. «Սոնյա, Սոնյա», հիմա դա հորս ձայնն էր, որ ճեղքեց գիշերը: «Մայրդ ուշաթափվել է, և ոստիկանները գնացել են: Այս

պահին նրանք գնացել են: Բայց նրանք կվերադառնան պատգարակով»:

Ես մտա սենյակ: Մայրս պառկած էր գետնին: Չնայած ուշաթափվել էր, նրա աչքերը հիմա լայն բացված էին: Ցրված նա հարդարում էր իր մազերը: Ես լսեցի հորս աղաղակը. «Ա՛խ, երեխա, ա՛խ, երեխա»: Ես մոտեցա հորս: Նա ողբում էր: Ինչ-որ բան իմ մեջ մեռավ: Ես նույնպես ուզում էի լաց լինել, բայց չէի կարողանում: Ես ուզում էի խոսել, մխիթարել նրան: Ես ուզում էի... Ես չգիտեմ ինչ էի ուզում:

Հիմա մայրս ոտքի վրա էր: Նա վերստին սկսեց հագնվել: Դանդաղ, զգուշորեն նա հագավ իր զգեստը, սվիտերը, վերարկուն: Որքան զգուշությամբ նա հագնվեց: Հանգիստ, մեծ խնամքով, կարծես թե պատրաստվում էր կինոթատրոն գնալ, մայրս սանրեց մազերը: Հետո պատի պահարանից վերցրեց մի պայուսակ: Բուֆետից վերցրեց չոր հացի մի կտոր և դրեց պայուսակում: Չոր հաց, որքան սարսափելի է: Այդ ամբողջ ժամանակ կանգնած էի այդտեղ՝ սարսափով նայելով:

Հանկարծ դուռը բացվեց, և երկու մարդ պատգարակով ներս եկան: «Որտե՞ղ է հիվանդ անձը»,- հարցրին նրանք: Նրանց աչքերն արագորեն ջոկեցին մորս: Նրանք ձեռքով ցույց տվեցին պատգարակը: «Արագ նստեք, որ գնանք»: «Ո՛չ, շնորհակալ եմ»,- ասաց մայրս տարօրինակ, հեռավոր ձայնով: «Ես ինքս կգնամ: Պատգարակի կարիք չկա»: Հետո նա արժանապատվորեն ավելացրեց. «Ես կարող եմ քայլել»:

Նա շրջվեց դեպի ինձ: «Մոտ եկ, *Sloneczko*», - շնջաց նա: Նա իր պայուսակից ինչ-որ բան հանեց՝ մի քիչ փող: Նա այն դրեց ափիս մեջ: «Ես գիտեմ, դու դրա կարիքը կունենաս: Այն կարող է օգնել»: Նա գրկեց ինձ և շնջաց. «Հիշի՛ր, ես քեզ սիրում եմ»: Աշխարհը պտտվում էր աչքերիս առաջ: Կարծես հեռվից լսեցի նրա վերջին բառերը. «Եվ հիշի՛ր, պատմել աշխարհին»:

«Վերջացրե՛ք այս սենտիմենտալ տխմարությունը: Բավական է: Գնացի՛նք», - գոռացին դաժան ձայները: «Ո՛չ, կանգնեք: Ես ձեզ հետ եմ գալիս», - ասաց հայրս: Նա գնաց նրանց հետ, և հանկարծ ես մենակ էի գիշերվա մեջ:

Նորից ես Աստծուց օգնություն խնդրեցի: Ես ճչացի խուլ, անսիրտ աշխարհին: Հետո ուժասպառ նիրհեցի, տագնապի ու երազներիս մեջ՝ մինչ լսեցի հորս ձայնը: «Սոնյա՛, բալիկս, մենք փրկեցինք մորդ: Ինչ-որ ձևով Բլանկան իմացել էր, որ *մամուսյան* ցուցակի վրա էր: Նա գիտեր, որ ոստիկանությունը պետք է անցներ իրենց տան մոտով՝ գնալով հրապարակի հավաքատեղին: Այսպիսով նա հետևեց, որ մորդ տեսնի: Բլանկան, Նորբերտը և ես կարողացանք խառնաշփոթ ստեղծել, շեղում, որի պատճառով ոստիկանության ուշադրությունից նա դուրս մնաց: Այդ կես վայրկյանին մենք կհափշտակեինք *մամուսյային* և կթաքցնեինք մոտակա ծածկի տակ: Հետո ես գործարք արեցի ոստիկանության հետ: Ես ասացի, թե կգնամ մորդ փոխարեն»:

Ես շնչահեղձ եղա: «Ա՛խ, դա ոչինչ է», - շարունակեց հայրս: «Ես տղամարդ եմ, և ես ուժեղ եմ: Ես լավ կլինեմ:

Կարևորն այն է, որ մայրդ ապահով է»: «Ապահով,- ես երևի երագում էի,- ո՞վ ասաց դա: Դա հնարավոր չէ: Բայց դա ասում էր հայրս: Հայրս կռացած էր վրաս: Հանկարծ ես վեր թռա ու եկա դեմ առ դեմ. «Ո՛չ, դու չես գնա: Դու քո ոստիկանությանը տված խոսքը չես պահի»:

Հայրս շփոթված ինձ նայեց: Ես ցնցեցի նրան. «Լսի՛ր: Դու չես գնա: Ռենայի հայրը կապեր ունի: Նա մեզ ավելի ուշ կօգնի, երբ *ակցիան* (akcja) ավարտվի: Նա մեզ համար կհայթայթի բոլոր անհրաժեշտ թղթերը: Այդ ընթացքում մենք *մամուսյայի* (mamusia) հետ կթաքնվենք:

Մենք երկուսով նետվեցինք բակ: Բլանկան և Նորբերտն արդեն սկսել էին իրենց պարտադիր գործը: Ես խուճապի մեջ տեղից տեղ էի վազում՝ փնտրելով Ռենայի հորը: Երբ վերջապես գտա նրան, նա ասաց, որ մենք խելացի ենք վարվել: Նա խորհուրդ տվեց թաքնվել միասին: Եթե կենդանի մնայինք այս ակցիայից հետո, Ռենայի հայրն ինչ-որ ձևով կփորձեր մեզ համար դասավորել պատշաճ կյանքի թույլտվություն:

Ես շտապեցի բակը, ուր տեսա Նորբերտի ընտանիքի շատ անդամներ շնչում էին հորս հետ: Հորս աչքերի արտահայտությունն ինձ ասաց, որ խնդիր կա: «Մենք չենք կարող թաքնվել *մամուսյայի* հետ թաքստոցում», - ասաց նա: Նրա աչքերը լցվեցին արցունքներով: «Մառանը կողպված էր, և մենք չէինք կարող բանալին գտնել»: Մենք սարսափով իրար նայեցինք: Հիմա արդեն եսեականները, որոնք պատասխանատու էին վերաբնակեցումների ու սպանությունների հա-

մար, քշում էին մարդկանց հավաքավայրը կամ *Appelplatz* կոչվող հրապարակը: Նրանց ձայները ծաղրում էին մեզ՝ «Դո՛ւրս, դո՛ւրս (*Heraus! Heraus!*): Դո՛ւրս եկեք, դո՛ւք, պոռնկորդիներ: Սա վերաբնակեցում է: Դո՛ւրս եկեք թաքստոցից, դո՛ւք, գարշելի հրեաներ: Դո՛ւրս եկեք, դո՛ւրս եկեք»:

Ձայները վտանգավոր մոտիկ էին: Մենք չէինք կարող կոտրելով բացել մառանի դուռը՝ առանց ուշադրություն հրավիրելու: Ես գաղտագողի գնացի դեպի դուռը և շնչացի. «*Մամուլյու*, ես եմ, Սոնյան: Չափազանց շատ գերմանացի կա շրջապատում: Մենք գնում ենք թաքնվելու մոտակա նկուղում: Դու ինձ լսո՞ւմ ես»: «Ա՛խ, ես շատ կուզեի ձեզ հետ լինել», - պատասխանեց մայրս: «Մենք շուտով միասին կլինենք», - ես խոստացա:

Հանկարծ լսեցի կրակոցներ: Սուր ճիչեր էլ լսվեցին: Հայրս շտապեց շարժվել: Հեռավորությունից լսեցի մորս խուլ ձայնը. «Այո՛, այո՛, լա՛վ: Քեզ լավ նայիր...», - և բառերը մարեցին:

Մենք ցատկեցինք նկուղ՝ հայրս, ես և մի քանի այլ մարդիկ: Շուտով հասկացանք, որ Նորբերտի ընտանիքը թաքնված է մեր կողքի նկուղում: Մութ ու խոնավ էր: Խարխափելով գտանք ինչ-որ հին կահույք և արգելափակեցինք դռներն ու պատուհանները: Աչքերս դանդաղ սկսեցին հարմարվել մթությանը: Հայրս գրպանից հանեց հացի փշրանքներ և սովեց ինձ: Ես կերա: Ես սեղմվեցի հորս: Սարսափով լսում էի փողոցից եկող ձայները: Կրակոցներ... Մի կրակոց

մյուսի հետևից... Սարսափելի ճիչեր, հետո լռություն և ծանր զինվորական կոշիկների ձայնը: Արյունը սառեցնող մանուկների ճիչեր: Այդ ճիչերն անշուշտ հասնում էին երկինք... հասնում էին որ:

Ժամեր անցան: Գիշերն անցավ, և արևը նորից շողում էր: Մենք չպատասխանեցինք դրսից եկող բարձրախոսների ձայներին. ձայներ, որ հավաստիացնում էին մեզ, որ լավ կլինի դուրս գանք... որ մեզ կտանեն աշխատանքի... որ շատ ուտելիք կլինի և լավ կենսապայմաններ: Բայց ձայները նաև զգուշացնում էին մեզ, որ եթե դուրս չգանք և շարունակենք թաքնվել, մեզ տեղնուտեղը կսպանեն, երբ գտնեն:

Մի պահ լսեցի հանգիստ ու խաղաղ մի ձայն, որ իմ անունն էր տալիս: Ձայնը նման էր Նորբերտի քույր Սիլայի ձայնին: Ես ու հայրս նայեցինք իրար: «Գնանք», - ասացի ես: «Հանգիստ, մենք չենք գնա», - շնչաց հայրս՝ իր ձեռքով փակելով բերանս:

Նորից լսեցինք լաց ու ճիչեր: Պատուհանի ճեղքից տեսա ոտքեր, հագարավոր ոտքեր: Մի մասը զինվորական կոշիկներով էին և մի մասն էլ ժամանակին էլեգանտ եղած բարձրակրունկ կոշիկներով: Ոմանք քայլերթ էին կատարում, ոմանք տատանվելով քայլում: Հետո ես տեսա մի պստիկ ոտք՝ երեխայի ոտք, որ կպավ քարին ու վայր ընկավ: Փոքրիկ աղջիկը, գուցե չորս տարեկան, ճչաց ընկնելուց: Հաջորդ բանը, որ լսեցի, կրակոց էր: Լացն ընդհատվեց: Եվ հետո անցան ավելի կոշիկներ՝ մեծ և փոքր, որոնք կատարում էին իրենց վերջին լուռ քայլը մահվանից առաջ:

Արևը մայր էր մտնում ևս մեկ անգամ: Մենք զգացինք սարսափազդու լռություն, և այս անգամ լռությունը տևական էր: Հայրս ասաց. «Ես կարծում եմ ապահով է դուրս գալու համար: Արի գնանք, մորդ փնտրենք: Ես վեր կացա: Ես լիովին անշարժացած էի: Մարմինս չէր ենթարկվում, չէր շարժվում: Հայրս օգնեց ինձ սողալ դեպի բակ: Անմիջապես ուղևորվեցինք դեպի մառանը:

Այս պահին ես այնքան անզգա էի, գիտակցությունս չէր ըմբռնում իմ առջևի տեսարանը: Խիստ սարսափազդու էր ընկալման համար: Մառանի դուռը ջարդել էին կացնով կամ էլ հրացանի կոթով: Մայրս չկար: Հատակին ընկած էր ճմրթված վերմակ:

Սիրտս ընկավ ոտքիս տակ: Եթե միայն մառանում գտնեինք նրա մարմինը: Եթե միայն նրան անմիջապես սպանած լինեին և ազատած հետագա տանջանքներից: «Ա՛խ, Աստված, որքան կուզեի, որ նա սպանված լիներ հենց այստեղ: Այդ պահին կփաթաթվեի նրան... բայց այնտեղ մառանի և իմ հոգու դատարկությունից բացի, ոչինչ չկար»: Այդ գիշեր ես գրեցի.

ՄՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞ւր է քո գերեզմանը,

Որտե՞ղ դու մահացար,

Ինչո՞ւ դու լքեցիր

Քո փոքրիկ աղջկան՝

Աշնան այս անձրևոտ օրը:

Ես դեռ կարող եմ լսել
Քո ասած բառերը.
«Դու պատմի՛ր աշխարհին, զավակս».
Քո աչքերը կանաչ էին
Ինչպես զմրուխտներ՝
Հանգիստ ու այնքան մեղմ:

Դու ձեռքս բռնեցիր
Ճերմակ էր քո դեմքը
Եվ լուռ, ինչպես քարը,
Դու ինչ-որ բան սեղմեցիր
Ափիս մեջ,
Եվ հետո... դու անհետացար:

Ես տանջվեցի, բայց
Լաց չեղա,
Ցավն այնքան կատաղի, այնքան խոր...
Միբոլս ծակեց
Եվ այն քամեց,
Եվ հետո ես քուն մտա:

Քնեցի տագնապած
Եվ երազներով...
Մղձավանջը, որ իրական էր,
Ես լսեցի կրակոցներ,
Ճիչեր, որ գալիս էին

Մեզնից, ինձնից ու քեզնից:

Ես իստացա,

Ես կպատմեմ աշխարհին...

Բայց որտեղից գտնեմ բառերը՝

Պատմելու անմեղության և սիրո մասին

Եվ պատմելու, թե ինչ ցավի մեջ եմ:

Այն դեմքերի մասին՝

Տկար ու գունատ,

Շուրջբոլորը այն շփոթված աչքերը

Եվ անհաշիվ շուրթերը,

Որ շնջում էին՝ «Օգնություն»,

Բայց ոչ մի ձայն չէին հանում...

Պատմել կորուստների,

Վշտերի մասին...

Մահվան ու ցրտի սարսափի,

Չարամտության

Եվ թշվառության...

Օ՛, Ո՛՛... հնարավոր չէ պատմել:

Հետո մեր լսած բամբասանքներն ու մեր մտավախությունները հաստատվեցին՝ հիմնականում ընդհատակի կողմից: Ես իմացա, որ իմ գեղեցիկ մայրիկը տարվել է Բելգեկ մահվան ճամբարը: Ես երբեք նրան չտեսա:

Մորս անհետանալն ինձ ծեր զգացրեց, սարսափելի ծեր: Որոշ մարդիկ ջանում էին սփռվել ինձ: Ուրիշներն ասում էին, որ դադարեմ լալ ու երեխայի նման ինձ չպահեմ: Բայց ես չէի կարող չսգալ: Ես հիշեցի, թե ինչպես էր սգում մայրս, երբ իր մորն էին սպանել: Եվ այսպիսով, ես ճչացի նորից, որովհետև ճիշտ է լալը, երբ կորցրել ես *մամուլային*: Մայրս երեխա չէր, երբ իր մայրը սպանվեց: Սակայն ինքն էլ լաց եղավ: Ես էլ կարող էի լաց լինել, եթե ուզում էի:

Հունվար 1943

Նոր տարին սկսվեց, և ինչ-որ ձևով կյանքը շարունակվեց անգամ մորս տանելուց հետո: Ես ու հայրս դարձանք ավելի մտերիմ, քան երբևէ: Այժմ նա ինձ համար ոչ միայն հայր էր, այլև մայր: Ես նաև մեծ աջակցություն գտա իմ ընկերներից՝ հատկապես Ռենայից: Մենք ժամերով զրուցում էինք՝ հատկապես երեկոները: Մենք կիսում էինք մեր զգացմունքները և դարձանք անբաժանելի:

Հետո ես հանդիպեցի Ադամին: Ադամը գեղեցիկ էր, բայց ոչ շատ խելացի: Դրանից հետո հանդիպեցի Ստեֆանին: Ես անմիջապես սիրահարվեցի նրան, որովհետև նա... այնքան նման էր Ադամին, բայց ավելի խելացի էր ու ավելի հետաքրքիր: Ստեֆանն այցելում էր հորս ու ինձ, ըստ երևույթին հայրս, կամ *տատուսը* (tatus), ինչպես սիրով կոչում էի նրան, իրոք նույնպես հավանում էր Ստեֆանին: Նրանք քարտ էին խաղում և միասին զրոսանքի գնում: Եվ երբ ես հիվանդանում էի, նրանք երկուսով մտահոգվում էին ինձ համար:

Եվ այսպես շատ շաբաթներ և ամիսներ անցան գետտոյում, մինչ պատերազմն ահագնորեն շարունակվում էր: Ես լուռ աղոթում էի. «Ա՛խ, թանկագին *մամուլյա*, ների՛ր ինձ, որ ինչպես հարկն է չսզացի քեզ: Ների՛ր ծիծաղելու և ուրախանալու համար...»: Մշտապես սրտումս դեռ հույսի կայծ կար, թե լուրերը սխալ են, և որ մայրս մնացել է կենդանի:

Մի օր, երբ պտտվում էի գետտոյում, հասկացա, որ որոշ փողոցներ արգելափակվել են և նոր պատեր կառուցվել: Իրավ տարածությունը նվազել էր՝ դառնալով սկզբնական չափի մեկ երրորդը: Արդեն հազարավոր մարդիկ էին տարվել, այդ թվում՝ Նորբերտի ծնողներն ու եղբայրները: Միայն նրա քույր Սիլան էր դեռ մեզ հետ մնացել: Բայց հետո նա նույնպես նահատակվեց:

1943 թվականի հունվարի և փետրվարի ցուրտ օրերին նացիստները հանեցին մարդկանց գետտոյից դուրս և ստիպեցին նրանց աշխատել նոր աշխատուժի՝ Պլազովի ճամբարի շինարարության վրա: Այսպիսով մենք գիտեինք, որ Կրակովի գետտոյի լուծարումն ու վերացումը մոտ է: Պլազովը գտնվում էր Կրակովի գետտոյից միայն երկու կամ երեք կիլոմետր (մեկ ու կես մղոն) հեռու: Աշխատանքն արագ առաջ էր գնում:

Ամեն օր օրագրիս վստահում էի իմ տագնապները անհայտ ապագայի շուրջ՝ երբեք չգիտակցելով, թե այդ գրառումները կլինեն իմ վերջինը:

4

ՊԼԱՋՈՎ

Մարտ 1943 – դեկտեմբեր 1944

Մարտի մի ցուրտ ու քամոտ օր Բլանկան և ես նրանց թվում էինք, ում հրահանգեցին լքել գետտոն և գնալ Պլազով: Հորս և Նորբերտին ևս տեղափոխեցին Պլազով, և ես հիշում եմ ուրախությունս մեր լավ բախտի համար, որ մեզ չէին բաժանել: Չնայած Բլանկային և ինձ չէր թույլատրվում ապրել Նորբերտի և հորս հետ, առնվազն նրանք մոտ կլինեին տղամարդկանց իրենց բաժնում: Միաժամանակ ես ամբողջովին կունենայի իմ հրաշալի քրոջը:

Երբ մենք թողեցինք Կրակովի գետտոն Պլազով գնալու համար, գերմանացիները մեզ ստիպեցին այնտեղ թողնել մեր ունեցվածքի մեծ մասը: Իմ թանկագին օրագիրն այն իրերի թվում էր, որ ես չէի կարող վերցնել: Ճամբարի ներսում արգելված էին թուղթն ու գրելու պիտույքները: Այսպիսով, ես այլևս չունեի մտքերս, զգացմունքներս և բանաստեղծություններս գրելու հարմարություն: Բայց ես սովորություն ունեի արտահայտելու, թե ինչ էի զգում, և ես խիստ կարիք ունեի այդ անելու: Եվ այսպես ես գտա այլ միջոց: Իմ փորձառությունները գրի առնելու փոխարեն ես դրանք իմ մտքի մեջ հավաքեցի պահելու: Ես դարձա ուշադիր դիտորդն ու արձանագրողը ինձ շրջապատող սարսափների:

Երբ պատերազմից հետո վերականգնեցի իմ օրագիրը, ես նաև գրեցի Պլազովի մասին պահպանված իմ որոշ հուշեր:

Հետո դրանք թարգմանեցի անգլերեն: Ես հիմա ցանկանում եմ Ձեզ հետ կիսել այս «խավարի դրվագները»:

Սպանության ականատես

Մեր տեղ հասնելուց մեկ ամիս անց՝ ապրիլի մի ցուրտ առավոտ, մեզ հավաքեցին և ուղարկեցին պահեստ՝ գործիքներ բաժանելու համար: Ես Բլանկայի հետ հերթի մեջ էի: Մեզ տվեցին երկու ծանր մուրճ և նշանակեցին, որ աշխատենք Բենոյի՝ հրեա *Ordnungsdient* (OD) ոստիկանի հետ: Բենոն մեզնից մի խմբի տարավ դեպի երկար, նեղ փոսը, որը մասամբ լցված էր ջարդված քարերով: Պլագովը կառուցվել էր հրեական երկու գերեզմանոցների վրա, և այդ քարերը եղել էին տապանաքարեր: Նա հրահանգեց մուրճերով ջարդել քարերը՝ դարձնելով ճանապարհի մանրախիճ:

Աշխատանքը շատ դժվար էր՝ ցավեցնում էր մեջքս: Ոտքերս ու ձեռքերս անզգայացել էին: Հագիս շորերը թաց էին անձրևաջրից ու քրտինքից: Սակայն Բենոն մեզ լավ էր վերաբերվում: Ես հստակ հիշում եմ նրա բարությունը: Նա մեզ միայն հրահանգում էր աշխատել այն ժամանակ, երբ որևիցե մեկը պահակախմբից կամ էսեսականներից մոտենում էր:

Հանկարծ Բենոն մեզ ձայնեց չարագուշակ *Zex* բառը, որը մոտեցող վտանգի ազդանշանն էր: Մենք վեր նայեցինք և տեսանք սև լիմուզինի ժամանումը, որը պատկանում էր ճամբարի սարսափելի պարետ Ամոն Գյոթեին: Քույրս աշխա-

տում էր կողքիս: Նրա կողքին աշխատում էին Ջոսյա անունով մի երիտասարդ կին և նրա տարեց մայրը:

Մեքենան կանգ առավ բլրի վրա: Երբ Գյոթեն դուրս եկավ մեքենայից, տեսանք, որ վզին կապել է սպիտակ շարֆ, որ հավաստում էր, թե այդ օրը մեր մեջ սովորականից շատ գոհեր կլինեն: Նա մոտեցավ ինչ-որ կանանց, որոնք ջուր էին կրում: Ժպիտը դեմքին՝ նա դիտում էր, թե ինչպես ջահել ու տարեց կանայք հազիվ քարշ էին գալիս ամեն մեկի կրած երկու դուլերի ծանրության տակ: Նրա դիվային աչքերը կենտրոնացան մի ծեր կնոջ վրա, որը տանում էր միայն մեկ դուլ: Մտրակի ծանոթ *շայունը* մեզ տեղեկացրեց, թե նա ծեծում է կնոջը, ծեծում մինչև կինը կուշաթափվի:

Ձեռքերս դողում էին: Ես կենտրոնացա ծանր մուրճի հարվածների վրա, որոնք խփում էին քարին՝ դրիսկ, դրիսկ, դրիսկ՝ միալար, սարսափելի ձայն: Հետո մոտիկից լսեցի Բենոյի գոռոցը՝ *Achtung!* Ուշադրություն: Բայց Գյոթեն տվեց ուրիշ հրահանգ. «Կարիք չկա կանգնելու: Շարունակե՛ք աշխատել»: Ես սառեցի: Բլանկան ականջիս շնչաց. «Աշխատի՛ր: Եթե նա սպանի ինձ, եթե նա ինձ վրա կրակի, դու պետք է շատ հանգիստ պահես քեզ և շարունակես աշխատել: Այլապես նա քեզ էլ կսպանի»:

Արցունքներն այրեցին աչքերս: Ես մտածեցի աներևակայելին. «Ես Բլանկային կորցնելն օ՛ եմ: Ո՛չ: Ո՛չ: Երբեք: Մենք պետք է աշխատենք: Մի՛ մտածիր: Մենք պետք է շարունակենք աշխատել: Մենք պետք է կառուցենք այս ճանապարհը մեր նոր «տան» համար»: Մենք շարունակում էինք ջարդել

քարեր, մինչ կյանքի ու մահվան տերը կանգնած էր մեր գլխավերևում:

Հանկարծ, առանց զգուշացնելու, Գյոթեն խլեց ծանր մուրճը Ջոսյայի մոր ձեռքից: Սկզբում դրանով խփեց նրան: Հետո տվեց քար ջարդելու «դաս»: Գյոթեն վերցրեց երկու մեծ քար և մի փոքր քար դրեց նրանց մեջտեղում: Դանդաղ, մեթոդիկ ձևով, իր ամբողջ ուժով նա մուրճով հարվածեց քարին: Հարվածը չափազանց ուժեղ էր մուրճի համար: Այն ջարդվեց նրա հսկա, անմարդկային թաթերի մեջ: Այս պատահարը կատաղեցրեց նրան: Գյոթեն նայեց շուրջը՝ փնտրելով մոտակա թիրախը և նրա հայացքը նորից ընկավ Ջոսյայի մոր վրա:

Մինչ մենք շարունակում էինք աշխատել, լսում էինք կնոջը ծեծող մտրակի ձայները: Լսեցինք Ջոսյայի մոր ընկնելը: «Նա ուշաթափվե՞ց», - հարցրի ես: «Աշխատի՛ր», - շնջաց Բլանկան: «Այդ կինը մահացած է: Աչքերդ մի՛ բարձրացրու: Շարունակի՛ր աշխատել»: Առանց աչքերս բարձրացնելու ես կարող էի տեսնել ընկած կնոջը: Նրա ձեռքերն անկենդան էին: Ինձ թվում էր՝ դրանք քարանում էին: Սա առաջին անգամ էր, որ ես մոտիկից մեռած մարմին էի տեսնում: Ես դարձա սպանության ականատես:

«*Achtung!*», - գոռաց Բենոն, - «Պարետը գնաց»: Ես նայեցի շուրջս և տեսա գունատված դեմքեր և սարսափից պլշած աչքեր: Միակ անձը, որ հանգիստ նստած էր, Ջոսյան էր: Ինձ դժ Ջոսյա: Նա նույնիսկ չէր լալիս: Զգուշորեն նա իր մոր մարմինը դրեց ձեռնասայլակի մեջ և հանգիստ գլորեց դեպի բլուրը:

Հետո լսեցի, թե ինչպես մեկն ասաց. «Ծեր կինը չմեռավ ծեծելուց: Նրա գլխին կա ատրճանակի կրակոցի վերք»: Վերջում Գյոթեն նրա վրա կրակել էր խլացուցիչ ատրճանակով: Բենոն անօգնական նստել էր: Արցունքները հոսում էին նրա դեմքին: Նա կախել էր գլուխը և լալիս էր:

«Նա գնաց: Նա գնացել է: Քածի տղեն գնացել է»: Սա ասում էին ամենուրեք իմ շուրջը, և կար թեթևացման հառաչանք: Բայց հանգստությունը երկար չտևեց: Մեզնից մի քանի մետր առաջ մեկ այլ խմբի կին հրում էր քարերով լցված ձեռնասայլակը: Նա շատ-շատ դանդաղ էր շարժվում: Նա ուժասպառ էր: Նրանց խմբի հսկիչը, տեսնելով, որ այս կինը համարյա ուշաթափվելու վրա է, վերցրեց ձեռնասայլակը այդ կնոջ ձեռքից և թույլ տվեց նրան կողքից քայլել: «Ա՛խ, Աստված, տեր Աստված, ի՞նչ կլինի, եթե նա վերադառնա», - շշնջացի բարձր ձայնով: Իրապես սև լիմուզինը նորից հայտնվեց բլրին: Բայց արդեն շատ ուշ էր, չափազանց ուշ էր կնոջն օգնող հսկիչին նախազգուշացնելու համար:

Գյոթեն տեսել էր, թե ինչ է կատարվում: Նա մոտեցավ, հետո առանց ձայն հանելու ծեծեց հսկիչին՝ ստորացնելով նրան ամենաանմարդկային ձևով: Իսկ կի՞նը: Նա հրամայեց կնոջը վազել, վազել իր դիմաց: Կինն ընկավ Գյոթեի ոտքերը և աղաչեց իր կյանքի համար: Նա դաժանորեն քացի տալով հրեց կնոջը: Հետո լսեցինք կրակոց: Կինն ընկավ: Մի քանի վայրկյան անց նա մասամբ իրեն վեր բարձրացրեց: Մենք դիտում էինք, թե ինչպես նա խլաձայն նորից խնդրում էր իր կյանքի համար: Հնչեց մեկ այլ կրակոց: Այս անգամ կինը ձգեց

իր արնաշաղախ բազուկները և սողաց Գյոթեի ոտքերի մոտ: Հնչեց երրորդ կրակոցը: Այս անգամ այլևս շարժում չկար: Կինը մեռած էր, գթասարտորեն մեռած:

Իմ օրագիրը

Պլազովում գտնվելու առաջին ամիսներին գերմանացիները մեզնից ոմանց որպես մաքրող ուղարկում էին Կրակովի գետտոյում աշխատելու: Իմ ընկերներից մեկն այդ խմբի մեջ էր: Մի օր աշխատելիս նա հրաշքով գտավ իմ սիրելի օրագիրը: Այդ գիշեր նա խիզախորեն թաքուն բերեց օրագիրը ճամբար՝ ինձ համար: Երբ օրագիրն ինձ հանձնեց, մյուսները շրջապատեցին մեզ: Նրանք լսեցին ինչպես ես դանդաղ և միտումնավոր բարձրաձայն կարդացի գետտոյի կյանքի իմ հուշերը: Արցունքները հոսում էին դեմքիս և ընկնում էջերին՝ կազմելով կապույտ թանաքի փոքրիկ առվակներ: Ես կարդում էի ու կարդում: Շուտով բոլորս լալիս էինք:

Մենք բարակում ունեինք վառարան, և քանզի երեկոն գով էր, փոքրիկ խարույկ էր վառվում նրանում: Երբ ավարտեցի օրագրիս ընթերցումը, փչեցի վառարանի կրակին: Հետո էջ առ էջ ես իմ երիտասարդ կյանքի հուշերով կրակը սնեցի: Կրակը կլանեց բարակ թուղթը, և տառերը վեր սավառնեցին: Ես գիտեի, որ այդ պետք է անեմ: Այդ անմարդկային վայրում մեզ չէր թույլատրվում ունենալ որևիցե բան, որ կհիշեցներ մեզ, որ մարդկային արարած էինք: Եթե ինձ բռնեին այս օրագրի հետ, շատ ուրիշների հետ ես էլ կսպանվեի:

Պար հորս հետ

Չնայած տղամարդիկ և կանայք ապրում էին ճամբարի առանձին մասերում, երկու խմբերը կարողանում էին միմյանց հետ շփում ունենալ: Օրինակ, մի անգամ ինձ ուղարկեցին գետտո՝ մաքրող խմբի հետ: Այդ ժամանակ ես գտա հիանալի մի ժակետ: Ես թաքուն այն բերեցի Պլազով՝ հորս համար: Մխիթարիչ էր մտածել, թե ժակետն այդ ձմեռ նրան տաք կպահի:

Մեկ այլ օր ես ներս սողոսկեցի հորս բարակ՝ փշալարի մյուս կողմում գտնվող: Երբ ես այնտեղ էի, հանդիպեցի մի տղայի, որը համարյա իմ տարիքին էր՝ 14 կամ 15: Տղան շրթնահարմոն էր նվագում՝ մի արարք, որի համար նրան կարող էին դատապարտել: Ես ու հայրս լսում էինք երաժշտությունը, և հայրս ինձ ասաց. «Ես ու դու երբեք առիթ չենք ունեցել միասին պարելու»... և մենք այսպիսով պարեցինք: Դա այնքան թանկագին տեսարան էր՝ տարօրինակ և գեղեցիկ նվեր:



*Գարեն Ֆ.Լեոնարդի յուղանկարը
պատկերում է Մոնյայի պարը հոր հետ*

ՀԱՂԹԱՆԱԿ

Ես պարեցի քեզ հետ միայն մեկ անգամ,
Որքա՛ն տխուր էիր, հոգնած, միայնակ...
Դու գիտեիր, որ նրանք շուտով «տանելու են» քեզ...
Ու երբ հարևանդ մեղեդի նվագեց,
Դու շշնջացիր. «Փոքրի՛կս, արի պարենք,
Գուցե այլ առիթ էլ չունենանք»:

Այս պահը... զգալ տրամադրությունը,
Այնքան լավ էր զգալ քո ձեռքերն ինձ գրկած...
Տգեղ բարակներն անհետացան,
Չկար ո՛չ քաղց... և ո՛չ վախ:
Ա՛խ, ինչ տեսարան. միայն դու և ես,
Իմ սիրելի՛ հայր (որն անցյալում մեծ և ուժեղ էր):
Եվ ես՝ մի երեխա... դատապարտված մահվան:

Ես մտածեցի, ինչքան կտևի,
մինչև երգը
վերջանա:
Չկային գործիքներ
սերը չափելու,
և միայն հիմարները
Կարող էին ձախողել
հասնել
քո հաղթանակին:

Շուտով՝ դրանից հետո, հորս և Նորբերտին բեռնատարով տարան: Ես այլևս, երբեք հորս չտեսա:

Կյանքը ստրուկի աշխատանքային ճամբարում

Ի տարբերություն հիմնական համակենտրոնացման ճամբարների [որոնց նպատակն էր սպանել մարդկանց – Ա. Դ.] (Օսվենցիմ, Բիրկենաու, Բելզեկ, Մայդանեկ, Տրեբլինկա, Խելմո և Սոբիբոր), Պլազովը չուներ գազախցիկներ և կամ էլ դիակիզարան: Այնուամենայնիվ, Պլազովում կատարվում էին զանգվածային սպանություններ: Այդ սպանությունները տեղի էին ունենում Հոյովա Գորկայում, բլրակ, որտեղ նացիստները գնդակահարեցին մեծ թվով մարդկանց: Նրանք բլրակից զոհերին զցում էին մոտակա կիրճը և այրում մարմինները: Այրված մարմինների հոտն անդադար ազդում էր մեր զգացողության վրա:

Այս ճամբարում նաև տեղի էին ունենում բժշկական փորձեր և մտրակահարումներ, որոնք բոլորը պետք է պարտադիր դիտեին: Նացիստները հանում էին «մեղավոր» անձի վարտիքը և հետո ստիպում նրանց՝ տղամարդ, թե կին, պառկել սեղանի վրա: Մտրակի սահմանված հարվածների թիվը քսանհինգն էր, բայց շատ մարդիկ, հատկապես նրանք, որոնք թուլացած վիճակում էին, ուշաթափվում էին ինը-տասը հարվածից հետո: Ես դեռ կարող եմ լսել նրանց ցավի ու տառապանքի ճիչերը:

Եկավ ժամանակ, երբ նացիստները որոշեցին, որ ճամբարի հրեա հսկիչներն ու այլ հրեա առաջնորդներն այլևս օգտակար չէին: Այսպիսով, նացիստները նրանց հավաքեցին, տարան «բլուրը» և նրանց գնդակահարեցին: Ես հիշում եմ, երբ հրեա առաջնորդներին սպանեցին և այրեցին: Ես հիշում եմ բլրի վրայի ծուխը:

Այս ժամանակ էր, որ ես հասկացա, որ ես չեմ կարող թղթի վրա գրել մտքերս ու բանաստեղծություններս: Ես կգրառեի դրանք իմ գլխում: Չնայած իմ շուրջը կատարվող ամեն ինչ թվում էր անիրական, ես կենտրոնացա, որ դրանք իրական պահեմ իմ գլխում: Ես հաճախ ունեի այն զգացումը, թե մի օր կարթնանամ այս մղձավանջից և կենդանի դուրս կգամ մյուս կողմի վրա: Գուցե այդ ժամանակ ես կկարողանայի պահել մորս տված խոստումը՝ «պատմել աշխարհին»: Իհարկե, լինում էին ուրիշ ժամանակներ նույնպես, մոայլ ժամանակներ, երբ ինձ թվում էր՝ ամեն ինչ կորած է: Այդ պահերին ես միայն ուզում էի մեռնել: Բայց Բլանկան ինձ չէր թողնի: Նա խրախուսում էր, խթանում ինձ՝ կենդանի մնալ:

Չնայած զանգվածային սպանություններին՝ Պլազովը առաջին հերթին ստրկային աշխատանքի և ոչ թե մահվան ճամբար էր: Եվ այսպիսով, մեր կյանքի առաջնահերթ նպատակն էր նացիստների համար աշխատելը: Շնորհիվ մորս, որ ինձ գետտոյում սովորեցրել էր կարել, նացիստներն ինձ հանձնարարել էին, որ ես ժամանակի մի մասն անցկացնեմ գերմանական գործարաններում, ուր օգնում էի վերանորոգել համազգեստներ, կոշիկներ և մուշտակներ:

Կարելիք համեմատաբար հեշտ աշխատանք էր: Եվ երբեմն ինձ և ուրիշներին հնարավորություն էր տալիս գործարանում պատեհություն ունենալ նենգադուլության (սաբոտաժի), որի համար մահապատիժ էր սահմանված: Ինչպե՞ս էինք նացիստներին սաբոտաժ անում: Մենք իրար էինք կարում թևերն ու շավարի փողքերը՝ դժվարություն հարուցելով գերմանացի զինվորներին հագնել դրանք: Դա փոքրիկ անհնազանդության ակտ էր, բայց այն մեզ հաճույք էր պատճառում: Բարեբախտաբար քույրս ինձ հետևում էր, համոզված լինելու, թե ես մեծ մասամբ ինձ լավ եմ պահում:

Այնտեղ եղած ժամանակի մի մասը Բլանկան աշխատում էր բաղնիքում, ուր բանտարկյալներին ուղարկում էին ոջլահան լինելու: Այնտեղ նա հաջողեցնում էր կարտոֆիլներ և ուրիշ կոճոնքեր եփել: Հաճախ նա թաքցնում էր այս ուտելիքները մեր անկողինների հետևում: Ես չգիտեմ՝ որտեղից էր նա հայթայթում հավելյալ կոճոնքներ, սակայն Բլանկան միշտ մեծ ու փոքր հրաշքներ էր գործում: Եվ այսպիսով, նրա շնորհիվ ես հաճախ ավելի ուտելիք ունեի, քան ճամբարում ուրիշները:

Պատերազմից հետո Բլանկան և ես վիճեցինք, թե արդյոք Պլազովում կայի՞ն առնետներ, թե՞ ոչ: Ես պնդում էի, թե այնտեղ առնետներ չկային: Բայց Բլանկան պնդում էր, թե ես սխալ եմ: Նա ասաց. «Այնտեղ առնետներ կային, որովհետև մի անգամ ես թաքցրել էի մի քառորդ բոքոն հաց ու երբ գնացի այն վերցնելու, այնտեղ պակասող կտորներ կային»: Վեր-

ջապէս եւ խոստովանեցի, որ դա եւ էի: Մշտապէս քաղցած լինելով՝ եւ գտել էի հացի տեղը և կերել նրա մի մասը:

ԹՎԵՐՐ ԱԵՏՔ Է ԽԱՉՎԱՐԿԵԻՆ

1943 թվականին ամեն օր բեռնատար մեքենաներով տեղափոխում կար Պլազովից ուրիշ ստրկային աշխատանքի ճամբարներ և ոչնչացման կենտրոններ: Հորս և Նորբերտին արդեն տարել էին Պլազովից, երբ քրոջս և ինձ դրեցին բեռնատար գնացքի վրա: Երբ մենք մոայլ լռությամբ նստած էինք անասուններ տեղափոխող բեռնատար գնացքում, տեղի ունեցավ փոքր հրաշք: Այն կապված էր մեզ հետ եղած բանտարկյալներից մեկի՝ մեր ընկեր Ֆրեդի հետ:

Մինչև ճամբար գնալը Ֆրեդը մերսող էր եղել: Գյոթեն՝ ճամբարի պարետը, շատ հետաքրքրված էր իր ֆիզիկական բարեկեցությամբ և Ֆրեդին ընտրել էր որպէս իր առողջական խորհրդատու: Ֆրեդն օգնում էր Գյոթեին ֆիզիկական վարժություններ կատարել և նրան մերսում էր: Դրա շնորհիվ Ֆրեդը ճամբարում դարձել էր արտոնյալ անձ: Նա գիտեր Գյոթեի օգնականներին և այլ էսէսականների, որոնց հետ Գյոթեն կապ ուներ:

Այդ օրը Ֆրեդը, որին ուղեկցում էր մի էսէսական, պատահական անցավ անասունների բեռնատար գնացքի մոտով, որում տեղավորված էինք քույրս և ես: Ֆրեդը միշտ պատրաստ էր օգտագործել իր ազդեցությունն օգնելու ընկեր բանտարկյալներին և հիմա նա տեսավ պահի հնարավորությունը: Մեր դռները դեռ չէին փակել: Այսպիսով Ֆրեդը ներս

նայեց տեսնելու, թե ում են ընտրել: Երբ նա տեսավ քրոջս և ինձ, որոշեց գործել: Նա ասաց էսէսական մարդուն, թե Բլանկան և ես կարևոր ենք բաղնիքների գործարկման համար, քանզի Ֆրեդը վերահսկում էր բաղնիքները՝ ի լրումն Գյոթեի հետ ունեցած իր աշխատանքի:

Անմիջապես էսէսականը մատնացույց արեց մեզ և կանչեց. „Raus“, «Դուրս»: Մենք անասունների վագոնից դուրս եկանք և վերադարձանք կյանք: Ֆրեդը փրկեց մեր կյանքերը, բայց մնացած մարդիկ գնացին դեպի իրենց մահը: Նրանց մեջ էր հորս քույրերից մեկը՝ հորաքույր Սիդան: Ես հիշում եմ, ինչպես երբ հետ նայեցի նրան, երբ դուրս էի ցատկում հարթակի վրա:

Նացիստները բծախնդիր հաշվարկ պահողներ էին: Նրանք միշտ ճշգրիտ գիտեին, թե քանի մարդ է դրվել ամեն վագոնում: Նախքան վագոնի դուռը փակելը նրանք ստուգում էին, թե արդյոք «թվերը» համընկնում են: Նրանց չէր հետաքրքրում, թե ով էր գնում, նրանց հետաքրքրում էր, որ թվերը ճշգրիտ լինեն:

Քանզի քույրս և ես փրկվել էինք, հաշիվը պակաս էր երկու մարդով: Այսպիսով, նացիստներն ընտրեցին երկու այլ կանանց՝ մեր փոխարեն: Պատերազմից հետո իմացա, որ այս գնացքը տարվել է Շտուտգարտ՝ Նեկար գետի վրա գերմանական քաղաք: Բոլոր բանտարկյալներին նավ էին նստեցրել և ծովում խեղդել:

ԱՓՍՈՍԱՆՔ

Ափսոսանքը միայնակ զգացմունք է
Ավելի տևական, քան վիշտը կամ հուսահատությունը,
Մեղքի և հերքման բեռներն ավելի խորն են,
Որովհետև մենք իսկապես մեր եղբայրների
պահապանն ենք...

Կախաղան հանելը

Ես օրը չեմ հիշում: Չեմ հիշում ամիսը: Նույնիսկ վստահ չեմ, թե որ տարին էր: Ես հիշում եմ միայն, որ մի օր նկատեցինք, որ նացիստները նորից կախաղաններ էին կանգնեցրել *Ապելպլացում* (Appelplatz): Մենք իմացանք, որ մի ծեր մարդ ու պատանի պետք է կախեն այս անգամ:

Արդյոք ամբողջ աշխարհը լսո՞ւմ է, թե ինչ եմ ասում: Երեխայի՛ պիտի սպանեին կախաղանի վրա: Ինչո՞ւ: Որովհետև նա կատարել էր ահավոր քրեական ակտ՝ երգելով ռուսական երգ իր մանկության օրերից:

Նացիստները բռնությամբ ստիպեցին, որ բոլոր կալանավորները դիտեն մահապատիժը: Տղային առաջ բերեցին: Նա արժանապատվորեն քայլեց դեպի կախաղանը: Դահիճը պարանն անցկացրեց տղայի վզի շուրջը և ձգեց: Մի պահ տղան կախված էր օդում, և հետո հրաշքով պարանը կտրվեց: Տղան դեռ կենդանի ընկավ գետնին:

Գուցե մեկ այլ աշխարհում, մեկ այլ ժամանակ տղայի կյանքը կլինայեին: Գուցե մեկ այլ ժամանակ դահիճները կտեսնեին Աստծու ձեռքը տղայի փրկվելու գործում: Բայց

այստեղ՝ այս աշխարհում, նման բան գերմանացիների մտքով չէր անցնում: Երգ երգելու քրեական ակտի համար տղան պետք է կախվեր: Նրան նորից պետք է կախեին:

Եվ այսպիսով, ևս մեկ անգամ այս նիհար պատանին կանգնեց տախտակամածին՝ բարձունքի վրա՝ ասես ամպերի մեջ: Այս անգամ նա խոսեց. «Ես ուրախ եմ, որ մեռնում եմ: Ինչո՞ւ տառապեմ ավելի: Ես միակն եմ, որ մնացել եմ իմ ընտանիքից: Աշխարհում ես մենակ եմ: Ինչո՞ւ ապրել: Ո՞ւմ համար: Ինչի՞ համար: Ոչ ոք չի մնացել, որ ինձ սիրում է»: Հետո նրա խոսքերը կորան քամու մեջ:

Մի քանի րոպե անց նրանք դուրս քաշեցին ծեր մարդուն: Հենց դրանից առաջ նա փորձել էր ինքնասպանություն գործել՝ կտրելով ձեռքի երակները: Ծերունին գրեթե մեռած էր: Դահիճը պիտի ուժով բարձրացներ նրան դեպի կախաղանը: Բայց թեկուզ օգնությամբ ծերունին չափազանց թույլ էր կանգնելու համար: Նա ճոճվեց և ընկավ:

Էսէսականները զայրույթից գժվեցին: Ինչպե՞ս է ծերունին համարձակվում խուսափել պատճառել նրանց մահապատժի հաճույքը: Ինչպե՞ս նա համարձակվեց ինքնասպան լինել: «Մեռած, թե կենդանի, նա կախվելու է», - տրվեց հրամանը: Այսպիսով, նրանք կարողացան ծերունուն բարձրացնել կանգուն վիճակի, զուտ այնքան ժամանակ, որ պահանջվում էր պարանոս անցկացնել նրա վզի շուրջը: Վայրկյան չանցավ, նրա մարմինն էլ միացավ տղայի մարմնին՝ ճոճվելով ամպերի մեջ:

Մեզ թույլ չտվեցին մահապատժից հետո հեռանալ *Appelplatz*-ից: Փոխարենը նացիստները ստիպեցին քայլել կախադանների շուրջը՝ դիտելու «անհնազանդության դասերը»: Մինչ մենք երթով քայլում էինք, ճամբարի նվագախումբը նվագում էր, և նացիստները ծիծաղում էին այդ ներկայացման վրա:

1969-ին՝ Պլազովի կախադաններից հետո ավելի քան քսանհինգ տարի անց, նորությունների տեսախցիկները ցույց տվեցին Իրաքում՝ Բաղդադի հանրային հրապարակում, կախված հրեաների պատկերները: Այդ պատկերները միանգամից արթնացրին Պլազովի կախվածների հիշողությունը, որը ստիպել էին դիտել: Նորից զգացի սարսափ, ցավ և անմարդկայնություն: Եվ այսպիսով, մխիթարվելու համար ես դիմեցի իմ պոեզիային և գրեցի այս բանաստեղծությունը:

ՊԼԱԶՈՎԻՑ ԲԱՂԴԱԴ

Բաղդադ վաղնջական քաղաքում

(Երբեմնի քաղաքակրթության օրրանում)

Հրեաները կախված են կախադաններից

Հանրային հրապարակում:

Արյան ծարավ ամբոխը

Շուտով հավաքվում է և ծափ գարկում,

Եվ հրեաները մեռած են:

Եղե՛լ էք երբևէ վկա

Հրապարակային կախադան հանելու.

Ես եղել եմ:
Լավ եմ հիշում
Կախված մարմինները,
Հատկապես տղայինը՝
Դեռ լիովին հասակ չառած
Եվ, իհարկե, ծերունունը,
Ա՛խ այդ ծերունին՝
Կախված ճոճվելով...

Եվ նվագախումբը նվագում էր
(Ես կարող եմ հիմա լսել այդ)
Բայց ոչ բավական բարձր,
Որ խեղդվեր ձայնը
Նրանց սրտի վերջին բաբախի:
Մոխրագույն էին դեմքերը,
Որոնց ստիպում էին նայել կախադանները,
Նայել դողացող դիակներին,
Որ տատանվում էին արյունոտ մայրամուտին:
Անուժ և ահավոր անհեթեթ նայել
Մեռած, բայց ոչ դեռ անպետք՝
Համենայնդեպս ոչ մեզ տանջողների համար,
Նրանց համար զվարճանքը նոր էր սկսել,
Եվ մենք՝ սառած սովամահներս,
Մարդկության մնացորդներս...
Մեզ հրամայված էր քայլել
Միալար՝ աչքերը հառած կախադաններին,

Երաժշտության, ծիծաղի ներքո,
Նացիստների հրճվանքի,
Նրանց զվարճանքի համար
Մենք քայլում էինք:

Ա՛խ, սա անվերջ էր,
Արևն անհետացավ,
Եվ աստղերը դուրս ելան,
Եվ մենք շարունակ երթով քայլում էինք...
Մենք սայթաքում և ընկնում էինք,
Եվ մենք աղոթում էինք մահվան համար,
Բայց երթը շարունակվում էր,
Մինչև հոգուս վրա
Պատկեր էր դաջվում.
Որը չպետք է ջնջվի
Երբեք...

Ավելի ուշ այդ գիշեր
Մեր տերերը հոգնեցին
Եվ մեզ հետ ուղարկեցին,
Այդ ամենը վերջացավ...
Բացի հոտից
Այրված մարմնի
Եվ բլրի ծխից,
Որ դեռ շարունակ մնում է,
Մնում է...

Իմ մտքում,
Իմ հոգու խորքում,
Ընդմիջտ:

Շատ տարիներ են անցել,
Բայց շատ բան չի փոխվել:
Նույն արյունոտ արևը
Շողում է անխռով
Այս անսիրտ մոլորակի վրա...
Այս աշխարհը, որն իրականում
Չի հոգում,
Այս մարդկային ցեղը
Միայն մի քիչ ամոթխած
Եվ մի քիչ տխուր...
Արագ վերածվում է
Ինչ-որ բանի, որն ավելի քիչ է զայրացնում,
Ավելի հաճելի,
Ավելի սովորական...

Գիզան

Պլազովում ես ունեի ընկերուհի, որին ճանաչում էի Տարնովից: Նրա անունն էր Գիզա: Գիզան միշտ կյանքով լի էր: Տարնովում, ուր նա տարիքից մեծ տասներեք տարեկան էր, և ես տարիքից փոքր տասնամեկամյա երեխա էի, Գիզան ժամերով ինձ պարել էր սովորեցնում՝ մեր բնակարանի միջանցքում: Նա նաև սովորեցնում էր, թե ինչպես սարքեմ

մագերս, որ ավելի մեծ երևամ: Ինչ էլ չաներ Գիզան, իմ կարծիքով, ինձ լավ էր զգացնել տալիս:

Գիզան ճամբարում չէր կորցրել իր կենսասիրությունը և ինչ-որ ձևով նա նաև կարողանում էր պահել իր լավ տեսքը: Դրա պատճառով նացիստներն ընտրեցին նրան հատուկ աշխատանքի համար: Որոշ օրեր նա կանչվում էր բարակից և տարվում պարետի տուն, տնային ծանր գործեր կատարելու՝ նախքան ճաշկերույթներն ու այլ տնտեսական գործերը:

Հիշում եմ՝ մի գիշեր անհանգիստ սպասում էի նրա վերադարձին: Ուշ էր, շատ ուշ: Ժամերով անհանգիստ էի, թե որևէ սարսափելի բան է պատահել նրան: Բայց նաև ժպտում էի ազահ ակնկալիքով: Գիզան երբեմն այդ ճաշկերույթներից վերադառնում էր գողացած համեղ ուտելիքների կոճոնքներով, որոնք նա կիսում էր բոլորիս հետ:

Որքան ժամերն անցնում էին, այնքան ուրիշներն էլ իմ բարակում սկսեցին անհանգստանալ: «Ինչ-որ բան պատահած պետք է լինի նրան», - ասաց Մանյան: Կեսգիշերից շատ անց պետք է լինի: Իմ մահճակալի վերևում պառկած կինն արթնացավ և սկսեց դժգոհել. «Բավական է, երեխաներ, քնե՛ք: Մենք պետք է վեր կենանք լուսաբացին: Մի՛ անհանգստացեք: Գիզան կարող է իրեն տեր կանգնել: Դուք գիտեք, որ պարետի տանը խնջույքները տևում են ողջ գիշերը: Նա հավանաբար հենց հիմա աշխատում է և ուտում, երբ ոչ մեկը չի նայում»:

«Ո՛չ, ո՛չ,- ընդհատեցի ես: -Նրանք բանտարկյալներին օգտագործում են կեղտոտ գործեր անելու՝ մինչև հյուրերի

ժամանելը: Գիզան միշտ շուտ է վերադառնում: Նրա հետ ինչ-որ բան պետք է պատահած լինի»:

«Բերանդ փակի՛ր, կամ ես կփակեմ», - գոռաց *Կապոն* (Kapo), (որն ավելի բարձրաստիճան բանտարկյալ էր՝ պատասխանատու բարակների աշխատախմբերի համար) բարակի հետու անկյունի իր արտոնյալ տարածքից: Մենք փնթփնթացինք, բայց հանդարտվեցինք:

Մի քանի րոպե անց դուռը բացվեց, և Գիզան հայտնվեց: Մի պահ նրա սիրունիկ դեմքը երևաց լուսնի լուսով ողողված: Նրա սև աչքերը շողում էին կրակով, ինչպես միշտ լի չարաճճիությամբ: Նրա փոքրիկ մարմինն անձայն սահեց պատի երկայնքով: Նա մազլցեց իմ կողքի անկողնուն և հանդիսավոր արարողությամբ բացեց ուտելիքի կապոցը: Ինչպիսի՛ տեսարան: Խնձորի կտոր, պինդ եփած ձու, մի քիչ պանիր: Մենք ազահաբար կերանք ամեն պատառը և սպառողական ակնկալիքով նայեցինք նրան:

«Դե՛, պատմի՛ր մեզ, պատմի՛ր մեզ: Ի՞նչ արեցիր: Ի՞նչ պատահեց: Ո՞վ էր պատվո հյուրը: Գիզան ծիծաղեց և բարձրացրեց ձեռքերը: Սպասե՛ք, կպատմե՛մ, կպատմե՛մ: Մենք ստրուկների նման աշխատեցինք, խոզանակով մաքրեցինք հատակները և քարշ տվեցինք օղիով, գարեջրով, գինիով լի արկղեր: Բայց հետո, դուք դրան չեք հավատա»: Այս պահին Գիզան իջեցրեց ձայնը և խիստ դավադիր ձայնով շարունակեց:

«Գլխավոր տնտեսուհին մատնացույց արեց ինձ և գոռաց. «Դո՛ւ, արի՛ այստեղ: *Շտա՛ւյ* (Schnell!)»: Նա հանել տվեց

իմ հոտած շորերը, անգամ կոշիկները: Հետո ինձ տվեց սև զգեստ, սպիտակ գոգնոց, սև կոշիկներ և հրամայեց լվացվել նկուղի լվացարանում և շտապ հագնվել: Դուք պետք է ինձ տեսնեիք: Ես նորից նման էի երիտասարդ կնոջ: Ինձ ազատ մարդ էի զգում: Անգամ գոգնոցն էր գեղեցիկ:

Տնտեսուհին նայեց ինձ և քմծիծաղով ասաց. «Քեզնով պետք է բավարարվենք»: Հետո նա ցույց տվեց ինձ ինչպես տանել սկուտեղը հյուրասենյակ, որտեղ մարդիկ ծիծաղում էին և խմում, մինչ սպասում էին պատվո հյուրի ժամանելուն: Հենց որ ես ցած դրեցի ծանր սկուտեղը, դռները լայն բացվեցին, և պատվո հյուրը հայտնվեց: Նորից ու նորից ես լսեցի նրա անվան կրկնվելը, երբ հյուրերը ողջունում էին նրան: Հյուրը Ադոլֆ Այխմանն էր [Էսեսի տխրահռչակ հրամանատարը, որի գործն էր կազմակերպել եվրոպական հրեաների ոչնչացումը]:

«Ես հետ գնացի դեպի սանդուղքը՝ վախենալով շնչել: Պարետ Գյոթեն մեծ հանդիսավորությամբ ողջունեց Այխմանին և սկսեց հյուրին ներկայացնել Էսեսի մյուս սպաներին: Ես կլանված դիտում էի, թե ինչպես կրունկները կտտացնում էին և գլուխները խոնարհվում՝ մինչ շքեղ հագնված տիկնայք մեկնում էին իրենց ոսկեղենով զարդարված ձեռքերը, որոնք արագորեն խլվում ու համբուրվում էին Այխմանի կողմից: Ես սարսափած ապշանքով նայում էի»:

Գիզան մի պահ կանգ առավ և ստուգեց տեսնի, թե մենք պատշաճ չափով տպավորված ենք իր պատմությամբ: «Հանկարծակի ինձ մոտ առաջացավ մի գաղափար, որ ես

կարող եմ իրագործել: Արագորեն հանեցի գոգնոցս, գլուխս հետ պահեցի ձիգ ու հպարտ: Հետո ես հանգիստ նայում էի, մինչ Այխամանը դիտում էր ինձ: Երբ նա կանգնեց իմ առջև, ես համեստորեն իջեցրի հայացքս և ժպտացի: Նա բռնեց ձեռքս, տարավ դեպի իր շուրթերը և համբուրեց: Հետո նա վեր նայեց և շնչաց. «Ուրախ եմ ծանոթանալ» (Enchantez):

Ես զարմանքով ասացի. «Դու այդպիսի բան չես արել»: «Ա՛խ, այո՛, ես արել եմ», - պատասխանեց Գիզան: «Ես ֆռոացրի նրան, որ հրեա կնոջ ձեռք համբուրի»: Գիզայի ծիծաղն այնքան վարակիչ էր, որ բոլորս միացանք նրան: Հաճախ չէր պատահում, որ մենք ծիծաղելու առիթ ունենայինք:

Մենք այնքան էինք տարված ծիծաղով, որ չզգացինք, թե ինչպես դուռը շրիկոցով բացվեց, և երկու էսեսական ներս մտան մեր բարակը: Մենք ցատկեցինք մեր անկողիններից և արագ ողջունեցինք նրանց, ինչպես մեզ վարժեցրել էին անելու: Բայց նրանք հազիվ թե նկատեցին: Նրանք խոսեցին Կապոյի հետ, որը մատնացույց արեց մեր ուղղությամբ: Հետո նրանք ուղղվեցին դեպի Գիզան: Առանց խոսքի՝ էսեսականները բռնեցին Գիզայի թևերի տակից և դուրս քաշեցին նրան: Դուռը նրանց հետևից փակվեց, և մի պահ անց լսեցինք մեկ կրակոց:

Ա՛խ, իմ քաղցր, խիզախ ընկերուհի, ես ճչացի անձայն: Իմ սիրելի, հոգատար, խիզախ ընկերուհի, այնքան երիտասարդ ու գեղեցիկ, այնքան անմեղ ու այնքան առատաձեռն: Իմ թանկագին ընկերուհի, Գիզա՛, Աստված հոգիդ լուսավորի:

Պլագովի վերջը

1944-ի մարտին նացիստները հավաքեցին հունգարական հրեաներին և նրանց ցրեցին ողջ Եվրոպայի ստրկական աշխատանքային ճամբարներն ու մահվան կենտրոնները: Հենց որ հունգարական հրեաները լցվեցին Պլագով, ճամբարի պայմանները շատ վատացան: Գերբնակեցումը հանգեցրեց ավելի շատ հիվանդությունների և ավելի քիչ սննդի: Եվ թվում էր, թե նացիստներն ավելի քան երբևէ շտապում էին սպանել բոլորին, ում համարում էին ապրելու համար անպետք: Ես հիշում եմ բժշկին, որը գիշերվա կեսին գալիս էր մահվան հրեշտակի պես սև պարեգոտ հագած: Նա ուներ սրսկելու ասեղ: Իմ բարակում կար մի կին, որը զկոտում էր: Մահվան բժիշկը սրսկեց և սպանեց այս կնոջը:

1944-ի ամռանը նացիստները սկսեցին աշխատանքների անել ճամբարը կազմալուծելու նպատակով: Միևնույն ժամանակ նրանք սկսեցին տեղափոխել բանտարկյալներին այլ ճամբարներ կամ մահվան կենտրոններ: Սեպտեմբերին, երբ խորհրդային բանակը արևելքից մտավ Լեհաստան, նացիստները փորձեցին վերացնել Պլագովում իրենց կատարած բոլոր զարհուրելի ոճրագործությունների բոլոր հետքերը:

1944-ի դեկտեմբերին, երբ հրամաններ եկան լքել Պլագովը, մեզնից կենդանի մնացածները (մոտ 600 հոգի) պատրաստություններ սկսեցին տեսնել՝ ստիպողական քայլելու Օսվենցիա: Շաբաթներով մենք կուտակում էինք ուտելիք և որոնում ճամբարում թափած հագուստ: Հիմա մենք ծածկե-

ցինք մեր հյուծված մարմինները քրջերի շերտերով և մեր գրպանները լցրեցինք ուտելիքով: Վերջապես հրամաններ եկան լքելու: Այսպիսով, վերջացավ Պլազովում մեր բանտարկության մեկ տարի ինն ամիսը:

Հուշերի դրվագները, որ ես գրառել եմ 1946-ին, վերջանում են այստեղ՝ 1944-ի դեկտեմբերին Պլազովից մեր քշվելու հետ: Չնայած այդ ժամանակ չգիտեինք, վատթարը դեռ առջևում է:

5 *ՕՍՎԵՆՑԻՄ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԴՈՒՐՄ Հունվար 1945*

Օսվենցիմը¹ նացիստների ամենանամեծ համակենտրոնացման և մահվան ճամբարը, գտնվում էր Լեհաստանում՝ Օսվենցիմ քաղաքի հարևանությամբ, Կրակովից արևմուտք 37 մղոն հեռավորությամբ: Կառուցված 1940-ին՝ այն սկզբում գործում էր որպես քաղաքական բանտարկյալների ճամբար: Սակայն Օսվենցիմի գործունեությունն ու կարողությունը 1942-ի մարտին ընդարձակվեցին, երբ նացիստներն ավելացրին ճամբարի երկրորդ՝ շատ ավելի մեծ հատվածը: Այն կոչվեց Օսվենցիմ II կամ Բիրկենաու (Birkenau): Օսվենցիմի սպանության կենտրոնի գազախցիկներն ու դիակիզարանը գործարկվում էին Բիրկենաուում:

Լեհաստանում՝ մոտակա լեհական քաղաք Մոնովիցում, նացիստները հիմնեցին երրորդ ճամբարը՝ Օսվենցիմ III, որը նույնպես կոչվում էր Բունա-Մոնովից: Օսվենցիմ III-ը հարկադիր աշխատանքի ճամբար էր: Դրա բանտարկյալներին՝ հիմնականում հրեաներին, բառացիորեն աշխատեցնում էին մինչև մահ: Օսվենցիմ I-ի գլխավոր մուտքի վերևի մեծ մակագրությունը ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր մտնում

¹ Օսվենցիմ համակենտրոնացման ճամբարն անգլերեն կոչում են Auschwitz: Քանզի հայերենում ընդունված է այն կոչել Օսվենցիմ, թարգմանության մեջ օգտագործվել է այդ տարբերակը:

Էին ճամբար: Գրությունն ասում էր. „Arbeit macht frei“ (*«Աշխատանքը կազատի ձեզ»*): Մակագրությունը զավեշտ էր: Օսվենցիմում աշխատանքը, եթե դու դրա համար ընտրվել էիր, նշանակում էր միայն մի բան՝ դանդաղ և սարսափելի մահ:

1944-ի դեկտեմբերին հենց որ սկսեցինք մեր երթը դեպի Օսվենցիմ, նացիստներն ապամոնտաժեցին գազախցիկների և դիակիզարանների տեխնիկական սարքավորումները: Չնայած մահվան այդ սարքավորումները մեր հասնելու պահին Օսվենցիմում այլևս չէին գործում, սպանությունները կանգ չէին առել: Նացիստները պարզապես վերադարձան սպանության ավելի քիչ արդյունավետ մեթոդների՝ ծեծին, մտրակելուն, ստրկական աշխատանքին, կրակոցներին և կախաղան հանելուն:

Օսվենցիմ՝ լուռ ասացեք այդ բառն ինքներդ ձեզ: Շշնջացեք այն, եթե համարձակվում եք: Անգամ այսօր, ընդամենը Օսվենցիմի հիշատակումը՝ այդ անունը, այդ բառը, աչքի առաջ է բերում խավարի, այրման, մահվան և ոչնչացման պատկերներ: Պլագովում քույրս և ես լուրեր էինք լսել Օսվենցիմի մասին, բայց մենք դեռ կառչում էինք այն մեծ ստին, «վերաբնակեցնում են» այնտեղ, որ գերմանական Ռեյխի համար աշխատենք: Իհարկե, սրտի խորքում Բլանկան և ես գիտեինք, որ սա ճշմարտություն չէ, բայց ինչպե՞ս կարող էինք գոյատևել, եթե լսեինք ճշմարտության սրտմաշուկ ձայնը: Եվ այսպիսով, մենք ինքներս խաբում էինք մեզ: Խաբում էինք կենդանի մնալու համար:

Ես դեռ հիշում եմ «երթը» դեպի Օսվենցիմ: Տարիներ անց ես ասացի, որ Օսվենցիմը Պլազովից եղել է քայլելու հեռավորության վրա: Ոչ ոք, բացի Բլանկայից, չհասկացավ, թե ես իրականում ինչ նկատի ունեի: Մեր երթը մեզ տարավ Կրակովի փողոցներով: Դա համարյա Սուրբ Ծննդյան ժամանակներն էին, և սարսափելի ցուրտ էր: Հիշում եմ. ամեն ինչ վատ էր: Մարդիկ տեսան մեզ, բայց ոչ ոք օգնություն չառաջարկեց: Ոմանք շեղում էին հայացքը: Մյուսները նայում էին մեր միջով, կարծես մենք այնտեղ չէինք: Ինչ-որ առումով մենք այնտեղ չէինք: Մենք այլևս ապրողների երկրում չէինք:

Ինչպե՞ս կարող եմ նկարագրել Օսվենցիմը նրանց, ովքեր այնտեղ չեն եղել: Վերստին լեզուն դավաճանում է ինձ: Նացիստների նվաճած Եվրոպայի բոլոր կողմերից մարդիկ ժամանում էին անասունների տեղափոխման բեռնատար գնացքներով: Գնացքները ժամանում էին Բիրկենաուի երկաթուղային կառամատույցներում: Դաժան հսկիչներն ու էսեսականները կատաղած շներով ստիպում էին բանտարկյալներին շտապով իջնել գնացքից: Անարգանքները, հայիռյանքը, գոռոցները և անվերջանալի ստորացումները վիրավորում ու բթացնում էին մեր զգացմունքները: „Schnell! Schnell!“, - բղավում էին նրանք: «*Արագ: Արագ: Շարժվե՛ք: Շարժվե՛ք: Կազմե՛ք երկու շարք՝ կանայք և տղամարդիկ առանձին*»:

Շարքերն անցնում էին էսեսի սպաների առջևից, որոնք դեկավարում էին *ընտրությունը* (Selektion), մի կողմ ուղարկելով նրանց, որոնք աշխատանքի պիտանի չէին, և դեպի

մյուս կողմ նրանց, որոնց մեջ դեռ որոշ կյանք կար բռնի աշխատանքի համար: Բոլորը տառապանքից գոռում էին:

Փշալարի հետևում բանտարկված տղամարդիկ իրենց ձայները միացրին մեզ՝ կարևոր նորություն լսելու իրենց սիրելիների մասին: Նրանք բարձրաձայն ասում էին իրենց ծնողների, երեխաների, եղբայրների և քույրերի անունները: Նրանք դա անում էին ճամբար մտնող ամեն նոր գնացքով փոխադրվողների ժամանակ: Այս մարդկանցից ոմանք հացի կտորներ էին շաքտում փշալարի վրայից, և մենք ճանկում էինք ուտելիքը: Նրանց կարոտի ճիչերը և մեր սարսափի աղաղակները դառնում էին անմարդկային ձայների մի երգչախումբ, որ լցնում էր տիեզերքը: Բայց ոչ ոք չէր լսում այդ սարսափելի ձայները, մեզնից բացի: Գիտեմ սա ճշմարիտ է, որովհետև ոչ ոք չէր պատասխանում: Մենք աշխարհի կողմից լքված էինք:

Շատ ցուրտ էր, երբ ժամանեցինք Օսվենցիմ. ցուրտ էր և խոնավ: Ես հստակ չեմ հիշում դեպքերի հերթականությունը, բայց Բլանկան և ես պետք է անցած լինեինք առաջին ընտրությունը: Ես գիտեմ, որ մեզ տարան ճամբարի ցնցուղները՝ ոջլահան անելու նպատակով: Ոջլահան անելուց հետո Բլանկային և ինձ հերթ կանգնեցրին, որ մեր գլուխները սափրեն և մեր ձախ թևին համարներ դաջեն՝ սրանք մեր «նոր անուններն» էին: Բայց հենց այս օրը՝ մեր հասնելու օրը, նացիստների սովորական արդյունավետությունը խախտվել էր: Անչափ շատ նոր բանտարկյալներ կային և անչափ քիչ սափ-

րողներ և դաջողներ: Այսպիսով, Բլանկան և ես չունենք դաջված համար, և մեր մազերը երբեք չխուզեցին:

Մենք երկար չմնացինք Օսվենցիմում: Ինչպես ասել եմ, Գերմանիան այդ ժամանակ արդեն տանուլ էր տալիս պատերազմը, և խորհրդային բանակը լայնահարձակ հարված էր ծավալում Կրակովի և Օսվենցիմի ուղղությամբ: Այսպիսով, 1945-ի հունվարին նացիստներն սկսեցին դատարկել Օսվենցիմի ճամբարները: 58.000 բանտարկյալներ քշվեցին Օսվենցիմից Գերմանիա և Ավստրիա ուղարկվելու նպատակով: Այդ վայրերում մահվան գործարանները ժամանակավորապես մնացել էին անհասանելի դաշնակիցների համար: Քույրս և ես քայլող մեռնողների մեջ էինք, որոնց քշեցին և բռնությամբ տանում էին հիմա առասպելական դարձած մահվան երթի:

Տարիներ անց ես իմացա, որ մեր՝ Օսվենցիմից հեռանալուց տասն օր անց խորհրդային բանակը հասել է ճամբարին: Միայն մի քանի օր, և մենք փրկված էինք: Բայց դա մեր ճակատագիրը չէր: Փոխարենը մենք քայլում էինք ու քայլում: Գլխումս ես հորինեցի բանաստեղծություն:

ՄԱՀՎԱՆ ԵՐԹ

Գիշեր... Բուք...

Նրանց արյունը դեռ տաք

Լցվում է ձյան մեջ:

Նրանց մարմինները սարսռում են

սառած հողի վրա,

չնկատելով մտրակող ցավի
հոսանքը,
նրանց անկյանք շուրթերը
հիմքն են այս վերջնական դժոխքի:
Լուսաբացին
նրանք հազիվ հառաչում են
լուռ. „*Sh'mah – Israel*”²:

Եղանակը շատ ցուրտ էր, և գրեթե ամեն օր ձյուն էր գալիս: Մենք հագած էինք թեթև քրջեր, և մեզ չէին տալիս ո՛չ ուտելիք, ո՛չ ջուր: Մենք գոյատևում էինք ձյան հաշվին և սնվում նրանով, ինչ կարող էինք ձեռք բերել հողից՝ արմատներ և դաշտերում մնացած փտած կարտոֆիլ:

Գետինը ոտքերի տակ սայթաքուն էր և սառցակալած: Շատ մարդիկ սայթաքում էին ու ընկնում և այլևս չէին կարողանում բարձրանալ: Ոմանք ուժասպառ էին լինում խիստ հոգնածությունից: Անպետք համարելով այս ողորմելի մարդկանց՝ նացիստ հսկիչները կոպտորեն քացիով զցում էին ընկած մարմինները ճանապարհի երկայնքով փորված խրամատների մեջ: Ամեն օր մեր տեսած դիակների քանակն աճում էր: Մենք աղոթում էինք, որ մեր կյանքերն ավարտվեն արագորեն՝ հրազենի գնդակից, փոխանակ խրամատներում մեռնելուց:

² „*Sh'mah – Israel*” – հրեա ժողովրդի սրբազան հինավուրց աղոթքը, որը հոլովում է Աստծու եզակիությունը:

Մի գիշեր քնեցինք ծղոտի մարագում: Այնքան հրաշալի էր տաքության զգացումը: Ես հանեցի իմ թրջված կոշիկները: Ա՛խ, ինչպիսի սխալ: Երբ ժամանակն եկավ կոշիկներս նորից հագնելու, ոտքերս այնպես էին ցրտահարվել և ուռել, որ կոշիկներս այլևս չէին մտնում: Ստիպված Բլանկան պատռեց կոշիկի վերնամասը ներբանից և փալասներով կոշիկները կապեց իմ փայտացած, արնահոսող ոտքերին:

Հսկիչների մեծ մասը ձի էր հեծած: Մենք հանգստանում էինք միայն, երբ նրանք հոգնում էին կամ շատ հարբած էին, որ շարժվեին: Այդ պահերին մենք պառկում էինք, որտեղ որ կանգնած էինք: Ես այլևս չէի կամենում վեր կենալ: Բայց Բլանկան ինձ թույլ չէր տա մեռնել ձյան մեջ: Այդժամ ես նրան ատում էի դրա համար: Ես միայն ուզում էի հանգստանալ:

Մեկ ուրիշ գիշեր հսկիչները մեզնից ոմանց թույլատրեցին քնել լքված գործարանում: Մենք մազլցեցինք տանիքի տակի հարկը և ուժասպառ փլվեցինք: Երբ ժամանակն էր նորից շարժվելու, լսեցինք հսկիչների սարսափելի սուլոցներն ու գոռոցները՝ «Raus! Raus! (*«Ղո՛ւրս: Ղո՛ւրս»*): Գնացե՛ք: Շարժվե՛ք»: Մենք դուրս վազեցինք: Մյուս բանտարկյալներն այնտեղ չէին: Մինչ մենք քնած էինք եղել, նրանք շարունակել էին քայլել: Եվ այսպիսով, բանտարկյալների խումբը մեզնից առաջ էր ընկել: Չգիտեինք ինչ անել, ինչպես հասնել առաջ ընկածներին: Հսկիչները տեսան մեր շփոթմունքը: Նրանք ասացին. «Նայեք, դուք միայն մի բուռ եք: Եթե ուզում եք այստեղ մնալ և թաքնվել, առաջ անցեք: Մենք ձեզ թույլ կտանք»:

Ես անսահմանորեն ուզում էի մնալ: Այս երկարատև տանջալի իրողության մեջ ես կլանված էի եղել փախչելու, թաքնվելու, հանգստանալու, միայնակ լինելու ցանկությամբ: Բայց քույրս չէր վստահում հսկիչներին: Նա բռնեց ձեռքս և քաշեց ինձ մեզնից առաջ ընկածների ուղղությամբ: Ես շարժվում էի ռոբոտի պես՝ խիստ անզգայացած պայքարելու համար: Ուշացածներից ոմանք նախընտրեցին մնալ: Մինչ մենք առաջ էինք քայլում, ես շրջվեցի՝ երանավետությամբ նրանց նայելով: Հետո լսեցինք կրակոցներ: Հսկիչները նրանց բոլորին սպանել էին: Վստահությունը մահապատժի էր արժանացել:

Մի ցուրտ և քամոտ առավոտ, երբ սկսվեց մեկ այլ տաժանակիր օր, հսկիչները սովորականի պես ուշադիր չէին: Այսպիսով, կանանց մի փոքր խումբ աննկատ հեռացավ՝ ուտելիք որոնելու: Մենք նրանց տեսանք ճամփեզրին ձեռքերով հողը փորելիս, որ գտնեն մի քիչ կարտոֆիլ կամ շաղգամ, որ կարող էր թաղված լինել ձյան տակ: Ես հուշիկ մոտեցա, որ տեսնեմ, թե ես էլ կարող եմ «բախտավորվել», բայց ես պարզապես չէի կարող անցնել այս քաղցած մարդկության զանգվածի միջով:

Հանկարծակի լսեցի մի ծանոթ կանացի ձայն: Ապշահար սկսեցի փնտրել, թե որտեղից էր գալիս այդ ձայնը: Այս ձայնը Ռոմեկի մոր ձայնն էր: Ռոմեկը գետտոյից մի տղա էր, որ Պլազովում մեզ հետ էր եղել: Ես լավ լուր ունեի նրա մորը հայտնելու: Ռոմեկը կենդանի էր, երբ մենք լքեցինք Պլազովը:

Իրականում Ռոմեկը նույնիսկ կարող էր լինել այս երթի անհամար զոհերի մեջ:

Շտապով ես վազեցի դեպի Ռոմեկի մայրը: Ես նրան հասա, ես ամբողջ մարմնով դողում էի: Ես բռնեցի նրա ուսերը և ցնցեցի նրան՝ ճչալով. «Ինձ չե՞ք ճանաչում: Ես Սոնյան եմ՝ Ռոմեկի ընկերուհին»: Ռոմեկի մայրն ինձ նայեց խենթությամբ և դատարկ հայացքով: «Ինձ լսե՛ք,- պնդեցի ես: -Չե՞ք ուզում իմանալ, թե ինչ է պատահել ձեր որդուն, ձեր որդի Ռոմեկին՝ ձեր միակ որդուն»:

Նա թոթափեց ուսերը և ինձ հրեց, կարծես թե ես տարօրինակ միջատ էի: Ջարդված ատամների և ճաքճքած շրթունքների միջից հնչեց նրա սուր և խռպոտ ձայնը. «Հեռացի՛ր ինձանից», - ճչաց նա: «Հեռացի՛ր, թե չէ կրզկտեմ կամ խեղդամահ կանեմ»:

Ռոմեկի մայրը ֆշացրեց ու հարձակվեց ինձ վրա՝ միաժամանակ հարվածելով մյուս կանանց: Նրա սրունքներն այնքան ուռած էին, որ համարյա մարմնի կրկնակի չափի էին: Նրա ոտքերն արնահոսում էին կեղտոտ փալասների միջից: Իր ձեռքերում բռնած էր ինչ-որ անհայտ ուտելիքի կոճոնքներ: Ես հետ գնացի և վազեցի: Ես մտածեցի. «Արդյոք Ռոմեկի մայրը իմ սեփական արտացոլանքն էր: Արդյոք ճամբարները մարդկանց այսպիսին են դարձնում»: Մի միտք ծագեց գլխումս, ու ես սարսռացի: «Որքա՛ն կարող էինք կորցնել մարդու կերպարանքը: Արդյոք վերջ չկա մեր թշվառության չափերին»:

Յուրտ սարսուռը վեր ու վար արեց ողնաշարովս, մինչ մտածեցի անհավատալին: Արդյոք իմ սիրելի մայրը դարձե՞լ էր այս կնոջ նման, թե՞ նրան սպանել էին, մինչև անասուն դառնալը: Այդ պահին ես իմ ողջ սրտով հուսացի, թե նրան Բելզեկ մտնելուց հետո շատ շուտ սպանել էին: Ես համոզեցի ինձ, որ սա է ճշմարտությունը: Այդ համոզմունքի մեջ կար ինչ-որ տարօրինակ բավարարվածության զգացում: Մի քիչ ձյուն կերա և առաջ անցա:

Մի օր նկատեցի, որ ձեռնոցներս չկան: «Բլանկան ինձ կսպանի», - մտածեցի ես: Պլագովի մեր ընկեր Ֆրեդն էր տվել այդ ձեռնոցները՝ ձեռքերս պաշտպանելու համար: Ու հիմա ես դրանք կորցրել էի: Կամ գուցե որևէ մեկը գողացել էր դրանք: Ես լաց եղա, և արցունքներս թափվեցին ձյան մեջ: Ես նայում էի, թե ինչպես ձյունը հալվեց և նորից սառեց: Հետո ծամեցի սառույցը և լաց եղա: Ես լացեցի մորս, ինձ, Բլանկայի՝ մեր բոլորի համար: Բայց ամենից շատ ես լալիս էի կորած ձեռնոցներիս համար:

Ես նստեցի՝ հուսալով, թե Բլանկան կարող էր չնկատել: Բայց Բլանկան, ինչպես միշտ, նկատեց: Նա ինձ ոտքի կանգնեցրեց և շփեց ձեռքերս, մինչև նրանք անզգայությունից մի փոքր հետ եկան: Հետո սայթաքուն ճանապարհին շարունակեցինք քաշել մեկս մյուսին:

Շատ օրեր անց հսկիչները գտան անասունների տեղափոխման ապրանքատար գնացք: Մեր երթն ավարտվեց: Անասուններ տեղափոխող վագոնները տանիքներ չունեին, և շուտով մեզ պատեց ձյան ծածկոցը: Ինչ պատկեր դա ստեղ-

ծեց՝ անտեսանելի մարմիններ՝ թաքնված ձյան բլրաձև ալիքների տակ: Չարմանալիորեն ձյունը մեկուսացրեց մեզ ցրտից՝ տալով մեզ ինչ-որ չափով ջերմություն:

Անասունների վագոններում մեզ օրապահիկ չէին տալիս: Այնպես որ ձյունը մեր միակ կենսամիջոցն էր: Մենք ուտում էինք ձյունը և թողնում էինք հալչելու մեր թանկագին մետաղե գավաթներում, որ կարողանայինք խմել այն: Երբ սահմանն անցանք, Չեխոսլովակիայում կային որոշ մարդիկ – ազարակատերեր, որոնք վտանգեցին իրենց կյանքը՝ մոտենալով մեր անասնատար վագոններին: Նրանք մեզ շարտեցին կարտոֆիլի և աղի փոքրիկ տոպրակներ: Մենք դրանով ահագին ապրեցինք: Ցանկանալով պատվել այս մարդկանց՝ ես հետագայում գրեցի:

ԱՆԲԱՍԻՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ³

(The Righteous Gentiles)

Այնտեղ, ուր խավար էր գրեթե կատարյալ,
մեր հոգիները պարտված ու ջախջախված...

Հաշմված մարմինների մարդկային բեռը
շտապում էր դեպի սպանդը: Առանց ուտելիքի

կամ ջրի,

ապրանքատար գնացքներով, սառեցնող անձրևներով՝
մոռացված, մենակ, բացի քչերից, որոնք
պարզապես հոգում էին, ինչ-որ ձևով հանդգնում
բավական մոտենալ՝ օգնելու հրեային...

³ Հրեաները ոչ հրեաներին կոչում են Gentiles:

Սրանք քրիստոնյա գյուղացիներ էին,
որոնք երբեմն նետում էին
հում կարտոֆիլի տոպրակներ
Վազոնների մեջ անասունների,
հուսաբեկ վհատների
երկաթե ճաղերի միջով...

Վերջապես գնացքը հասավ Գերմանիա: Գերմանիա-
յում շարունակ կանգնեցնում էին գնացքը՝ տեղ փնտրելով
մեզնից ազատվելու համար: Բայց բոլոր ճամբարները լիքն
էին: Ի վերջո մեզ ընդունեցին Բերգեն – Բելզենում (Bergen -
Belsen):

6 *ԲԵՐԳԵՆ – ԲԵԼՉԵՆ ԵՎ ՎԵՆՈՒԶԲԵՐԳ Փետրվար – ապրիլ, 1945*

Բլանկայի ու ինձ համար Բերգեն – Բելգենում շատ ավելի վատ էր, քան Օսվենցիմում: Հսկիչները երեք հարյուր հոգուս խցկեցին բարակներ, որոնցում տեղ կար մոտ 50 հոգու համար: Մենք չունեինք ոչ վերմակներ, ոչ մահճակալներ, ոչ ուտելիք, ոչ տարածք, ոչ գուգարաններ: Մա հիանալի հող էր տիֆի և այլ հիվանդությունների համար, որոնք բարգավաճում էին հակասանիտարական պայմաններում:

Բոլորը Բերգեն – Բելգենում տիֆով հիվանդ էին: Շուտով մեր բարակները դարձան հիվանդության կենտրոն: Ամեն օր Կաօ-ները մտնում էին մեր բարակները՝ դիակները թափելու: Երբեմն նրանք թափում էին մարդկանց, որ դեռ կենդանի էին: Այդ բարակներում կյանքի և մահվան միջև եղած սահմանն աննկատելի էր: Հաճախ մենք ինքներս չգիտեինք, թե որ աշխարհին ենք պատկանում:

Ուրիշ բաներ էլ եմ հիշում Բերգեն – Բելգենից: Հիշում եմ նորեկներին: Այո՛, անգամ պատերազմի վերջին օրերին նացիստները հավաքում էին հրեաներին ողջ Եվրոպայից և նրանց ուղարկում էին ճամբարները: Մենք՝ փորձառու գոյատևածներս, վայրկենապես ճանաչում էինք նորեկներին: Դա դժվար չէր: Նորեկներն առողջ տեսք ունեին: Նրանք մազեր ունեին: Նրանք հագած էին փողոց դուրս գալու

զգեստներ, այն հագուստը, որ հագած էին, երբ իրենց բռնեցին: Նրանք դեռ ապրողների աշխարհում էին:

Ես հիշում եմ, թե ինչպես էի լսում նրանց լեզուներն ու երգերը: Շատերն իրենց հայրենիքի և ընտանիքների կարոտի երգերն էին երգում: Իտալացի աղջիկներն իրենց մայրենի լեզվով երգում էին «Մամա»: Դա սրտակեղեք էր, որովհետև գիտեինք՝ նրանք շուտով մեռած կլինեն: Նրանք մեր փորձը չունեին՝ մեր գոյատևելու փորձառությունը:

Իրականում շատ դասեր կային սովորելու: Օրինակ, որպես փորձառու գոյատևողներ մենք գիտեինք, որ լավագույն տեղը ներկա – բացակայի ժամանակ կենտրոնն էր, հեռու էսէսի ատրճանակներից և մտրակից, բայց մոտ մյուս զոհերին, որոնք կարող էին քեզ բռնած պահել, եթե կորցնեիր գիտակցությունդ: Մենքի համար էլ մենք գիտեինք, որ լավագույն տեղը վերստին շարքի մեջտեղում էր: Առջևում կանգնածները հաճախ ստանում էին դուլլի վերևի ջրալի նյութը: Շարքի վերջինների համար կարող էր ոչ մի ուտելիք մնացած չլինել: Ո՛չ, միայն շարքի մեջտեղում էր, որ մարդը լավագույն հնարավորություն ուներ որոշ սնունդ ստանալու: Նորեկներն այս գաղտնիքներից ոչ մեկը չգիտեին: Եվ այսպիսով, ժամանակի ընթացքում մենք դիտում էինք, թե ինչպես էին նրանք մեռնում կարոտից, վախից, տանջանքից, քաղցից:

Մի գիշեր մեզնից մի քանիսը սողոսկեցին գերմանացիների բնակվելու հետնամասը՝ աղբից ուտելիք հանելու: Ես մտածում էի՝ որքան խիզախ եմ ես: Բայց ես խիզախ չէի: Ես

հուսահատ էի: Եվ հուսահատությունը երբեմն հանգեցնում է անխոհեմության: Եթե բռնվեինք, մեզ կգնդակահարեին:

Ես արդեն նշել եմ, որ ամեն ճամբարի ամենասարսափելի սոսկումներից մեկը *ներկա – բացական էր*: Ներկա – բացական մեզ համար նորությունն չէր: Մենք այդ փորձն ունեինք Պլազովից և Օսվենցիմից: Հիմա՝ ևս մեկ անգամ, մեզ ստիպում էին տոկալ անվերջ ժամեր՝ անշարժ կանգնելով, մինչ հսկիչները հաշվում էին մեզ: Եթե համարները չէին համընկնում, նրանք նորից ու նորից հաշվում էին, մինչև ճամբարի պարետը բավարարվեր, որ բոլոր բանտարկյալները հաշվված էին: Ցնցոտիներով ծածկված՝ մենք պաշտպանություն չունեինք սառույցից, քամուց կամ ձյունից: Մենք թույլ էինք, քաղցած և սարսափելի հիվանդ: Բայց հինգով կանգնած պահում էինք մեկս մյուսին:

Բերգեն – Բելգենում մենք աշխատանք չունեինք: Որքան տարօրինակ է, որ մեր աշխատանք չունենալն ավելի մղձավանջային վիճակ էր ստեղծում: Մեր «աշխատանքը», չնայած իր դաժանությանը այլ տեղերում, մեզ բնորոշում էր: Նրա շնորհիվ մենք պատկանում էինք ապրողների աշխարհին: Բայց Բերգեն – Բելգենում մենք չէինք աշխատում: Մենք նեխում էինք: Անվերջանալի օրեր և գիշերներ, սառած ու սոված, մենք պպզած էինք մեր բարակների խոնավ հատակին: Պպզելը միակ դիրքն էր, որ հնարավորություն էր ընձեռում մի փոքր տարածք ունենալու: Երբ մենք պպզած չէինք, մենք շարքով կանգնած էինք՝ սպասելով, որ մեզ նորից ու նորից

հաշվառեն *Appelplatz*-ում: Բերգեն – Բելգենը կենդանի-մե-
ռածների մղձավանջն էր:

Ցավից անզգայացած՝ տրվում էի երևակայությանը:
Հաճախ իրականությունից վերանալու համար ես գլխումս
բանաստեղծություններ էի գրում:

ՍԱՌՑԵԼՈՒԼԱ

Քամին դաժան է, անձրևը սառցե:

Ես դողում եմ՝ մեկնելով բռունցքներս դատարկ,

Ստամոքսս գալարվում է քաղցի ցավերից...

Քաղցը ո՛չ անտանելի.

Նա բթացնում է խելքս, միտքս պտտում...

Հայացքս մթագնում է, շատ հաճելիորեն

Ես դողում եմ, լալիս և բավական ինձնից անջատված

Ես դիտում եմ ինձ: Քնա՞ծ եմ արդյոք,

Թե՞ հիմա մեռածների շարքում:

Եվ այնուհանդերձ ես գիտեմ, որ կենդանի եմ, գիտեմ,

Քանզի իմ ոսկրե այտով

Արցունք է հոսում, արագ սառույց դառնում,

Ինչ լավ է, ինչ լավ է հիշել... տեսնել,

Ես տեսնում եմ սառցելուլաներ... և ինձ,

Փոքրիկ աղջնակ, լուսամուտի գոգ

Ու եղյամ կապած լուսամուտի ապակուն...

(և ճամփին մի ընկեր)

Մորս ձայնը, ուտելիքի բույրը,

Հորս ծիծաղը տարածված օդում:

Ես հառաչում եմ՝ աչքերս հառած... քամին քշեց տարավ

Երազներս՝ թողնելով միայն դատարկություն:

Սառցելուլաները հիմա շրթունքներս են այրում,

Դրանք աղ են դառնում, ճիշտ է

Չկան «դառն արցունքներ»,

Քանզի արցունքները... և արյունը... քրտինքն էլ...

Բոլորն աղի են, թթու,

Իսկ դառնությո՞ւնը, դառնությունը,

Որն ապրում է իմ սրտում:

Ես մրսում եմ, քաղցած եմ, խոցված...

Արդյոք որևէ մեկը գիտի՞ ես կամ,

Արդյոք որևէ մեկը հոգո՞ւմ է, թե ես կամ:

Բերզեն – Բելզենում մի քանի շաբաթ անցկացնելուց հետո մենք լսեցինք, թե մի բեռնատար գնացքով մարդ են տեղափոխելու ուրիշ ճամբար՝ աշխատանքային ճամբար: Մենք տենչում էինք լինել այդ բեռնատար գնացքի վրա: Այս պահին Բլանկան արդեն տիֆով հիվանդ էր: Բոլորս գիտեինք, որ էսեսականները տիֆի զոհերին չէին ընդունի բեռնատար գնացքի համար: Հետևաբար Բլանկան իրեն կամքով ստիպեց առողջ երևալու, որպեսզի կարողանար թաքցնել իր հիվանդությունը հսկիչներից: Հրաշքով նա անցավ ընտրությունը՝ ինձ և 30 այլ կանանց հետ:

Շատ քիչ մարդիկ վերապրեցին Բերզեն – Բելզենը: Հետևաբար բեռնատար գնացքը հավանաբար փրկեց մեր

կյանքերը: Մյուս կողմից էլ, եթե մնացած լինեինք Բերգեն – Բելգենում և եթե կարողացած լինեինք մի քիչ ավելի գոյատևել, մեզ կազատագրեին բրիտանացիները: Կային այնքան շատ «կարող էր պատահած լինել», ա՛խ, այնքան շատ «ինչ կլիներ, եթե»: Ճակատագրի այս խաղերը կեղեքում էին Հոլոքոստի բոլոր վերապրածներին, որովհետև գոյատևելը միայն կույր բախտի հետևանք էր՝ հստակ և պարզ:

Երբ մենք մտանք անասուններ տեղափոխող գնացքը, ես հասկացա, որ քույրս կարող է մեռնելու մոտ լինի: Այդ ժամանակ ես տասնվեց ու կես տարեկան էի, բայց տարիքը նշանակություն չուներ այս ուրիշ աշխարհում: Ես միաժամանակ իմ տարիքից անչափ մեծ էի, անչափ ջահել: Երբ ես հասկացա, թե կարող եմ կորցնել Բլանկային, վախից լաց եղա: Ինչպե՞ս կարող էի գոյատևել առանց նրա: Նա իմ փրկողակն էր, իմ փրկիչը, մայրս, հայրս, քույրս, ընտանիքս: Եվ ես անասելի ձևով սիրում էի նրան:

Բարեբախտաբար ինձ օգնողներ կային՝ Մելման, Լոլան և Էդգիան: Հեշտ չէր ընկերանալ ճամբարներում, բայց ինչ-որ ձևով այս երեք կանայք, Բլանկան և ես հենց դա էլ իրականացրինք՝ դարձանք ընկերներ: Մենք հավատում էինք, թե որքան բազմաքանակ լինեինք, այնքան լավ կլիներ, հետևաբար հետևում էինք իրար: Այս երեք կանայք օգնեցին փրկել Բլանկայի կյանքը:

Ապրանքատար վագոններն այնքան խցկված էին ուրիշ ճամբարներից փոխադրվող մարդկանցով, որ նրանք բառացիորեն պետք է իրար վրա պառկեին, ինչպես դարակի

վրա դարսված պահածոյի տուփեր: Բայց անհնար է, որ մարդիկ գոյատևեն այս վիճակում առանց շնչահեղձ լինելու: Այսպիսով, բեռնատար վագոնները վերածվել էին գժանոցի՝ գոռոց, հրհրոց, քաշքշուկ, քացի տալ, ծեծկոտուք: Մի նոր տեսակի դժոխք իջավ մեզ վրա:

Բլանկան շատ թույլ էր իրեն պաշտպանելու համար: Այսպիսով, Սելման Բլանկայի գլուխը դրել էր իր գոգին, իսկ ես ջանում էի սեղմվել, դառնալ անտեսանելի, որ քույրս իմ տարածքից օգտվի:

Ժամանակը չի բուժում բոլոր վերքերը: Տարիները բթացրել են ցավը, բայց ոչ հիշողությունը: Նույնիսկ այսօր ես կարող եմ պատկերել այդ անվերջանալի ժամերը երկյուղ առաջացնող պարզությամբ: Անձրն է գալիս և շատ-շատ ցուրտ է: Չնայած ապրանքատար վագոնները պինդ փակված էին, անձրևը կաթում է ճեղքերից: Քույրս տնքում է: Տենդը և տիֆը նրան տվել են գրեթե խաղաղ, այլերկրային արտահայտություն: Նա համարյա չի շարժվում:

Ինչ-որ մեկը նվնվում է: Ինչ-որ մեկը մեռնում: Ես թրջված եմ անօգնականության քրտինքից ու վախից: Խուճապը ճանկել է սիրտս, և ես սկսում եմ ցնցվել: «Մի՛ թող քույրս մեռնի, ո՛վ Տե՛ր, մի՛ թող նա մեռնի. (Աստվա՞ծ: Ի՞նչ Աստված): Դե ես չեմ կարող հենց այնպես նստել այստեղ և թույլ տալ, որ նա մեռնի: Գուցե աղոթքը կօգնի»: Ես մտածեցի, երբ էի վերջին անգամ ասել *Sh'mah* աղոթքը, հրեա ժողովրդի սրբազան հինավուրց ծիսական աղոթքը, որը հոլովում է Աստծու եզակիությունը:

Հետո ես մտածեցի. «Այս պատճառով է Բլանկան մեռնում, որովհետև ես չեմ աղոթել, որովհետև ես անկարող եմ աղոթել: Բայց մեկ ուրիշ ներքին ձայն պատասխանեց. «Անհեթեթություն»: Տիեզերքն այդպես չի գործում: Դու գիտես, դա ճշմարիտ է, որովհետև գետտոյում դու աղոթում ու աղոթում էիր մորդ կյանքի համար: Եվ քո աղոթքներին պատասխան չեղավ: Միևնույն է մորդ տարան:

Լույան և Սելման ջանում էին մեռնող քրոջս տալ մի փոքր ավելի տարածք, որ քույրս կարողանա մեջքով հենվել: Նրանք մի կողմ են հրում մի զառանցող ծեր կնոջ: Կինը ճչում է: Սելման քրոջս մարմնի վերնամասը դնում է իր գոգին և օրորում նրան՝ շարժվելով հետ ու առաջ: Ես մի կողմ եմ ճզմում ոսկորներս, որ քրոջս ոտքերին տեղ լինի: Քանի՞ լացող, նվնվացող թշվառ մարմիններ կային այս մուօ ու գարշահոտ դժոխքի փոսում:

Ես կռանում եմ և շշնջում. „*Blaneczko*“, կարո՞ղ ես ինձ լսել»: Սակայն մեկի ոսկրոտ արմունկը (կամ գուցե ծունկը) կոպտորեն հրում է՝ հասցնելով ինձ փակված դռանը, որի մոտ է մեր արտաքնոցի դեր կատարող սոսկալի դույլը: Լեփլեցուն դույլի շուրջը գոյացած մեզի լճակներում, ինձ թվում է, ես ծիծաղում եմ, մինչև նկատում եմ, որ արցունքները հոսում են այտերովս: Հեկեկոցից սկսում եմ հազալ և խեղդվել ու խեղդվել և ավելի հազալ, մինչև մեկը հայիոյում է ինձ և սպառնում վիզս կտորել, եթե ձայնս չկտրեմ: Ես կուլ եմ տա-

¹ Բլանկա անվան լեհերեն փաղաքշական ձևը:

լիս արցունքներս ու լորձս: Ես խեղդվում եմ դառնությունից և զգում եմ հուսահատության անօգնականության համը:

Նորից ու նորից կրկնում եմ. «Մի՛ թող նա մեռնի»: Բայց գնացքի անիվներն ունեն իրենց սեփական կրկնակը. «Մեռի՛ր, մեռի՛ր», - ասում են դրանք: Անձրևը թափվում է պատի վրայով, և ես լիովին թրջված եմ: Ինչ-որ մեկը մեղմորեն կաշում է թևիս: Ես դողում եմ: Դա Մամա Ֆրիդրիխն է (Mama Friedrich): Նա ինձ հասակակից Ռութի մայրն է: Բլանկայի պես Ռութն էլ է մահամերձ տիֆից:

Մամա Ֆրիդրիխը վերմակի մի կտոր ունի՝ մաշված, կեղտոտ, ոջլոտ մի գանձ: Ողջ գիշեր նա հուսադրում է իր աղջկան՝ որպես էգ առյուծ, որպես մայր քշելով այլ կմախքացած ուրվականներին: Այժմ խղճահարությամբ նա հառում է ինձ իր ջրալի, հազիվ կենտրոնացող աչքերը: Այդտեղ՝ մարդկայնությունը կորցրած չարի ընդերքում, վերցնում է վերմակի մի մասը իր սեփական զառանցող երեխայի վրայից և իմ շուրջը փաթաթում:

Ես միշտ կհիշեմ այս մարդկային գրկախառնությունը՝ անհավատալի բարության այդ արարքը, անշահախնդիր, հոգատարության վարմունքը: Այնտեղ՝ ծայրաստիճան խելացնորության խորքերում, մի թանկագին պահ, այս խիզախ կինը՝ Ռութի մայրը, հալեցրեց իմ սարսափի մի փոքրիկ մասը:

Մի քանի օրից հասանք մեր նպատակակետին՝ Վենուզբերգ, մի փոքրիկ ստրկական աշխատանքի ճամբար: Վենուզբերգում մենք ունեինք սնունդ և աշխատանք: Այդ ժա-

մանակ մենք արդեն գիտեինք, որ եթե սնվում ես և աշխատում, ապա քո գոյատևման շանսերն ավելի լավն էին: Բայց Վենուզբերգում տիֆը գիշերային գաղտագողի մարդասպան էր: Եվ նա հետապնդում էր քրոջս:

Առաջին անգամ, երբ մենք պետք է կանգնեինք ներկա – բացակայի, ես համոզված էի՝ Բլանկան մեռնելու վրա էր: Նա ցնցվում էր տենդից ու սարսռալուց: Ասես այս թշվառ վիճակը քիչ էր, սաստիկ փորլուծություն էր սկսվել: Մենք պետք է օգնեինք նրան՝ ոտքի վրա պահելու: Մեզնից մեկն ուներ բարձր վզով սվիտեր: Մենք Բլանկայի ոտքերը մտցրինք սվիտերի թևերի մեջ՝ նրան տաք պահելու համար: Անպատմելի հուշեր:

Մենք կարենալու չափ փորձում էինք մեկս մյուսին օգնել: Ներկա – բացակայի ժամանակ հիվանդները չէին կարող առաջ գալ ներկայանալու համար: Իրականում մեզնից շատերը հազիվ էին կարողանում կանգնել: Գլուխներս կախված, ձեռքներս թուլացած, մենք հազիվ կանգնած, ճոճվում էինք մի կողմից մյուս կողմ՝ ջանալով պահել հավասարակշռությունը, մինչև էսեսական հսկիչներն անցնեին: Հետո մենք վերստին ընդունում էինք մեր կռացած դիրքը՝ մինչև ստուգման ավարտը:

Այստեղ, ինչպես այլուր, մենք սնունդ էինք կուտակում: Մեզնից նրանք, ովքեր հիվանդ էին և ուտել չէին կարող, թաքցնում էին հացը վերին մահճակալներում: Այդ ժամանակ մեզ հսկում էին էսեսական կանայք, և նրանք տղամարդկանցից ավելի դաժան էին: Ես մտահոգվում եմ, թե արդյոք սեռա-

կան խտրականություն են դնում՝ ասելով, թե կանայք պետք է ավելի բարի լինեն: Բայց ես դա էի ակնկալում, իսկ նրանք ավելի բարի չէին:

Ճամբարներում անցկացրած տարիներին ինձ հոգեպես տանջել էին, սովի մատնել, մահվան դուռը տարել՝ աշխատեցնելով, ինձ չէին ծեծել երբեք, մինչև Վենուզբերգը: Ես հերթում էի, իմ աղքատիկ օրաբաժնի համար՝ ջրիկ, տղմոտ ապուր, որի մեջ լողում էին աննշմարելի փշուրներ: Երբ ես ստացա իմ բաժինը, ես այն տվեցի Բլանկային, որովհետև շատ հիվանդ էր հերթ կանգնելու համար: Հետո ես նորից հերթ կանգնեցի, և էսէսական կինն ինձ ճանաչեց: Ես երբեք չեմ իմանա, թե ինչպես կարող էր նա տարբերել մի բանտարկյալին մյուսից, բայց նա տարբերեց: Նրա դեմքը կատաղությունից կարմրեց, և նա ծեծեց՝ սկզբում մտրակով մեջքիս և հետո ապտակելով դեմքս:

Էսէսական կանայք, որ մեզ հսկում էին Վենուզբերգում, այնքան անչափ անմարդկային էին, որ մենք այլևս մահից չէինք վախենում: Փոխարենը վախենում էինք կյանքից:

ԼԱՅԵ՛Ք, ՄԱՆՈՒԿՆԵՐ, ԼԱՅԵ՛Ք

Կանչե՛ք Ձեր աստվածներին, նրանք կարող են ազատել
Ձեր թշվառ հոգիները ձյան մեջ սարսռացող,
Այն մերկ մարմինները՝ մոխրագույն դեմքերով,
Շուրթերով, որ մոռացել են ինչպես աղոթել կամ անիծել:

Լացե՛ք, մանուկնե՛ր, կանչեք Ձեր աստվածներին,

եղե՛ք համարձակ,
Ձեր դահիճների ոտքերը կարող են սառը լինել...
Ասում են նրանք «մարդ» են պարզապես,
իրենց գործն են անում,
Գուցե նա զայրացած է Ձեր խուլ հեկեկոցներից...
Նա կարող է հայիռել, ուղղել սաղիստ հայացքը
Քո փտող ոսկորներին, որ բացված են... մերկացած:

Չկա՛ կարեկցանք: Եվ գետինը սառն է,
Բայց, եթե բախտ ունենաս, կարող է քեզ ընտրեն,
Արժանացնեն գնդակահարման՝ անցավ ու արագ...
Բայց ո՛չ, Ձեզ չարչարողները շրջվեցին գարշանքով:

Ինչպիսի գթասրտություն, եթե քեզ թողնեին մեռնել...
Լացե՛ք, մանուկնե՛ր, լացե՛ք...

Մի օր մեզ նման բանտարկյալներից մեկը մեզ վրա գործ տվեց: Մոլի ցանկություն ունենալով հավելյալ ուտելիք կամ մի քիչ հանգիստ ստանալու՝ այս կինն ասել էր մեր բարակները դեկավարող *Kapo*-ին, թե մենք հաց ենք հավաքում, պահում: Էսէսական կանայք այդ օրը եկան բարձրացան մեր մահճակալներին և տարան մեր գանձը: Բայց հետո դրանից եղավ մեզ համար ուրախություն կամ նրանց կատարածից ինչ-որ հիվանդագին բավարարվածություն: Երբ նրանք բարձրացան մեր մահճակալների վրա, վարակվեցին տիֆով: Անգամ նրանք չէին պաշտպանված ճամբարը լցված մահվան դաժանությունից:

Ես հիշում եմ այնտեղի մի ընկերուհու: Նրա անունը Էռնա էր: Էռնան ամուսնացել էր հենց մինչև պատերազմի սկիզբը կամ էլ պատերազմի սկզբին: Նա շատ էր սիրում իր ամուսնուն և չգիտեր, թե ամուսինը դեռ կենդանի՞ էր: Բայց Էռնան հույս ուներ և աղոթում էր, որ ամուսինը կենդանի լիներ: Ինչ վերաբերում է Էռնային, ինչպես և մեզնից շատերի համար, մի օր մեր սիրելի մարդկանց տեսնելու հույսը պահում էր նրան՝ ուժ տալով առաջ ընթանալու:

Սակայն Էռնայի հույսը տարօրինակ արտահայտություն էր ստացել: Նա սկսեց հիվանդագին ձևով կենտրոնանալ իր տեսքի վրա: Ամուսնանալիս Էռնան եղել էր մի գեղեցիկ երիտասարդ կին: Հիմա նա հյուծված էր՝ ծածկված չիբաններով և քոտով: Նրա ժամանակին գեղեցիկ մազերը հիվանդությունից քայքայվել ու թափվել էին: Էռնան ուներ ծեր կնոջ դեմք:

Նա աղոթում էր, որ ամուսինը դեռ կենդանի լինի, բայց նաև վախենում էր նրան նորից տեսնելուց: Ամուսինը դեռ իրեն կսիրե՞ր, կցանկանա՞ր, կտենչա՞ր, կփայփայե՞ր: Այսպիսով, գրեթե ամեն գիշեր նա կատարում էր հիվանդագին ծես: Նա հանում էր իր լաթերից կազմված հագուստը և գնում իր մերկ մարմինը: Նա ինքն իրեն նայում էր և ճշում, թե ամուսինն այլևս չի սիրի իրեն, որ երբեք էլ իրեն չի ցանկանա: Ես չգիտեմ, թե նա երբևէ հանդիպեց ամուսնուն նորից: Ինչևէ, իմացա, որ նա վերապրեց ճամբարները: Նա վերապրեց, սակայն պատերազմից հետո սպանվեց տրամվայի վթարից:

Գուցե որովհետև ես Վենուզբերգում էի պատերազմի վերջին կամ գուցե որովհետև ավելի մեծ էի այն ժամանակ և ավելի խորն էի ընկալում, թե ինչ է կատարվում շուրջս, ես շատ հուշեր ունեմ այդ ճամբարից: Հիշում եմ, որ այնտեղ սուրճ ունեինք, ավելի շատ հեղուկ, որ նման էր սուրճի: Մենք հավաքում էինք մեր սուրճը և դրանով լվանում գլխներիս մնացած ինչ մազ որ կար: Տաք սուրճը հաճելի էր մեր գլուխներիս:

Մեր մազերը լվանալուց հետո մենք մեկս մյուսի գլխից ոջիլներ էինք հանում: Եվ երբ հնարավոր էր, մենք շուտ էինք տալիս մեր շորերը և քերում ոջիլներով վխտացող կարերը: Ես դասակարգում էի ոջիլները: Որոնք մեջքներին մեծ կարմիր կետ ունեին, տիֆակիրներն էին: Մենք հատկապես հետևում էինք, որ դրանցից ազատվենք: Ոջիլ որսալը դարձել էր ազատ ժամերի հիմնական զբաղմունքը, մեր հանգիստը: Բայց չկարծեք, թե շատ ազատ ժամանակ ունեինք:

Ես նաև հիշում եմ Վենուզբերգում մեր կատարած աշխատանքը: Մենք օդանավեր էինք կառուցում գերմանական Ռեյխի համար՝ մոտակա *Messerschmidt* գործարանում: Գործարան հասնելու համար պետք է դուրս գայինք ճամբարից: Երկար-երկար պիտի քայլեինք: Ճամբարից դուրս լինելն ահարկու էր: Այն հիշեցնում էր մեզ, որ ուրիշ աշխարհ գոյություն ուներ: Իմ աշխատանքային հանձնարարություններն այլ ճամբարներում գրեթե միշտ ներսում էին եղել:

Վենուզբերգում մենք աշխատում էինք երկու հերթափոխով՝ կամ առավոտյան հերթափոխը՝ 6-ից մինչև երեկոյան

6-ը, կամ գիշերային հերթափոխ՝ 6-ից մինչև առավոտյան 6-ը: Երկու հերթափոխերի համար էլ մենք անցնում էինք ճանապարհի կողքի տների մոտով: Առավոտները մենք տեսնում էինք, թե ինչպես տներում լույսերն էին վառվում, և ծուխը ոլորվելով ծխնելույզից դուրս էր գալիս: Ծուխը չէր նշանակում, թե մարմիններ էին վառվում: Այն նշանակում էր, որ մայրը վառարան էր վառում՝ նախաճաշ պատրաստելու համար: Մենք նաև լսում էինք, թե ինչպես էին երեխաները խաղում իրենց շների հետ: Ինձ համար շները խորհրդանշում էին մահը, որովհետև նացիստ հսկիչներն օգտագործում էին շներին բանտարկյալներին պատառոտելու համար: Բայց այստեղ բարի շներ էին, ինչպես Օրին՝ տատիկիս ագարակից: Հրաշալի էր լսել, թե ինչպես ազատության մեջ գտնվող երեխաները խաղում էին իրենց շների հետ:

Քույրս ժամանակի մեծ մասը հիվանդ էր՝ անկարող աշխատել: Չնայած բարեբախտաբար նրան չէին դրել հիվանդների ցուցակում: Փոխարենը նա մնում էր բարակներում՝ մինչ մնացածներս գնում էինք աշխատելու: Մի անգամ նա այնքան հիվանդ էր, որ ես ձևացա հիվանդ նրա հետ մնալու համար: Ես իսկապես վախենում էի, թե նա կմեռնի այդ օրը, և ես կամենում էի նրա հետ լինել:

Այդ սուտն ինձ համարյա արժեցավ կրկնակի՝ համատամներս, համ կույր աղիքս: Վենուզբերզը «քաղաքակիրթ ճամբար» էր: Մա նշանակում էր, թե մի բժիշկ ու մի ատամնաբույժ ամիսը մեկ այցելում էին: Առանց հարցի, եթե որևէ մեկը հիվանդների ցուցակում էր, նրա կույր աղիքը և ատամ-

ները կհանեին: Ուրեմն ինձ պետք է ցուցակից հանել տայի: Ինչ-որ կերպով ձևացա, թե մեռած եմ: Վերջ ի վերջո դա այդ-քան էլ դժվար չէր անել: Ես, իհարկե, մեռածի տեսք ունեի: Բլանկան վերջ ի վերջո ավելի լավացավ: Չգիտեմ, թե դա ինչ-պես հնարավոր դարձավ՝ հաշվի առնելով այն պայմանները, որոնցում ապրում էինք:

Գործարանում աշխատողների մեջ կային պատերազմի գերիներ՝ դաշնակիցների զինվորներ, որոնք բռնվել էին նացիստների կողմից: Ձինվորները շջնջում էին, թե դաշնակիցների ուժերը մոտենում էին Գերմանիային, որ Գերմանիան շուտով կպարտվի: Իհարկե, մեզ թույլ չէր տրվում նրանց հետ ուղղակի խոսել, բայց այնտեղ միշտ կար բամբասանքի ցանց, ինչ-որ մի ձև միշտ տեղեկություններ ստանալու:

Դաշնակիցների ոմբակոծությունները հաստատում էին բամբասանքները, բայց ինչ-որ ձևով մենք ռումբերից երբեք չէինք վախենում: Իմ հիշած այն քիչ ոմբակոծությունների ժամանակ նացիստ հսկիչները և էսէսական սպաները թաքնվում էին ապաստարաններում: Բայց բանտարկյալները կանգնում էին բացօթյա՝ աղոթելով, որ ռումբն ընկնի մոտակա տեղերում, միայն թե իմանան, որ ինչ-որ մեկը հոգ է տանում իրենց համար: Ռումբերը սովորաբար ընկնում էին ճամբարից բավական տարածության վրա: Եթե միայն դաշնակիցները ոմբակոծեին ճամբարները կամ գերմանական գործարանների երկայնքով ընկած երկաթուղիները, մահվան մեքենան կդանդաղեր կամ կանգ կառներ:

Ռմբակոծություններն ինձ հույս էին տալիս, բայց հույսս շուտով դարձավ հուսահատություն: Ես հիվանդացա տիֆով և ընկա հիվանդների բարակները: Այդ ժամանակ արդեն մարտ ամիսը պետք է լիներ: Բժիշկն ու ատամնաբույժն արդեն չէին գալիս: Հիվանդների բարակները հիմա կարանտինի վայր էին դարձել՝ բաժանելով տիֆով հիվանդներին մյուս բանտարկյալներից, որոնք դեռ կարող էին աշխատել: Պարբերաբար հսկիչները դատարկում էին այդ հիվանդասենյակները: Ես վստահ չէի, թե ինչ էր պատահում այս մարդկանց հետ: Կասկածում եմ՝ նրանց սպանել էին:

Երբ ես հիվանդների բարակում էի, Սելման՝ մեր հնգյակի անդամներից մեկը, եկավ և ինձ համար ապուր բերեց: Նա գերմանական հրեա էր, որին քշել էին Գերմանիայից և շարտել լեհական սահման: Հետագայում նրան բռնել էին լեհական հրեաների հետ և ուղարկել ճամբարները: Սելմայի գերմաներենը գերազանց էր, և նա հաջողեցրել էր ապուրի հավելյալ ափսե ստանալ ինձ համար՝ օգնելով *Kapo*-ին մաքրել հատակները: Ես դա երբեք չեմ մոռանա:

ԿՅԱՆՔԻ ՆՎԵՐԸ

Սելմային՝ ընկեր, որ մնաց

Մարդկային ու հոգատար, անգամ, երբ մութ

գիշերն էր իջել

Նրա մանկության վրա,

Երբ սարսափելի տարիները

Անասելի չարի

Համարյա լիովին կլանել էին իր իսկ կյանքը...
Եվ դեռ անգամ այդ խավարում
Կային լույսի պահեր,
(հազվադեպ ու անհավանական)
Եվ դու ստեղծեցիր ինձ համար
Այդպիսի մի հուշ,
Այն «մեկ այլ աշխարհում»,
Դու ինձ սնունդ բերեցիր.
Հիշի՛ր, որքան հիվանդ էի ես
տիֆով, տենդով...
Դու մաքրեցիր բարակների հատակները,
Եվ *Kapo*-ն պարզևատրեց քեզ
Մի ավստ ապուրով...
Դու էլ շատ քաղցած պետք է լինեիր,
Դու այնքան նիհար էիր՝ մի փոքրիկ աղջիկ,
Հսկայական մեծ աչքերով...
Բայց դու չկերար,
Փոխարենը դու սողոսկեցիր
Մարդաշատ, գարշահոտ, հիվանդությամբ լի
Սենյակը հիվանդների և ինձ բերեցիր
Նվերը կյանքի...

Ապրիլի մի օր հրամաններ եկան էվակուացնելու
Վենուզբերգը: Պատերազմը համարյա ավարտվել էր, բայց ոչ
մեզ համար: Նացիստների մոլեգնությունը՝ սպանել բոլոր
հրեաներին, երբեք չթուլացավ: Այսպիսով, նրանք էվա-

կուացնում էին Վենուզբերգը, որ մեզ տեղափոխեն մի այլ ճամբար՝ մի ճամբար, որ դաշնակիցների ուժերին հասանելի չլիներ: Քույրս լսել էր էվակուացիայի մասին և աշխատանքից վազելով եկել էր ինձ փրկելու: Ինչ-որ ձևով իմացել էր, որ հիվանդներին չեն տեղափոխելու: Եվ Բլանկան իրեն հատուկ հնարամտությամբ հիվանդասենյակ մտավ պատուհանից կամ պատի մեջ եղած ինչ-որ անցքից: Կրկին նա փրկեց կյանքս:

Տիֆից ստանում ես տենդ, հիմարացում, ջրազրկում և գառանցանք: Ես այնքան ծարավ և ուժասպառ էի, որ հազիվ կարող էի բարձրացնել ոտքերս: Բայց երեք ընկերներս և Բլանկան եկան ինձ օգնության: Նրանք հերթով, երկուսն իմ ամեն մի կողմից բարձրացրին ինձ ու քաշեցին դեպի գնացքը: Մի կերպ նրանք ինձ մյուսների հետ բարձրացրին անասուններ փոխադրող գնացքը:

Ամեն փակ վագոնում կային 120-ից 140 կանայք: Օդ չկար, և ես ջերմությունից այրվում էի: Մի քանի օրը մեկ հսկիչները բացում էին դռները և հանում մեռածներին: Բայց մեռածներն ու կենդանիները նման էին, և հսկիչները մտահոգ չէին ճիշտ ընտրություն կատարելու: Այնպես որ Բլանկան ամեն ինչ արեց, որ ես կենդանի երևամ: Բլանկան կանգնեցնում էր ինձ՝ հենելով պատին և այտերս կսմթում, որ մի քիչ գույն գա վրաս: Ամեն անգամ ես այդ ընտրությունն անցնում էի:

ԱՆԱՍՆԱՏԱՐ ՎԱԳՈՆՆԵՐԸ

Նախրի պես միասին խմբված՝ այրող արևին
վագոնները փակված, անշարժ կանգնած բլրի վրա...
աշխարհի ծայրին:

Կար ժամանակ, որ քաղցած էի՝ անցած գիշե՞ր,
անցած տարի՞:

Կար ժամանակ, որ չգիտեի վախը, կար ժամանակ
առանց գնացքների,

հիմա երագում եմ անձրևներ ու արևադարձային միրգ,
կոկորդա այրվում է: Որքա՞ն ժամանակ է անցել՝
մինչ քրոջս եմ տեսել:

Սիրտս խուճապի է մատնվում, և ես սկսում եմ ցնցվել:

Ահա քույրս՝ *Blaneczka*-ն կենդանի, արթուն
նա հպվում է ճակատիս և լալիս,
մեկը նվնվում է... մեկը մեռնում:

Ես ժպտում եմ, շուրթերս ճաքում են:

Ես երջանիկ եմ, բայց ինչո՞ւ:

Ես մոռանում եմ, ես հառաչում եմ՝ այնպես
դժվար է վերհիշելը

գետտոն... պատը... և որ մայրս չկա:

Գուցե նա մեռած է, և հոգին լուսավորվել է:

Ես հուսով եմ, նա չի ենթարկվել այն անարգանքներին,

Իմ սիրելի *Mateczka* – ո՛չ, ես չեի կարող դիմանալ,
տեսնելով, թե ինչպես է նա ճգնվում ու թռչնում,
ինչպես Ռոմեկի մայրը՝ տգեղ ու խենթ՝
սավիրած գլուխը, ազահ աչքերը,

այնպես լիովին անմարդկայնացած...
Բայց Աստված գթասիրտ է: Իսկապես:
Արդյոք նա մորս սրանից չխնայե՞ց:
Այս հոգեվարքի և ցավի տարիները,
Կամ Աստված իենթ է ինձ նման:

Քույրս, պահապանս, շնջում է ականջիս.
«Լո՛ւռ մնա, սիրելի՛ս, ընտրություն է գնում»,
բայց չնայած այս գործողություններին՝ ես ժպտում եմ.
«Հաղթում եմ, հաղթում»: Մայրս մեռած է,
բայց լացի փոխարեն ես ծիծաղում եմ և ուրախանում...

Ա՛խ այդ անընտրելի ընտրությունները, որ
մենք սովորել ենք ընդունել
...այդ այլ աշխարհում, այդ այլ վայրում,
ուր մանուկներին այրում էին, մինչ
մարդկությունը դիտում էր
...և տիեզերքը դեռ պետք է իմանա ինչու,
դեռ պետք է իմանա ինչու:

Ապրանքատար վագոններում 16 օր անցկացնելուց
հետո մենք ժամանեցինք Մաութհաուզեն, որն Ավստրիայում
է: Այդ ժամանակ դեռ գաղափար չունեի, որ Մաութհաուզենն
այն ճամբարն է, ուր Նորբերտին և հորս ուղարկել էին 1944-ի
ամռանը:

7 ՄԱՌԻԹՀԱՌԻՉԵՆ

Մայիս 1945

Մաուրթհաուզենում էր, որ մեր մղձավանջը վերջապես հասավ ավարտին: Բայց ոչ անմիջապես: Հիշում եմ, երբ հասանք Մաուրթհաուզեն, պետք է բարձրանայինք մի խոշոր բլուր՝ գնացքի կայարանից ճամբար հասնելու համար: Այդ բլուրը բարձրանալն իրապես դուրս էր մեր կարողություններից: Մեր հնգյակի խմբում էդզիան և ես դեռ տիֆով շատ հիվանդ էինք: Ուրեմն մյուս երեքը պետք է քաշեին երկուսիս բլուրն ի վեր: Ես ասում եմ «պետք է», որովհետև եթե անկարող լինեիր բարձրանալ այդ բլուրը, էսեսական հսկիչները կշարտեին քեզ մարմիններով լի վագոնների մեջ՝ մարմիններ՝ որոշը մեռած, որոշը՝ կենդանի:

Հենց կարողացանք հաղթահարել բլուրը և հասանք ճամբար, էլ գնալու տեղ չկար, ոչ էլ քնելու տեղ: Բերնիբերան լցված՝ ճամբարը լիովին խառնաշփոթի մեջ էր: Ես հիշում եմ սև և կանաչ համազգեստները: Կային այնքան շատ բանտարկյալների դասակարգումներ: Եվ, իհարկե, հրեաներն ամենացածր դասումն էին:

Մեծ մասամբ, հիշում եմ, խնդրում էինք, որ թողնեն արտաքնոց գնալ: Մենք այնքան փորլուծություն ու փսխում ունեինք: Մենք մշտապես իրար վրա փսխում էինք: Քույրս իրեն հագիվ քարշ էր տալիս՝ փորձելով ինձ կենդանի պահել:

Կարծում եմ մեկ կամ երկու օրից ինձ համար արդեն շատ ուշ կլինեք:

Եվ հետո դա պատահեց: Շատ ժամանակ անց ես իմացա ամսաթիվը՝ մայիսի 4, 1945: Բլանկան ճչալով եկավ ինձ ասելու, թե *Kapo*-ները, հսկիչները և էսեսականներն անհետացել էին: Հաջորդ օրը՝ մայիսի 5-ին, առավոտյան ժամը 11 անց կեսին ամերիկյան բանակի տանկերը մտան Մաուր-հաուզեն: Բանտարկյալներն իրենք բացեցին ճամբարի դարպասները և ամերիկացիներին ներս թողեցին: Եվ ամեն ինչ ավարտվեց:

Ամերիկյան զինվորները սարսափից համրացան, երբ տեսան մեզ: Չնայած դաշնակիցների առաջնորդներն ու բարձրաստիճան զինվորական պաշտոնյաները սկսած 1942-ից իմացել էին մահվան ճամբարների մասին, զինվորներն իրենք շատ քիչ բան գիտեին: Հետևաբար այս երիտասարդ զինվորները բոլորովին անպատրաստ լինելով՝ հայտնաբերեցին ճամբարները: Նրանք մտան այս աներևակայելի աշխարհը և ընդմիջտ փոխվեցին այնտեղ կատարված դաժանություններից:

Ես հատկապես հիշում եմ մի աֆրոամերիկյան զինվորի դեմքի արտահայտությունը, երբ նա ինձ տեսավ: Հիվանդ տիֆով և տենդով, անկարող տարբերել մղձավանջն իրականությունից, ես սևեռուն հայացքով նայում էի նրա սարսափով լի աչքերին:

ԻՄ ՍԵՎԱՄՈՐԹ ՓՐԿԻԶԸ

Մի սևամորթ զինվոր կանգնած էր դռան մոտ,
(Ես երբեք սևամորթ չէի տեսել մինչ այդ)
Նա ինձ կազատի մինչև ես մեռնեմ,
Կարծեցի երևի, նա Փրկիչն է:

Մի սևամորթ փրկիչ եկավ ինձ համար...
Նա նայեց աչքերով, որ չէին տեսնում,
Նա երբեք չլսեց ոչ մի բառ,
Որ անհեթեթ կախված էր իմ լեզվից:

Իսկ հետո նա պարզապես սառեց տեղում՝
Ցնցումն ու սարսափը դեմքին,
Նա չհեկեկաց, նա լաց չեղավ,
Բայց նրա բարի աչքերի խորքում
...Ավերիչ հեղեղ էր ցավի,
Իր անմեղությունն էր ընդմիշտ սպանված:

Ինձ համար ևս մեկ արշալույս,
Ես իմացա իմ սևամորթ փրկիչը հեռացել է,
Ու մենք գնացինք մեր տարբեր ճամփաներով՝
Տարիներով առանց հետքի:

Բայց մենք կիսում ենք մի հատուկ կապ,
Որն ուժեղացել է, քանզի հանդգնել ենք մենք
Ապրել, հուսալ, ժպտալ... և դեռ
Երդվում ենք *երբեք չմոռանալ...*

Ամերիկացիները մեզնից շատերին գտան մահամերձ: Հետևաբար Մաուրիսիուսը նրանք ժամանակավոր հիվանդանոց սարքեցին և մեզ տեղափոխեցին այնտեղ:

Բլանկայի և ինձ համար մեծագույն վախը միշտ եղել էր իրարից բաժանվելը՝ աշխատանքում, լողանալիս, ցանկացած հարցում: Ողբերգություն էր անգամ մեկ ժամով բաժանվելը, որովհետև երբեք չգիտեինք՝ կկարողանա՞նք նորից գտնել իրար: Հետևաբար, անգամ հիմա՝ պատերազմի ավարտից հետո, Բլանկան չէր թույլատրում նրանց բաժանել մեզ: Այսպիսով, որպեսզի հիվանդանոցում ինձ մոտ լինի, նա պնդեց, որ ունի որոշ բուժքույրական փորձ: Իրականում մեծ խնդիր չէր, որովհետև ամերիկացիներն օգնության խիստ կարիք ունեին և շատ քիչ հարցեր էին տալիս:



Մոնյայի նկարը պատվելի դոկտոր Մարտին Լուտեր Քինգի՝ սպանվելուց հետո

¹ Մարտին Լուտեր Քինգի լրիվ անունն է՝ Martin Luther King Junior: Նա ունեցել է նույն անունը, ինչ իր հայրը, որը որդու ծնվելուց հետո կոչվել է Martin Luther King Senior:

Չնայած բժշկական օգնություն ստանալուն՝ հազարավոր վերապրածներ ազատագրումից օրեր և շաբաթներ անց մեռան: Իմ սեփական կյանքը մազից էր կախված: Գրեթե 17 տարեկան՝ ես կշռում էի միայն 60 ֆունտ²: Մազերս փնջերով թափվեցին: Ես այնքան էի հյուծվել, որ միակ երակը, որ նրանք կարողացան գտնել ինձ ներերակային սնուցման համար, ծնկիս տակ էր: Դրա հետևանքով ես պետք է պառկեի ստամոքսիս վրա: Բայց դա խիստ անհարմար էր կոնքերիս ոսկորների պատճառով: Այդ ոսկորներն այնքան էին դուրս ցցված, որ խրվում էին ներքնակի մեջ: Հիշում եմ՝ ջանում էին փոքր անցքեր բացել ներքնակի մեջ, որ կոնքերս մեջը մտնեն: Այս վիճակում էի, որ Նորբերտը գտավ ինձ:

Ինչպես Բլանկան և ես, Նորբերտն ազատագրվել էր Մաութհաուզենից մայիսի 5-ին: Չնայած նույնպես տառապում էր թերսնումից և հիվանդությունից, Նորբերտը ոչ մի մտադրություն չունեի շարունակ մնալ ու բուժվել: Փոխարենը նա մի քանի ուրիշ վերապրածների՝ այդ թվում այժմ նշանավոր նացիստ որսացող Սայմոն Վիզենթայի հետ գտել էր Ավստրիայում Լինցի (քաղաք) մոտ գտնվող լքված մի ազարակատուն (Հիտլերի ծննդավայրը):

Այնտեղ նրանք ստեղծել էին Հարթ ճամբարը (Camp Hart): Հարթ ճամբարը դարձավ պատերազմից հետո Գերմանիայում և Ավստրիայում տեղահանված շատ մարդկանց համար ստեղծված ճամբարներից մեկը: Տեղահանված մարդը

² 60 ֆունտը նշանակում է 27 կգ, 160 գրամ:

նա է, ով արմատախիլ է արվել իր տնից: Տեղահանված մարդը նա է, որ տեղ չունի գնալու: 1945-ին մենք՝ Հոլոքոստը վերապրածներս, մարդիկ էինք առանց երկրի, պետության կամ ազգության: Մենք *Statenloss* էինք՝ առանց քաղաքացիության:

Հարթ ճամբարը, մյուս տեղահանված մարդկանց ճամբարների հետ, նաև գործում էր որպես փաստաթղթային կենտրոն՝ վայր, ուր մարդը կարող էր գրանցվել ընկերներին ու ընտանիքներին գտնելու համար: Նորբերտը երբեք չէր կորցրել Բլանկային ու ինձ գտնելու հույսը: Այսպիսով, Հարթ ճամբարում նա հարցնում է ճամբարով անցնող ամեն վերապրածի, թե նրանք մեզնից լուր ունե՞ն: Վերջապես ինչ-որ մեկը նրան ասաց, թե կանանց տեղափոխման գնացք է ժամանած եղել Մաութհաուզեն ուշ ապրիլին:

Նորբերտը պահ անգամ չէր տատանվել: Նա և իր ընկեր Նաթանը սեփականացրել էին որոշ մաքուր շորեր մի ազարակատիրոջ լվացքի պարանից: Նրանք նաև «պարտք վերցրեցին» մի ավտոմեքենա և Հարթ ճամբարից քեցին Մաութհաուզեն:

Երբ Նորբերտն ու Նաթանը հասան Մաութհաուզենի կենտրոնական շտաբ, հարցրեցին Բլանկայի ու իմ մասին: Ամերիկացիները գտան Բլանկային հիվանդանոցում և նրան բերել տվեցին: Նրանց վերամիավորումն իսկական հրաշք էր: Ամերիկացի զինվորներն արտասովեցին՝ դիտելով այդ քնքուշ պահը:

ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԻ ՀՐԱՇՔ

Ոչնչացման պտուղները տարածվեցին մշուշի միջով,
Երբ վերջապես այս գարնանը պատերազմն ավարտվեց,
Հագած բանտի հագուստ՝ նրանք շվարած փնտրեցին,
Ինչպես անթև թռչուններ...


Բայց հետո հրաշք կայացավ,

Եվ մի խիստ կարևոր վերամիավորում տեղի ունեցավ:

Նրանց աչքերն ասացին բոլոր չասված բառերը

...համր գրկախառնության մեջ:

Բայց հայրս, նրանից ի՞նչ լուր կար: Նորբերտն ասաց մեզ, որ Յանեկ Շրայբերը՝ իմ քաղցր, քնքուշ հայրը, սպանվել է պատերազմի ավարտից մի քանի շաբաթ առաջ: Հայրս չէր սպանվել նացիստի կողմից, այլ մի ուկրաինացի *Kapo*-ի կողմից (դավաճան ոստիկանի պաշտոնով), որը զայրացած, որ հայրս ի վիճակի չէր եղել աշխատել այդ մի օրը, աթոռով ծեծել էր հորս մինչև գիտակցությունը կորցնելը: Բոլոր պատմություններից, բոլոր տեղեկություններից, որ Նորբերտը մեզ տվեց, սա միակ փաստն էր, միակ տեղեկատվության մասը, որ միտքս կարող էր հասկանալ: Հետո ես իմացա սարսափելի մանրամասնություններով, որ վայրենի ծեծից հետո *Kapo*-ն հորս զգել է ջրի տակառը՝ համոզվելու՝ նա իսկապես մեռած է:



*Մանյայի մատնահետքը Մաուրիտիուսի:
Սա ստորագրված է Բրայնի ամուսնական անունով
(«խարեյու համար»), որպեսզի կարողանան միասին լինել:*

ՀՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ
Տառապանքները
Դարձրի՞նք քեզ վայրի:
Մտածեցիր իմ մասին՝
Քո զավակի,
Լացեցի՞ր:
Գիտեմ, դու կնախընտրեիր,
Մի՛ կիսիր ինձ հետ արյունոտ ճշմարտությունը
Ա՛խ հա՛յր:

Ո՛չ, մանրամասները
Կարևոր չեն:
Բայց, սիրելի՛ Աստված,
Դու մոռացար
Մի մարդու, որ հեկեկաց...
Ու խնդրեց, որ փրկեն կյանքը
Ոչ իր համար,
Այլ իր կնոջ...

Դու տեսար մի հոր
Արցունքով ողողված դեմքը,
Բայց եղար անողորմ:
Ոչ մի հետք
Կարեկցանքի...
Դու դիտեցիր տառապանքը,
Մինչ իր եղբայրները
Բռլորը սպանվեցին:

Եվ դեռ իմ հավատը
Առ Քեզ մեծ է,
Ես դեռ վստահում եմ Քեզ՝
Առանց ատելության,
Որովհետև հայրս աղոթեց
Իր մահվան խոսքը,
Որ փրկես իր աղջիկներին:
Դո՛ւ լսեցիր:

8 *ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՃԱՄԲԱՐՆԵՐԸ 1945-1948*

Նորբերտն ուզում էր մեզ գտնելու հենց նույն օրը հանել Մաուֆհաուզենից: Բայց նա դեմ առավ իրական դժվարությունների՝ թույլտվություն ստանալու իշխանություններից մեզ տեղափոխելու համար: Ամերիկացիները գտնում էին, որ ես անչափ շատ հիվանդ էի հիվանդանոցից դուրս գրվելու համար: Նրանք ուզում էին համոզված լինել, թե ես կլինեմ բժշկական հսկողության տակ:

Բլանկան հրաժարվեց մեկնել առանց ինձ, և Նորբերտը չէր գնա առանց նրա: Այնպես որ պատասխանատու սպաները խախտեցին բյուրոկրատական պահանջները և որոշ կանոնները: Նրանք զանգեցին Լինցի զինվորական շտաբ և գտան բժշկական միավորմանը կցված մի բժիշկ: Նրանք դասավորեցին, որ այդ բժիշկը հաջորդ օրը ինձ քննի Հարթ ճամբարում:

Նորբերտն ինձ գրկեց երեխայի պես և դրեց մեքենայի հետևի նստատեղին: Ես փսխում էի Լինց գնալու ողջ ճանապարհին: Մինչ մեր Հարթ ճամբար հասնելը՝ ինչ-որ մեկը մեզ համար սենյակ էր պատրաստել: Մահճակալս պատուհանի մոտ էր, և ծառերի վրա կային երգող թռչուններ: Սենյակը հանգիստ էր, խաղաղ ու մաքուր: Հավատս չէր գալիս, որ սա իրականություն է: Ճամբարներում մենք խոսում ու երազում

Էինք ունենալ իրական տուն, մեռնել բնական մահով, իսկական մահճակալին: Հիմա ես մտածում էի՝ արդյոք մահանալու եմ:

Առաջին մարդը, որ եկավ ինձ այցելության Հարթ ճամբարում, Նյուսիեկ Շտրալն էր (Niusiek Strahl): Ինչպես Բլանկան և ես, Նյուսիեկը բազում ճամբարների վերապրած էր: Ավելի կարևորն այն էր, որ նա ատամնաբույժ էր, և այսպիսով ուներ որոշ բժշկական գիտելիք: Նա համաձայնվեց խնամել ինձ, մինչ բժիշկը կժամաներ:

Առաջին հերթին պետք էր ոջլահան լինել: Ճամբարների բոլոր վերապրածները պետք է ոջլահան լինեին: Բայց երբ Նյուսիեկը սկսեց այս ոջլահանման գործը, նա գրեթե ուշաթափվեց, ոչ թե իմ տեսքից, այլ իմ ով լինելուց: Նրա ընտանիքը և իմ ընտանիքը պատերազմից առաջ ապրել էին նույն բնակարանային համալիրում: Հիմա մենք նորից հարևաններ էինք Հարթ ճամբարում: Նյուսիեկը շարունակեց ինձ խնամել, երբ բժիշկը զբաղված էր այլ գործերով: Նա իրականացնում էր բժշկի հրահանգները՝ տալով ինձ վիտամիններ և ստուգելով արյունս:

Չնայած այսպիսի խնամքին՝ ես շարունակեցի մնալ ծայրահեղ վիճակում ողջ հունիսը: Իրականում մի գիշեր ես այնքան վատացա, որ Նյուսիեկն ու Նորբերտը ճամբարից գնացին օգնություն բերելու: Բայց նրանք հեռու չհասան: Սաստիկ անձրևամրրիկը չթողեց, որ նրանք Լինցի շրջակայքից հեռու անցնեն: Տապալված ծառերը փակել էին նրանց ելքը: Բլանկան երկար գիշերն անցկացրեց՝ դիտելով, թե ինչ-

պես էի նվաղում և անհանգստանալով իր ամուսնու և ընկերոջ ճակատագրի համար: Տղամարդիկ իրենց հերթին անցկացրեցին անհանգիստ երկար գիշերը՝ մտածելով, թե արդյոք կենդանի կլինե՞մ առավոտյան:

Ինչ-որ հիվանդանոցային խնամք կար այդ տարածքում, բայց Բլանկան, Նորբերտը և ես որոշեցինք, որ ես հիվանդանոց չեմ գնա: Մենք դեռ վախենում էինք հիվանդանոցներից: Մեր անցած վեց տարիների փորձը մեզ սովորեցրել էր, թե հիվանդանոցներից հետ չեն վերադառնում: Եվ այսպիսով, մենք հրաժարվեցինք նրանց թույլ տալ ինձ տեղափոխել ինչ-որ տարօրինակ տեղ, որից, մենք համոզված էինք, երբեք չեմ վերադառնա: Բարեբախտաբար բժիշկս՝ մայրը Գրինսպենը, համաձայնվեց ինձ թույլատրել մնալ Հարթ ճամբարում և բուժվել այնտեղ: Մեկ կամ երկու ամսից ես սկսեցի ապաքինվել:

Իմ ապաքինման ընթացքում Նորբերտն ու Նյուսիեկն ինձ տանում էին դուրս՝ մաքուր օդի, և զգուշորեն դնում ներքնակի վրա: Բլանկան ինձ մատուցում էր հրաշալի մրգահյութեր, ճիշտ այնպիսիք, որոնց մասին ես երևակայելով երազել էի ճամբարներում: Միայն այս խմիչքներն իրական էին: Ես անգամ ռադիո ունեի և առաջին անգամ այս վեց տարվա մեջ կարող էի երաժշտություն լսել:

Ա՛խ այդ ռադիոն: Ջո անունով մի ամերիկացի զինվոր էր տվել մեզ այդ ռադիոն: Նա իտալական ծագում ուներ և անգլերենից բացի խոսում էր նաև իտալերեն: Բայց նա ոչ մի բառ չէր հասկանում գերմաներենից, իդիշից կամ լեհերենից:

Իսկ մենք, իհարկե, չգիտեինք ո՛չ անգլերեն, ո՛չ իտալերեն: Ինչ-որ ձևով, սակայն, մենք կարողանում էինք հաղորդակցվել նրա հետ: Ջոն այնքան ազդված էր Բլանկայի և Նորբերտի վերամիավորման հրաշքից, որ Նորբերտին տվեց իր սեփական ամուսնական մատանին, Նորբերտն էլ իր հերթին մատանին դրեց Բլանկայի մատին: Մինչ այսօր Բլանկան գանձի պես պահում է այդ մատանին: Ջոն և մյուս բարի ու նրբանկատ ամերիկյան զինվորները երբեք չէին բացում տնից ստացած ծանրոցը՝ առանց կիսելու իրենց նվերները մեզ հետ:

Մի կեսօրի, դրսում հանգստանալիս, դիտելով թռչուններին թռչելիս և վայրի ծաղիկների ճոճվելը ամառային զեփյուռից, ես թույլ տվեցի, որ միտքս թափառի ու երևակայությունս սավառնի: Այդ օրը ես սկսեցի օրագրիս վերականգնումը:

Շուտով ես նորից սկսեցի բանաստեղծություններ գրել: Չնայած ռաբբիները մեզ ասել էին չարտասանել *Kaddish*-ը՝ հրեական աղոթքը մեռածների համար, որովհետև դեռ հույս կար, որ մեր սիրելիները կենդանի էին, ես իմ սրտի խորքում գիտեի, որ մայրս մեռած է: Ես գիտեի՝ այլևս չեմ տեսնելու մորս: Այսպիսով ես գրեցի:

ՏԱՐԻ - ԺԱՄԱՆԱԿ¹

(Մորս համար)

Ամպոտ երկինքներից նա ցած է նայում խոժոռած,

Կիտած հոնքերով, մտահոգ...

¹ JAHR – ZEIT – գերմաներեն է, նշանակում է տարի – ժամանակ:

Նրա սերը դեռ ջերմ է կրծքի ներքո,
Նրա փշրված սիրտը իրեն հանգիստ չի տալիս,
Տառապանքով... որ միայն մայրը կիմանա,
Որին պոկել են իր զավակից,
 մինչ այդ զավակը մեծացել է:
Ամպերը շուտով կցրվեն, այնպես որ, նա կարող է գտնել
Փոքրիկ աղջկան, որին լքեց...
Որի համար այնպիսի հույսեր էր փայփայում,
 այնպիսի երազանքներ,
 որին տվեց տարիներ շատ քիչ:
Թվում է՝ նրանք թռան-անցան, ասես քնքուշ աղավնի,
Բայց նա կտակեց հարստություն՝ կազմված սիրուց,
Հույսից, ճշմարտությունից, ապրելու կամքից՝
Այդքան քիչ ունեցած ժամանակում:

(Այսպիսով, անօգնական նա հեռացավ,
Երբ իմ կյանքը հագիվ էր սկսվել):

Միայն ես չէի, որ սգում էի իմ կորուստները: Ժամանակին բոլորս սկսեցինք սգալ մեր անձնական ողբերգությունների ահագնությունը: Ականատեսների պատմությունները սպանված մայրերի, հայրերի, ամուսինների, կանանց, աղջիկների, որդիների, եղբայրների և քույրերի՝ սկսեցին պտտվել Հարթ ճամբարում: Այս ցավը դարձավ անտանելի: Ամեն օր նորություններ էին ստացվում մեկ այլ հրեական համայնքի մասին՝ ամբողջովին ոչնչացված նացիստների և

նրանց համագործակիցների կողմից: Երբ այդ աղետի չափերն ավելի պարզ դարձան, մենք սկսեցինք խորտակվել վշտից ու դատարկությունից:

Եվ չնայած դրան, մենք չհանձնվեցինք: Մենք կանգնեցինք մի քիչ ավելի ուղիղ: Մենք հավաքեցինք մեր ջարդված կյանքերի փշուրները և սկսեցինք երկար, դժվար պայքարը՝ կառուցելու նոր ապագա: Մենք սովորեցինք լեզուներ և նոր արհեստներ: Մարդիկ կառչեցին իրարից ու սիրահարվեցին: Եղան հարսանիքներ և մեծ տոնակատարություններ, երբ կյանքի հայտարագիր մանուկներ ծնվեցին...

Շուտով ես բավականին լավացա, որ մտածեմ իմ ապագայի մասին: Ի՞նչ սքանչելի զգացում էր դա: Ես կորցրել էի մանկությունս ու վաղ պատանեկությունս, բայց ես ապագա էի ունենալու: Նորից ու նորից ես ինքս կրկնում էի այս բառերը. «Ես կենդանի մնացի: Ես վերապրեցի: Ես ապահով եմ: Ես ապագա եմ ունենալու»: Այս մտքերն այնքան ուրախալի էին, որ որոշ ժամանակ ես այլ բան չէի կարող մտածել: Բայց ժամանակը եկավ, ու ես սկսեցի մտածել ուրիշ բաների մասին: Ես սկսեցի մտածել մեր ապագայի մասին: Որտե՞ղ կապրեի: Արդյոք կանցկացնեի՞նք մեր մնացած կյանքը տեղահանված մարդկանց ճամբարներում:

Այն փաստը, որ գնալու տեղ չունեինք, ավերիչ էր: Վերականգնել մեր կյանքերը Լեհաստանում տարբերակ չէր, որովհետև այնտեղ մնացած ոչինչ չունեինք: Մեզ համար Լեհաստանը հսկայական գերեզմանոց էր: Բացի այդ, նրանք,

ովքեր վերադարձան Լեհաստան, դեմ առան ատելության և հակասեմիտիզմի:

Իսրայելը՝ հրեաների հայրենիքը, մեզ թվում էր երազանք: Բրիտանացիները շրջափակել էին Պաղեստինի ափերը, և նրանց պարեկությունները կամ սուզում էին, կամ էլ Հոլոքոստի վերապրածներով լի նավերը հետ դարձնում դեպի լեփ-լեցուն կալանքի ճամբարները:

Միացյալ Նահանգներն ունեին շատ խիստ ներգաղթի օրենքներ, և մեզնից քչերը համապատասխանում էին պահանջներին: Պատշաճ անձնական փաստաթղթեր, արյունակից հարազատներ, որ կարող էին մեզ հովանավորել, քաջ առողջության ապացույցներ, անհնար էր բոլորը ներկայացնել: Արևմտյան աշխարհի անտարբերությունը վերջին հարվածն էր վերապրած հրեաների ջախջախված հոգեբանությանը՝ քամելով մեր եռանդի վերջին նշույլները: Հետագայում ես իմացա, որ նացիստներն ավելի հեշտությամբ էին մուտք գործել Միացյալ Նահանգներ, քան վերապրածները:

Միևնույն ժամանակ բժիշկ Գրինսպենը՝ իմ հրաշալի ամերիկյան բժիշկը, ինձ բերեց իմ նոր կոշիկների առաջին գույգը: Կոշիկները կարմիր էին, ցածր կրունկներով և գեղեցիկ: Նա որոշել էր, որ իմ զբոսանքի ժամանակն է եկել: Առաջին մի քանի քայլերից, ուրախությունից այնպիսի գլխապտույտ սկսվեց, որ անմիջապես ուշագնաց եղա: Բարեբախտաբար բժիշկ Գրինսպենը բռնեց ինձ՝ մինչև գետնին ընկնելը: Նա ինձ ներս տարավ՝ հավատացնելով, թե հաջորդ օրը

նորից կփորձենք: Մենք փորձեցինք, և հաջողությամբ քայլեցի: Ես ամեն օր քայլում էի և քաշ ավելացնում:

1945-ի ուշ ամռանը բոլորին պարզ էր, որ ես կենդանի կմնամ: Այդ ժամանակ էր, որ Նորբերտը որոշեց գնալ Լեհաստան՝ ընտանիքի անդամներին և ընկերներին փնտրելու: Նա գտավ իր զարմուհի Յաժային, որին թաքցրել էր մի քրիստոնյա ընտանիք: Բայց Յաժայի մայրը՝ Նորբերտի քույրը, զոհվել էր Նորբերտի ընտանիքի մյուս բոլոր անդամների հետ:

Լեհաստանում գտնվելիս Նորբերտը փորձեց հետ ստանալ որոշ դրամ և զարդեղեն, որ իր ընտանիքը պահելու էր տվել լեհ ընկերներին: Ի սարսափ իրեն՝ Նորբերտը բառացիորեն դուրս էր քշվել Կրակովից: Որոշ ժամանակ անց լեհերը կոտորեցին քառասուններկու հրեա վերապրածների՝ Լեհաստանի Կիլցե քաղաքում: Չնայած պատերազմն ավարտվել էր, լեհական հակասեմիտիզմը շարունակ կար: Նորբերտը ձեռնունայն վերադարձավ Ավստրիա:

Իմ տասնյոթերորդ ծննդյան օրվա առիթով Նորբերտն ինձ տվեց մի փոքրիկ ոսկե մատանի: Մատանին ուներ հատուկ իմաստ, որովհետև այն պատկանել էր մի երիտասարդի, որը մատանու ուռուցիկ մասի խոռոչում պահում էր թույն: Երիտասարդն ըստ երևույթին նպատակ ուներ «ճիշտ պահի» ինքնասպանություն գործել: Լավագույն դիտակետից նայելիս շատ հանդուգն արարք:

Մատանի ունենալն, անշուշտ, արգելված էր ճամբարներում, բայց այս երիտասարդը խաբել էր իրեն գերողներին՝

մատը կապելով արյունոտ վիրակապով: Ցավով նրան երբեք չվիճակվեց ինքնասպանություն գործել: Նացիստները դրան ավելի շուտ հասան:

Սպանվելուց հետո նրա մարմինը, ինչպես մյուս զոհերի մարմինները, խուզարկվեց թանկարժեք իրեր գտնելու նպատակով՝ նախքան դիակիզարան նետելը: Որոնողները բանտարկյալներն էին, որոնց հանձնարարված էր այս զարհուրելի գործը: *Sondercommandos*-ներից² մեկը, ինչպես նրանց կոչում էին, գտավ մատանին ու կարողացավ այն պահել: Պատերազմի ավարտից հետո այս մարդը մատանին տվեց Նորբերտին, որովհետև զոհի ընտանիքից ոչ մեկը չէր վերապրել, իսկ Նորբերտը եղել էր զոհի ընկերը:

Նորբերտն, իր հերթին, այդ հատուկ մատանին տվեց ինձ, որովհետև նա մտահոգ էր, որ ես կարող է չհիշեմ, որ ես կարող եմ մոռանալ: Նորբերտը հավատում էր, թե մոռանալը վտանգավոր է: Մեր պարտքն էր, որպես վերապրողներ, պատմել աշխարհին:

Նորբերտն ակտիվիստ էր: Բացի եբրայական ներգաղթի միության (HIAS - Hebrew Immigrant Aid Society) աշխատակից՝ նա արագորեն սկսեց մասնակցել ճամբարի քաղաքական հարցերին: Նա միշտ պայքարում էր մեր համայնքի, ինչպես նաև առանձին անդամների իրավունքների համար: Երբ օկուպացիոն ուժերը փորձում էին Ավստրիայի կառավարությանը վերադարձնել լքված ագարակը, որի վրա կառուցվել էր Հարթ ճամբարը, Նորբերտն օգնեց կազմակերպելու բո-

² Sondercommandos – հատուկ ջոկատային – զեւմ.:

դոքի ցույց: Մի գիշերվա ուշադիր պլանավորումից հետո նա մեզ քայլերթով առաջնորդեց դեպի ռազմական շտաբ: Մենք վճռել էինք, որ չենք վերադառնա Մաուրիսիային: Եվ մենք հաղթեցինք: Մա մեծ հաղթանակ էր մեզ համար: Վեց տարվա գերությունից, վեց տարվա անգորությունից հետո մենք վերջապես կրկին ապրողների երկրում էինք: Մենք վերջապես ինչ-որ չափով մեր ճակատագրի տերն էինք:

Ազատությունը մեզ նաև ուրիշ զգացողություններ բերեց: Վերապրելով այդքան տանջանք՝ ես սկսեցի ինձ աննկուն զգալ: Սկզբում այս զգացումը զուտ սևեռամիտ գաղափար էր, որին ես դիմադրում էի և մի կողմ վանում: Հետո, ժամանակի ընթացքում, զգացումը բյուրեղացավ, մինչև ես սկսեցի հավատալ, թե այլևս ոչինչ ինձ երբեք ցավ չի պատճառի: Ես ծանոթ էի ամեն ցավի և ապրել էի ամեն տանջանք: Ես տեսել էի այդ ամենը և կորցրել ամեն ինչ:

Գերմարդկային զգալը կարող է էջֆորիկ լինել, բայց դա երկար չի տևում: Հենց որ սկսում ես ուրիշների մասին մտածել և զգացմունք ունենալ, մենք դառնում ենք խոցելի: Իսկ ես հոգ էի տանում: Ես տեսնում էի իրենց երեխաներին կորցրած վերապրածների հոգեվարքային ցավը: Ես նրանց վշտի ականատեսն էի, ու ես սկսեցի մտածել ողբերգության ահագնության մասին: Ես մտքերս վերածեցի բանաստեղծության:

ԷԼ ԻՆՉ ԿՈՐԱՎ

Մեկ ու կես միլիոն

հրեա երեխաներ

և նրանց զավակների
զավակներ...

Անհավատալի թվեր,
Բայց ինչն է ցավեցնում առավել.
Սևեռնամիտ միտք է,
Թե ուրիշ էլ ինչ է կորել,
Եվ ինչպես երբևէ
Կսկսենք սգալ
Այն սերունդներին,
Որ երբեք չեն ծնվի:

Մի առաջնորդ, մի հերոս,
Մի ժառանգորդ իր ազգի:
Մի շինարար: Մի նկարիչ:
Մի բուժող: Մի ծաղրածու:

Չգտնված բուժումները,
Չգրված երաժշտությունը,
Չերագած բոլոր երագանքները,
Կամ փշրված... կամ ջարդված...
Աներևակայելի գանձը
Անչափելի կորուստների
Չողբացած,
Չասված:

Հետադարձ հայացքով նայելով՝ ես կարծես հոգեպես անհավասարակշիռ եղած լինեի: Ես շատ էի լալիս: Ես շատ էի ծիծաղում: Ես տենչում էի մարդ, աղմուկ և գործունեություն: Ես սիրահարվում էի և հիասթափվում, առնվազն շաբաթը մեկ անգամ: Ես ուզում էի միայն ապրել ու վայելել կյանքը: Բայց Նորբերտն ու Բլանկան ուրիշ նախագծեր ունեին ինձ համար: Նրանք պնդում էին, որ ես վերսկսեմ կրթությունս: Եվ այսպիսով, ուսուցիչների օգնությամբ ուսումնասիրեցի առարկաների լայն շրջանակ՝ ներառյալ անգլերեն, ֆրանսերեն, մաթեմատիկա, արվեստ, փիլիսոփայություն և երաժշտություն: Ես Նորբերտի հետ նաև աշխատում էի Եբրայական ներգաղթի միությունում և դարձա թատերախմբի անդամ: Օրվա ժամերը չէին հերիքում ամեն ցանկացածս կատարելու համար:

Բայց ուշ գիշերով ապրածս սարսափների հուշերը գալիս էին որպես մղձավանջներ: Այդ պահերին էր, երբ ես մոմ էի վառում ու բանաստեղծություններ գրում՝ հանգստացնելով ինքս ինձ՝ նորից քնելու համար:

ՔԱՐԵՐԸ ՉԵՆ ԼԱԼԻՍ

Կար ժամանակ, ես գիտեի հաստատ,
որ դժոխքն ավելի վատ չէր, քան
...մարդկության աղբահորը, ուր
իմ հոգին էր ընկղմվել,

բայց երբ մառախուղը սկսեց պարզվել,

Ես գրկված էի ցավից ու վախից
և միանգամայն համոզված, որ քարերը չեն լալիս,
ես ինձ օրորելով քուն մտա:

Իմ գիշերները լի էին սարսափով, բայց օրերս լի էին
հաճելի անակնկալներով: Ես միշտ անհամբեր սպասում էի
Միավորված ազգերի կազմակերպության օգնության և
Վերականգնողական վարչության³ ծանրոցներին: Մի անգամ
ծանրոցներից մեկում գտա երեկոյան զգեստ: Ես այն հագա
իմ առաջին նոր տարվա երեկույթին:

Մենք նույնպես ծանրոցներում ավելի պիտանի հա-
գուստ էինք գտնում: Եվ ինչը չէինք գտնում, պատրաստում
էինք ինքներս: Մենք մոտակա ազարակատան պատուհան-
ներից հանեցինք վարագույրները և վարպետորեն ձևափոխե-
ցինք հագուստի: Մենք կարեցինք վերնաշապիկներ, ներքնա-
զգեստ և անգամ լողազգեստներ՝ դաշտերում ընկած փա-
փուկ, մետաքսյա պարաշյուտների մնացորդներից:

Ինչ-որ մեկը ճիշտ ժամանակին ինձ տվեց կապույտ
տաֆտայի կտորի մի մաս, որ կարողանամ շրջազգեստ կա-
րել հատուկ առիթով մի համերգի համար, որին բժիշկ Գրինս-
պենը հրավիրել էր Բլանկային, Նորբերտին և ինձ: Ես նախ-
կինում երբեք չէի եղել համերգի: Ակնկալությունը գրեթե
նույնքան հաճելի էր, որքան բուն միջոցառումը:

³ Անգլերեն կլիսի – United Nations Relief and Rehabilitation Administration (UNRRA):

Բժիշկ Գրինսպենը մեր հետևից եկավ ջիպով, որը վարորդ ուներ: Ուղևորությունը սքանչելի էր, և շուտով հասանք զինվորական հաստատությունը: Համերգը բացօթյա էր, և եղանակը հեքիաթային: Որքան որ աչքը կարող էր տեսնել, ողջ տարածքը ծածկված էր խոտի վրա նստած զինվորներով՝ ծիծաղող և հանգստացող: Կային շատ դրոշներ և ուրիշ զարդարանքներ: Մթնոլորտն այնքան տոնական էր, որ ես ուրախությունից հարբեցի:

Ես կարող էի տեսնել բեմը և լսել նվագախմբի գործիքներ լարելը: Նվագախմբից մի քանի մետր այն կողմ երեք բարձրաստիճան սպաներ նստած էին աթոռներին: Մնացած բոլորը նստած էին գետնին: Երբ մենք մոտեցանք, սպաները կանգնեցին, և բժիշկ Գրինսպենը մեզ ներկայացրեց:

Հետո պատահեց ամենահիանալի բանը: Գեներալը ժպտաց և մեծ ժեստով խոնարհվեց մեր առաջ: Նա ինչ-որ բան ասաց իր ընկերներին և հրավիրեց մեզ նստելու իրենց հատուկ տեղերում: Երբ համերգն սկսվեց, բոլորը տեղավորվեցին խոտի վրա, բացի երեք վերապրածներից, որոնք նստած էին աթոռներին: Ես ինձ զգացի վերածնված... արժանավոր... մարդ:

Եկավ ժամանակ, երբ ես նորից հանդիպեցի Կրակովի գետտոյից ինձ մոտ ընկերուհի Ռենային: Ա՛խ ինչ ուրախություն էր նրան կենդանի և ինձ մոտ գտնելը: Բայց նույնիսկ այս երջանիկ առիթը պղտորվեց: Ես իմացա, որ նրա հայրը, որին խորապես սիրում էի, սպանվել է Օսվենցիմում:

Երկար ժամանակ չպահանջվեց, որ Ռենան և Ես վերսկսենք մեր հին ընկերությունը: Նորից մենք ծիծաղեցինք ու լաց եղանք միասին: Մենք գնացինք միջոցառումների ու պարերի: Պատահական դիտորդին մենք կթվայինք որպես երկու սովորական դեռահասներ: Երբ լսեցինք, որ Վերականգնման և վարժեցման կազմակերպությունը⁴ առաջարկում է «*Ինչպես դառնալ դիմահարդար*» դասընթացներ, անմիջապես անդամագրվեցինք:

Ինչպիսի՜ ժամանակ ունեցանք՝ մեկս մյուսիս գեղեցկացնելով: Ռենան հաստ քուկը տարածում էր դեմքիս ու պարանոցիս, և այն անմիջապես պնդանում էր: Հետո նա գնում էր փնտրելու ինչ-որ նյութ՝ մածուկը հանելու համար, մինչ Ես սպասում էի, որպես սառած մումիա, երդվելով նույնը իր գլխին բերել:

Դեռահասներին հատուկ միևնույն ձևով Ռենան պաշտպանում էր ինձ, երբ Ես ընկնում էի փորձանքի մեջ: Օրինակ, պատահեց այն դեպքը, երբ մի օր՝ կեսօրից հետո, ամերիկյան լեյտենանտի հետ գնացի մոտոցիկլետ քշելու: Որքան Ես սիրեցի այդ հուզմունքը, արագությունը, քամին մազերիս մեջ: Բայց հետո աղետ պատահեց: Երբ մենք մոտեցանք Լինցի բավական վտանգավոր հատման կետի, շեղվեցինք, որպեսզի դիմացից եկող տրամվային չհարվածենք: Մենք երկուսով էլ դուրս թռանք ճանապարհին՝ թռչելով տարբեր ուղղություններով:

⁴ Անգլերեն - Organization for Rehabilitation and Training (ORT):

Երիտասարդը հետո ինձ ասաց, որ սկզբում ինքը մտածել է՝ ես մեռել եմ: Բայց ես մեռած չեի: Ես կենդանի էի՝ կապտուկներով և արյունահոսելով, բայց կենդանի: Կարծում եմ, որ այդ պահին ես Բլանկայից ավելի շատ էի վախենում, քան մահից: Բլանկան ինձ դուրս չէր թողնի մեկ ամիս, եթե պարզեր՝ ես ինչ վիճակի մեջ էի ընկել: Այսպիսով, Ռենան ինձ մտցրեց իր սենյակը, մաքրեց ինձ և մաքուր շորեր սովեց: Հետո նա թաքցրեց այդ գաղտնիքը իմ այլ փորձանքների հետ:

Մի քանի ամիս Հարթ ճամբարում անցկացնելուց հետո մենք տեղափոխվեցինք Բինդերմիխել ճամբարը (Camp Bindermichel): Չնայած որ հիմա մենք ապրում էինք բնակելի շենքում մի խմբով, բնակարանները դեռ շարունակ լեփլեցուն էին մարդկանցով և չէին համապատասխանում ազատության և ամենօրյա կենցաղին, որ մենք երազում էինք: Գրեթե այդ ժամանակ էր, որ Ռենան հանդիպեց մի երիտասարդ վերապրողի, որի անունն էր Մարկ: Նրանք սիրահարվեցին և շուտով ամուսնացան:

Իհարկե, մենք բոլորս մեզ պահում էինք և կյանքին վերաբերվում տարբեր ձևերով: Ճիշտ այնպես, ինչպես Բլանկան անհանգստանում էր իմ անշրջահայաց լինելու համար, ես անհանգստանում էի նրա տխրության համար: Օրեցօր դիտում էի, թե ինչպես Բլանկան ժամերով հանգիստ նստում էր աչքերը փակած, լսում երաժշտություն: Բլանկան կարիք ուներ հանգստի ու մենության, ճիշտ այնքան, որքան ես տենչում էի աղմուկ և գործողություն:

Կար Հենրիկը՝ Կրակովի գետտոյից մի ընկեր: Նա տասնութ տարեկան էր, և Հոլոքոստը նրան թողել էր աշխարհում լրիվ միայնակ, բացի Բլանկայից, Նորբերտից և ինձնից: Նա կենսափորձ էր ձեռք բերում սև շուկայում ապրանքներ փոխանակելով: Ավելորդ է ասել՝ նրա գործունեությունն անօրինական էր, և նրան ուշադիր հետևում էին: Զինվորական ոստիկանությունը կամ ավստրիական իշխանությունները շարքաթը մեկ անգամ նրան բռնում էին:

Հենրիկի համար ես սրտումս նուրբ անկյուն ունեի. առաջինը, որովհետև նրան հիշում էի գետտոյից, բայց նաև, երբ ես Մաուրիտիուսի հիվանդանոցում էի, ինձ թաքուն բերում էր հրաշալի խմիչքներ: Հիմա Հարթ ճամբարում նա խոստովանեց իմ նկատմամբ ունեցած հավերժական սերը:

Բլանկան և Նորբերտը փորձում էին պաշտպանել և վերափոխել Հենրիկին: Բայց Հենրիկը հազվադեպ էր օգտագործում իր հմայքն ու խելքը արարչական ձևով: Եվ այսպիսով, ամեն անգամ, երբ Հենրիկը ձերբակալվում էր, Նորբերտը գրավի դիմաց ազատում էր նրան ու երաշխավորում նրա համար: Այս ամենի ընթացքում ես խաղում էի *femme fatale*-ի (ճակատագրական կին) դերը՝ նրան բանտում այցելելով և ինձ զգալով խիստ ազնվական:

Ճիշտ այն պահին, երբ ես սկսում էի ինձնից գոհ լինել, անգամ երջանիկ զգալ, ասես մեկը փորս խառներ, և ես դառնում էի տխուր, մռայլ և զայրացած: Հետո գալիս էին կասկածները: Ես ջանում էի պայքարել դրանց դեմ, անտեսել դրանք: Բայց հարցերը մնում էին: Ինչո՞ւ ես, ինչո՞ւ եմ ես կենդանի:

Ինչո՞ւ ոչ ուրիշները: Արդյոք ես մեղավոր չպիտի զգա՞մ:
Պոեզիան տրամադրում էր ժամանակավոր փախուստ:

ԻՄ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԸ⁵

Ես կառուցեցի ինձ համար մի արևմտյան պատ

Իմ հոգու անկյունում

Եվ բավական հեռու, սրտիս խորքում,

Ես հենվում եմ այդ պատին, որ հիշեմ

Ուրիշ ժամանակ, ուրիշ դարաշրջան,

Արցունքների և զայրույթի ուրիշ աշխարհ

Եվ այնտեղ ես հաճախ պառկում եմ, որ հանգստացնեմ

Իմ խոր ցավը կրծքիս ներսում:

Աշխատելով Հրեական ներգաղթի օգնության միությունում (HIAS)⁵ մենք ցավալիորեն տեղյակ էինք այն բազմաթիվ խոչընդոտներին, որոնց առնչվում էին տեղահանված անձերը՝ ջանալով արտաքին աշխարհի մուտքի արտոնագիր ստանալ: Երբևէ տեղեկանալիս, որ արևմտյան մի երկիր մուտքի թույլտվություն է տալիս այն մարդկանց, որոնք տիրապետում են արհեստների, ինչպես դերձակներ, գյուղատնտեսներ, հիասթափվում էինք, որովհետև մեզնից քչերն այդ որակավորումներն ունեին:

Տասնութ և ավելի ցածր տարիքի որբերը սովորաբար կարող էին որդեգրվել ամերիկացիների, կանադացիների և

⁵ Ողբի պատ – Երկրորդ հրեական տաճարի պատի մի մաս՝ հին Երուսաղեմում, որը համարվում է սրբավայր:

այլոց կողմից: Տարօրինակ է, թե ինչպես ծննդյան թվականները հետապնդում էին մեզ: Գետտոներում և ճամբարներում պատանիների համար կախարդական տարիքը տասնչորսն էր: Այդ տարիքից փոքր երեխաները սպանվում էին: Հետևաբար գետտոներում և ճամբարներում կարևոր էր ավելի մեծ երևալ: Հիմա տասնութը դարձավ կախարդական թիվը, և կարևոր էր ավելի ջահել երևալը: Չնայած կարող էի համարվել որբ, ես չէի գնա առանց Նորբերտի և Բլանկայի:

Շուտով ես կլանվեցի աշխարհի նորություններով՝ հատկապես Պաղեստինի նորություններով: Օր ու գիշեր երազում էի գնալ այնտեղ, որտեղ ես կարող էի տուն ունենալ իմ հայրենակիցների մեջ: Ես բանաստեղծություն գրեցի Պաղեստինում ապրելու իմ բուռն ցանկությունն արտահայտելու համար:

ԾՆՆԴՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արդյոք հորս անունը Հակոբ⁶ չէր,

Արդյոք նա չմեռավ նախապաշարմունքի կրակում

Այնպես որ ես կարողանամ

Տուն գնալ ու պահանջել իմ ծննդյան իրավունքը:⁷

Արդյոք նրա եղբայրները չեն կիսել նրա ճակատագիրը,

⁶ Հակոբը բնագրում Jacob ձևով է:

⁷ Ծննդյան իրավունքը բառացի է, սակայն այն իրականում ավելի իդեոմատիկ նշանակություն ունի: Խոսքը հայրենի հողի հետ կապ ունենալն է: Օրինակ՝ կա Birthright Armenia, որ օգնում է սփյուռքահայ երիտասարդությանը ոչ միայն տեսնել Հայաստանը, այլև այնտեղ աշխատելու, ապրելու փորձառություն ունենալ:

Մինչ այլ ազգեր զուր բանավիճում էին,
Արդյոք չի հոսել նրանց արյունը գետերում,
Որովհետև նրանք գնալու տեղ չունեին...

Երբեք այլևս պետք է չլինի
Այդպիսի ուրիշ մի ժամանակ մեզնից նրանց համար,
Ում զավակներն ապրում են շատ երկրներում,
Որ նրանք դեմ առ դեմ չգան
Ջախջախման ինչ-որ իսելագար «գերագույն» ուժի
պետության կողմից,
Երբեք այլևս այդպիսի ժամ չպիտի գա,
Որ մենք նորից մնանք մենակ...
Առանց մի տան, որ մեր սեփականը լինի:

Ես մայրամուտ եմ նկարում վարդագույն ու
մոխրագույն գույներով,
Ավելացնում մի փոքր կապույտ... բայց երբ օրը
Ավարտվում է... Ես պառկած եմ արթուն
ու աչքերս սևեռած
Եվ անկարող եմ շնչել, որովհետև օդ չկա...

Հագեցնելու համար քաղցս և ծարավս
Ես քայլում էի Սիոնի դարպասի կողքով
Եվ պարզում թներս քնքշորեն շտապելով,
Որ ճաշակեմ հոգուս ազատությունը:

Այո՛, Հակոբ էր հորս անունը,

Եվ նա մեռավ նախապաշարմունքի կրակի մեջ,
Այնպես որ ես կարողանամ
Տուն գնալ և պահանջել իմ ծննդյան իրավունքը:

Christian and family name: <u>Sonia Schreiber</u>	Nom et Prénom: <u>Sonia Schreiber</u>
Place and date of birth: <u>27.2.1928</u> <u>Krakow</u>	Lieu et date de naissance: <u>27.2.1928</u> <u>Krakow</u>
Citizenship: <u>stateless</u>	Nationalité: <u>apatride</u>
Unmarried, married, divorced, widowed: <u>unmarried</u>	État (célibataire, marié, divorcé, veuf [re]): <u>filles</u>
Profession: <u>officer</u>	Profession: <u>fonctionnaire</u>
Address: <u>Linz-Rainwasserstr. 19</u>	Domicile: <u>linz-Rue de Rainwasser 19</u>
Size: <u>165 cm</u>	Taille: <u>165 cm</u>
Complexion: <u>round</u>	Visage: <u>ronde</u>
Eyes: <u>brown</u>	Couleur des yeux: <u>brune</u>
Hair: <u>of fair</u>	Couleur des cheveux: <u>blonds</u>
Distinguishing marks: <u>none</u>	Signes particuliers: <u>pas</u>
<u>linz. 10.9.46</u> Place and date of issue	<u>linz. 10.9.46</u> Lieu et date de la délivrance
<u>i.d. Wimmilly</u> Signature of officer in charge Officer of the passport office	<u>i.d. Wimmilly</u> Signature de l'officier en charge Bureau de passeports

*Սոնյայի փաստաթղթերից մեկը, որում նա կոչվում է
քաղաքացիություն չունեցող անձ*

Մինևույն ժամանակ մինչ միջազգային նորություններն անդրադառնում էին Պաղեստինի իրադարձություններին, Եվրոպայի իրադարձությունները նույնպես զրավում էին աշխարհի ուշադրությունը: 1945-ին և 1946-ին դաշնակիցները Գերմանիայի Նյուրենբերգ քաղաքում դատի տվեցին նացիստական այն առաջնորդներին, որոնք մնացել էին կենդանի: Նախկին նացիստ առաջնորդները մեղադրվեցին

մարդկության հանդեպ գործած ոճիրների համար՝ սպանություն, բնաջնջում, ստրկացում, տեղահանում և այլ անմարդկային արարքներ՝ ուղղված խաղաղ բնակիչների հանդեպ՝ մինչ պատերազմը և նրա ընթացքում:

Նորբերտը գնաց Նյուրենբերգի դատավարություններից մի քանիսին և դրանք նկարագրեց մեզ: Ի զարմանս մեզ՝ նացիստներն իրենք իրենց անմեղ էին համարում: Նրանք իրենց պաշտպանում էին՝ ասելով, թե միայն ենթարկվել են հրամաններին: Նյուրենբերգի դատավորները քսանհինգ մեղադրյալների դատապարտեցին մահվան՝ կախաղանով, իննսունյոթը ստացան քսանհինգ տարուց ավելի ժամկետի բանտարկություն, և քսանը դատապարտվեցին ցմահ: Երեսունհինգը ճանաչվեցին անմեղ: Բազում բարձրաստիճան նացիստ պաշտոնյաներ երբեք չդատվեցին: Հենց պատերազմն ավարտվեց, Հիտլերն ինքնասպան եղավ, մյուսները փոխեցին իրենց ինքնությունը և նոր կյանք սկսեցին ստեղծել Արգենտինայում, Ավստրալիայում, Կանադայում, Գերմանիայում ու Միացյալ Նահանգներում:

«Իսկ ի՞նչ եղավ մյուս մարդասպաններին», - մենք ուզում էինք իմանալ: Հազարավոր էսեսական տղամարդիկ և կանայք երբեք չդատվեցին: Մեզ թվաց, թե արդարության կշեռքը փշրվեց մարդկության դեմ գործած ոճիրների ծանրությունից:

Եվ նրանք՝ այս մարդասպանները, այնպիսի սովորական տեսք ունեին: Ավելի հեշտ չէ՞ր լինի, եթե նրանք մարդասպանի տեսք ունենային: Բայց ի՞նչ տեսք ունի մար-

դասպանը: Ի՞նչ տեսք ունի գոհը: Ի՞նչ տեսք ունի վերապարածը:

ՍՊԻՆԵՐ (ԵՎ ՍՏԵՐԵՈՏԻՊԱՑՈՒՄ)

Մեզնից ոմանք կրում են տեսանելի սպիներ,
Ոմանք այլ տեսակի սպիներ են կրում,
Երկուսն էլ ազդում են ողջամտության վրա
Եվ վերացնում մտքի խաղաղությունը:

Տեղահանվածների ճամբարներում եղած ողջ ժամանակ Նորբերտը փնտրում էր իր քեռի Հարրի Ուայթին: Հարրին Լեհաստանը թողել էր պատերազմից առաջ և հաստատվել ինչ-որ տեղ Բոստոնի մոտ: Վերջապես 1947 թվականի վերջին Նորբերտը հանդիպեց մեկին, որն ասաց, թե քեռի Հարրին և իր ընտանիքն ապրում էին Մասաչուսեթի Փիիբադի քաղաքում⁸: Նորբերտը գրեց քեռի Հարրիին, որն անմիջապես համաձայնվեց հովանավորել մեզ: Վերջապես մենք համապատասխանում էինք Միացյալ Նահանգներ մտնելու պահանջներին:

Հարրի Ուայթը բարի և առատաձեռն մարդ էր: Այն պահից, որ Նորբերտն առաջին անգամ կապի մեջ մտավ նրա հետ, քեռի Հարրին մեզ սկսեց ուղարկել հոգատար նամակներ, որոնք դարձան մեզ դեպի արտաքին աշխարհ տանող փրկապարանը: Քեռի Հարրին արագ գործեց, որ ստորագրի պահանջված վստահագրերը, որոնցով խոստացավ, թե Բլան-

⁸ Peabody, Massachusetts.

կան, Նորբերտը և ես «բեռ չենք դառնա Միացյալ Նահանգների կառավարության համար»:

Մինչ մենք սպասում էինք մեր մուտքի արտոնագրերին, ես շարունակում էի ունենալ իմ մասնավոր պայքարն Աստծու հետ: Հետևյալ բանաստեղծությունը ամենամտերմիկ ձևով նկարագրում է այս ներքին հակամարտությունը և հաստատում գործարքը, որ ես վերջիվերջո կնքեցի իմ հավատքի հետ:

ՈՐՏԵ՞Ղ ԷՐ ՄԱՐԴԸ

Գիտես, ես քեզ ասում էի, օ՛, Տեր,

Ես անիծել եմ անունդ օրհնյալ,

Ես կարիք ունեի օգնության մի նշանի, մի խոսքի,

Եվ այլևս ոչ ոք չկար, որ մեղադրեի:

Քանզի լռությունդ ինձ խենթ դարձրեց,

Ես պատերը մագլցեցի ու մազերս փետեցի,

Թոքերս արյուն էին թքում և միևնույն է՝

Դու չէիր լսում իմ աղոթքը:

Ես քեզ կանչեցի վայրի տանջանքում

Եվ շատ հուսահատությամբ անվանդ հայիոյեցի,

Այդ ժամանակ ես միայն մանուկ էի,

Եվ այնտեղ այլ մեկը չկար՝ մեղադրելու:

Բայց հիմա ես կարծում եմ՝ Աստված մեռած չէր,

Փոխարենը հարցնում եմ, թե *որտե՞ղ էր մարդը*:

1948-ի մայիսի 4-ին՝ երեք տարի անց, երբ Մաուր-հաուզենի դարպասները բացվել էին բանտարկյալների կողմից, Բլանկան, Նորբերտը և ես ժամանեցինք Նյու Յորք: Մի քանի օր անց քեռի Հարրին և իր հրաշալի ընտանիքը ողջունեցին մեզ Փիլբադիում: Այնտեղ նրանք օգնեցին մեզ գտնել բնակարան, ինչպես և աշխատանքներ տեղի գործարանում: Մենք նոր կյանքը սկսելու շեմին էինք:



*Բլանկան և Նորբերտը
տեղահանվածների ճամբարում*

9 ԵՍ ԱԶԱՏ ԵՄ

Ես տասնինը տարեկան էի, երբ նոր կյանք սկսեցի Միացյալ Նահանգներում: Այդ ժամանակ ամերիկացիների մեծ մասը չէր ուզում լսել Հոլոքոստի վերապրածների կրածների մասին (Հոլոքոստ բառը նույնիսկ բառապաշարում չկար): Եվ վերապրածների մեծ մասը ցանկություն չունեի խոսել դրա մասին՝ բացառությամբ իրար հետ: Երբ ինչ-որ մեկը խոսում էր լռությունը և խոսում դրա մասին, ոչ ոք լրջորեն չէր լսում: Հետագայում՝ շատ ավելի ուշ, ոմանք լսում էին, բայց շատ քչերն էին խորապես ըմբռնում: Եվ այսպիսով, սկզբում ես չէի խոսում Հոլոքոստի մասին: Ես փոխարենը կենտրոնացա սովորական կյանք ստեղծելու վրա:

Բայց ի՞նչ է ներկայացնում սովորական կյանքը Հոլոքոստի վերապրածի համար: Երիտասարդները, որոնց ես հանդիպեցի 1948-ին, ուրիշ աշխարհից էին: Նրանք մեծացել էին իրենց ընտանիքներում, ապրել էին տներում, քնել մահճակալների վրա, օրը երեք անգամ կերել և դպրոց գնացել: Իսկ ես մյուս կողմից, ես սովի էի մատնվել ու ճնշվել: Ես ժամադրվեցի մի քանի երիտասարդների հետ, բայց այս ժամադրությունները միշտ աղետալի էին: Մենք պարզապես ոչ մի ընդհանրություն չունեինք:

Հետո՝ 1949-ին, ես հանդիպեցի բժիշկ Մարկ Վայցին և սիրահարվեցի նրան: Մարկը տարբեր էր այն երիտասարդ-

ներից, որոնց հետ ժամադրվել էի: Նա ավելի մեծ էր և ավելի հասուն: Պատերազմի ժամանակ նա ծառայել էր բժշկական կորպուսում և վիրավորվել էր Նորմանդիայի ներխուժման ժամանակ: Եվ որպես արդյունք իր պատերազմական փորձառությունների, նա որոշ տեղեկություններ ուներ, թե ինչպես մարդիկ կարող էին իրար խիստ ցավ պատճառել: Նա բավականին ուժեղ էր դիմանալու իմ անցյալին և օգնելու ինձ ներկայում ապրել: Մենք ամուսնացանք 1950-ին: Երկու տարի անց ծնվեց մեր որդին: 1955-ին մենք ունեցանք երկվորյակ աղջիկներ:

Բլանկան և Նորբերտը նույնպես բուռն ձևով վերականգնում էին իրենց կյանքը: Նրանց որդին ծնվեց 1950-ին և դուստրը՝ 1953-ին: Կյանքը հեշտ չէր, բայց նրանք կարողանում էին ապրել: Նորբերտը ստեղծեց հաջողակ բիզնես: Ցավոք, նա սրտի լուրջ խնդիր ուներ, և նրա կյանքն ավարտվեց 1974-ին: Կորուստը վիթխարի էր:

1950-ականներին և 1960-ականներին իմ կյանքն ընթանում էր նույն ձևով, ինչպես այլ ամերիկյան կանանց ու մայրերի՝ առնվազն արտաքինապես: Իմ ներաշխարհը, սակայն, կտրուկ տարբերվում էր: Նորից ու նորից ես լսում էի մորս վերջին խոսքերն՝ ուղղված ինձ. «Հիշի՛ր, պատմել աշխարհին»: Բայց ինչպե՞ս ես կարող էի դա անել: Ինչպե՞ս կարող էի պատմել մի աշխարհի, որը չէր ուզում լսել: Ինչպե՞ս կարող էի խոսել անխոսելիի մասին՝ բառեր, որ ինքս չէի ուզում լսել: Եվ այսպես, ինչպես միշտ, ես դիմեցի բանաստեղծությանը: 1965-ին գրեցի մի շատ երկար բանաստեղծու-

թյուն, որը կոչվեց «Իր եղբոր պահապանը»: Հետևյալ տողերը հատված են այդ բանաստեղծությունից.

«ԻՐ ԵՂԲՈՐ ՊԱՀԱՊԱՆԸ» բանաստեղծությունից
Մնացել են միայն մի բուռ վերապրածներ,
Որոնք վշտով և ուժասպառ ականատես եղան
այդ մղձավանջին:
Արդյոք պե՞տք է կիսենք նորից մանրամասներ
արտառոց,
Արդյոք պե՞տք է ցույց տանք վերքերն ու
սպիները պոկենք,
Մարդկանց խիղճը պետք է արթնանա
Վախից, որ նահատակների անտառը չմոռացվի:
Ա՛խ ինչ սրբապղծություն է մոռանալ այս մորթը,
Որ մաքրվեն բծերը... կորչի այս ոճրագործությունների
պատմությունը:

Երբ ես առաջին անգամ իմացա այդ պատմության ունիզիոնիստներն առաջ են քաշում այն գաղափարը, թե Հոլոքոստ տեղի չի ունեցել, ես մտածեցի... «Ինչպիսի զավեշտ»: Ինչպե՞ս կարելի է մտավորական թվացող, խելացի մարդը ժխտել մի իրադարձություն, որն այնքան հիմնավորապես վավերացվել է հենց իրենց՝ մարդասպանների կողմից:

Բայց ես արագորեն հասկացա, որ որոշ մարդիկ լսում են այս կեղծ-պատմաբաններին: Ռեկվիոնիստների հրապարակումները կրում էին դոկտորական և այլ մասնագիտական

աստիճաններ ունեցող անուններ: Նրանց նյութերն սկսում էին երևան գալ ավագ դպրոցի և համալսարանական գրադարաններում և հեղինակավոր հաստատությունների դարակների վրա:

Երբ այս երևույթներն ի հայտ եկան, միտքս սկսեց պտտվել՝ զօր ու գիշեր հանգիստ չտալով: Մղձավանջները, որոնք ես մեծ դժվարությամբ թաքցրել էի, սկսեցին նորից հայտնվել: Ես խոցված էի: Ես զայրացած էի: Ո՛չ: Ես մոլեգնած էի: Ես ուզում էի ճշալ, հարձակվել: Սկզբում ես փորձեցի անել սա իմ բանաստեղծության միջոցով:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՂՆԵՐ

Ինչպես կարող էին նրանք ասել, թե ոչ մի Հոլոքոստ
չի եղել,

Ինչպես կարող են պնդել, թե բոցերն իրական չէին,
Ինչպես կարող են գողանալ հիշողություններս և պղծել
Հենց այն դարպասը, որ տանում է դեպի իմ
հավերժական վիշտը...

Նրանք գող ուղարկեցին քերելու ծխնելույզի պատերը,
Բռնաբարելու սրահներն ու ոտնատակ տալու
սրբազան հողը:

Նրանց չար ստերի ձայները լսվում են հինավուրց
ծառերի ներքո:

Ուր ոսկորներն ու մոխիրները այլևս չեն կարող
խաղաղ մնալ...

Հետագայում հուսահատությունից խորհրդակցեցի իրավաբանի հետ: Նա կարծես հասկացավ իմ գայրույթը և լրջորեն առաջարկեց, որ դատի տամ հոգու զրպարտության համար: Ես մի քիչ ավելի լավ զգացի: Ես հանգստացա: Հետո ես սկսեցի մտածել, թե ինչպիսի արժանապատվության կորուստ է պաշտպանել անժխտելի ճշմարտությունը և որոշեցի ընդդեմ իրավաբանական գործ չհարուցել:

Բայց ես ինչ-որ բան պետք է անեի: Ես չէի կարող լուռ մնալ: «Ոչինչ, ես կվարվեմ իմ ձևով», - ասացի ինքս ինձ: Վերջիվերջո, ես զենք ունեմ: Ես վերապրած եմ, ես ականատես եմ, և եկել է ժամանակը, որ ես արտահայտվեմ:

Իմ լուրջությունը խզելու ժամանակը շատ նպաստավոր էր, որովհետև 70-ականների վերջերին աճում էր հետաքրքրությունը, անգամ հետաքրքրասիրությունը Հոլոքոստի նկատմամբ: Սկզբում ես խոսեցի իմ փորձառության մասին տեղական ավագ դպրոցում: Հետո մի երիտասարդ լրագրող խնդրեց, որ ինձ հետ հարցազրույց վարի: Նրա անունն էր Հարիեթ Տառնոր Վաքս:

Հարիեթը գրեց նրբազգաց ու ճշմարիտ մի հոդված իմ փորձառությունների մասին: Մենք արագորեն ընկերներ դարձանք: Նրա քաջալերանքով ես համաձայնվեցի ուրիշ հարցազրույցների ու ելույթների: Բացի գրող լինելուց, Հարիեթը նաև ուսուցիչ էր: Մեյլեմի պետական քոլեջը շուտով խնդրեց, որ մենք մի դասընթաց վարենք Հոլոքոստի մասին: Ի վերջո, 1981-ին Հարիեթը և ես հիմնեցինք Հյուսիսային ասիի

Հոլոքոստի կենտրոնը¹: Այս կենտրոնի նպատակն էր առաջ մղել Հոլոքոստի իմացությունը՝ հետաքննելով այս պատմական իրադարձության յուրօրինակությունը և օգտագործել Հոլոքոստի համամարդկային դասերը պայքարելու ընթացիկ ռասիզմի, հակասեմիտիզմի և մոլեռանդ խտրականության դեմ: Մենք շարունակում ենք նվիրված մնալ այս գործին:

Գրեթե նույն ժամանակ ես սկսեցի մասնակցել «Առերեսվենք պատմությանը և մեզ հետ» ազգային ֆոնդի գործերին: Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցելը զգալիորեն լայնացրին իմ մտահորիզոնը: Վերապրածների տարեկան սեմինարների կազմակերպումը դարձավ նվիրական աշխատանք, և դպրոցներում ու հասուն մարդկանց դասընթացներում դասախոսելը նոր լիցք տվեցին կյանքիս:

Սարսափների վերապրումը դժվար էր, բայց իմ ունկնդիրների արձագանքները հաստատում էին արածիս իրավացիությունը: Ես իմացա, որ մարդիկ հետաքրքրված են, և նրանց նամակները հաճախ քաջալերում էին ինձ հետագոտելու սեփական զգացմունքներս:

Մի օր, երբ կարդում էի իմ բանաստեղծությունը մի դասարանում, աշակերտներից մեկն ինձ ասաց. «Ձեր պոեզիան այնքան մեղմ է. արդյոք երբևէ չեք գրում քինոտ ու չար ձևով: Գիտեք...»:

¹ Բոստոնից հյուսիս գտնվող արվարձանները, որոնք Ատլանտյան օվկիանոսի ափին են, կոչվում են Հյուսիսային ափ (North Shore):

«Այո՛, ես գիտեմ», - պատասխանեցի: «Բավականին վերջերս գրեցի մի շատ տգեղ բանաստեղծություն գերմանական հեռուստատեսությամբ Հոլոքոստի մասին ցուցադրված մի ֆիլմից հետո. ես կարդացի մի կնոջ մասին, որը բոլորովին չէր հավատացել տեսածին: Նա կասկածեց անգամ մահվան ճամբարների գոյությանը: Այս կինը համոզված էր, որ Հոլոքոստը սինոստական դավադրություն է: Ես շատ զայրացած էի: Այդ գիշեր ես գրեցի որոշ չափով աստելությամբ լի տգեղ, սարսափելի չափածո տողեր, բայց երբեք չավարտեցի բանաստեղծությունս»:

Մի քանի օր անց ես այդ աշակերտից նամակ ստացա, որում նա քաջալերում էր ինձ ավարտելու բանաստեղծությունը: Ավարտեցի: Այդ բանաստեղծության մեջ ես հղում եմ այն փաստին, որ մեր սարսափը չէր ավարտվում մահով: Նացիստները ձևեր էին գտել իրենց հրեա զոհերի մասունքներն օգտագործելու՝ մարդկային մաշկը՝ լուսամփոփների, մազերը՝ ներքնակները լցնելու, ճարպը՝ օճառ պատրաստելու, մոխիրը՝ պարարտացնելու համար:

ՀՈԼՈՔՈՍՏԻ ՄԻՆԻ – ՍԵՐԻԱԼԸ

Գերմանական հեռուստատեսությամբ

Ա՛խ, իմ գեղեցիկ օրիորդ²,

Դու գունատվել ես չհավատալուց՝

Արդյոք պատկերը քո «հեռուստացույցի» վրա

Սրտխառնություն առաջացրեց:

² Fraulein – օրիորդ (գերմաներեն):

Տեսնո՞ւմ ես լուսամփոփը:
Հիմա ձեռքերդ կայչուն, խոնավ են,
Հ՛եյ, մի ասա ինձ, գրողը տանի,
Դու լավ գիտես, քո խիղճն եմ ես:
Հայրդ խիղճ չուներ... և հիմա նա գնացել է
Արգենտինա, դու գիտես:
Այնպես որ...

Գնա՛, դուրս, շունչ քաշիր,
Բայց չհամարձակվես խեղդվել,
Երբ ռունգերդ ծխով լցվեն:
Այդ ծուխը եղել է օդում,
Բոլոր այս տարիներին: Պարզապես չհոգացիր
Նայել, հոտը զգալ,
Դե, ինչն է...

Ինչպե՞ս է քո պարտեզն աճում,
Փարթամ մրգերով և ծաղիկներով,
Եվ ի՞նչ է Ֆրանս Բաուրեսը
Օգտագործում պարարտացնելու համար...
(Դա մի կեղտոտ հնարք է)
Դու իսկապես հիվանդ տեսք ունես...

Ա՛խ, հրեաները, անիծյալ (Verdamte) հրեաները,
Ինչպես են նրանք գալիս հետապնդելու...
Պարզապես ի՞նչ են նրանք ուզում:

Եվ դու, դու երբեք նույնիսկ չգիտեիր
Մի հրեայի...

Դե՛, սիրելիս (Liebchen),
մի հուսահատվիր,
Ինչո՞ւ ես ապշած գետնին նայում:
Այդ ի՞նչ ես գտել: Կա մի շող,
Ո՛չ դա հույս չէ՝ հիմարի մեկը,
Դա ոսկի ատամ է...

Քո տեսողությունը խամրում է,
Եվ բերանդ զգում է թթվահամ,
Դու տրորում ես ծաղիկները...
Դու ուժով շրխկացնում ես դռները
Եվ առանց նազանքի...
Հետո դեմքդ ես լվանում:
Ջուրը թվում է հանգստացնող սառը,
Բայց խենթի պես փնտրում ես
Մի կտոր օճառ...
Եվ դու ճչում ես...

Բայց իմ երազում
Ես հազիվ եմ լսում քո հառաչը,
...Ես ունեմ իմ սեփական
մղձավանջները:

Իմ ապրած խավարի ու չարիքի պատճառով ես հաճախ հիանում եմ մարդկային հոգու աննկունությամբ: Ի՞նչն է, որ մեզ դրդում է հատակին իջնելուց հետո վեր բարձրանալ: Իմ սեփական վերամիացումը կյանքին կայացավ, երբ ես այցելեցի Իսրայել: Աշխարհի այդ փոքրիկ անկյունում առաջին անգամ իմ կյանքում ինձ ամբողջական զգացի:

«ԵՎ ԼՈՒՅՍ ԵՂԱՎ» բանաստեղծությունից
Ես ուզում եմ գովեստներ ասել, որ աշխարհը լսի,
Մինչ լեռները դողան քարերով ու բեկորներով,
Քանզի իմ սիրտը երգում է, ա՛խ, այնքան բարձր,
այնքան պարզ՝
Ես ազատ եմ: Ես ազատ եմ:

Այո՛, ես տեսա Իսրայելի մանուկները տուն եկան:
Մի հոգի, որին ոչինչ երբեք չպետք է խոչընդոտի,
Այլևս երբեք որպես վտարանդիներ, որ պետք է
մոլորվեն ու թափառեն

Եվ մեռնեն հուսահատ...

Գիշերվա անդորրի մեջ կարող ենք լսել մի ձայն,
Որ շնջում է խոնարհ շնորհակալության աղոթքը,
Մի Kadish³... Մի արցունք... Հետո շարունակել ցնձալ
Եվ փառաբանել կյանքը:

³ Kadish – Աստծու գովաբանության հիմն, որ ասվում է հրեական գովաբանության ծեսի ժամանակ:

Իմ սեփական հրաշքը պատահեց ինձ,
Երբ աչքերս տեսան կապույտ երկինքը վերևում,
Մարգագետիններն այնքան կանաչ... և գմբուխտ ծովը
Այնքան խոր, ինչպես սերը,
Որ, թվում է, շրջապատել է ինձ:

Ո՛չ մի ամպ տեսադաշտում:

Իմ ժառանգությունն անգին է ժամանակի առաջ,
Ես բերկրանքով խմեցի նրա գեղեցկությունից՝
Կախված... Վսեմ...

ՎԵՐՁԱԲԱՆ
ՎԵՐԱԴԱՐՁ

Վաղ 1980-ականների սկզբին կյանքս անցնում էր հիշելով: Հիշելը դարձել էր իմ զբաղմունքը, իմ առաջադրանքը, իմ մոլեգնությունը, իմ տանջանքը: Հիշելը դժվար էր, բայց ես դա կարողանում էի: Հետո 1986-ին նոր խնդիր առաջ եկավ: Ես հրավեր ստացա ուղեկցել Բեռնարդ կարդինալ Լոին¹ և լեհական ծագման մի խումբ կաթոլիկների հետ գնալ Լեհաստան՝ ուխտագնացության:

Ես շոյված էի և խորապես երախտապարտ՝ ստանալ հնարավորություն առաջ տանելու իմ ջանքերը՝ կապված քրիստոնյա-հրեական հարաբերությունների գործին: Բայց ես նաև խիստ վախեցած էի: Հիշել հեռավորության վրա մի բան է: Հետ գնալ վայրագությունների դեպքի վայրը՝ բոլորովին ուրիշ: Շաբաթներով ես տանջվում էի որոշումս կայացնելու համար: Ի վերջո ամուսնուս, Բլանկայի, երեխաներիս աջակցությամբ որոշեցի գնալ:

Մենք Վարշավա հասանք կուրացնող անձրևամրրիկի ժամանակ: Մթնոլորտը ճնշող էր, փակված: Ինձ Լեհաստանը թվում էր որպես գերեզմանոց: Եվ իրոք, որոշ առումով, այդպես էր: 1930-ականներին Լեհաստանում կային համարյա 3.3 միլիոն հրեա տղամարդիկ, կանայք և երեխաներ: Այդ ամ-

¹ Այդ ժամանակ Բեռնարդ կարդինալ Լոն, որի լրիվ անունն է Բեռնարդ Ֆրանսիս Լո, Բոստոնի արքեպիսկոպոսն էր:

ռանը՝ 1986-ին, 5000-ից քիչ կային: Լեհաստանում ոչ մի ռաբբի չկար, և սինագոգները մեծ մասամբ դարձել էին թանգարաններ կամ պահեստներ:

Քանի որ ես երբեք չէի ապրել Վարշավայում, ես այնտեղ եղած ժամանակ չապրեցի հոգեկան ցավ: Բայց Կրակովն այլ հարց էր: Մարմինս սկսեց դողալ, հենց որ մտանք քաղաք:

Իմ այս գեղեցիկ քաղաքը ժամանակին տունն էր 60.000-ոց կյանքով լի հրեական համայնքի: 1986-ին երևի 200 հրեա մարդ կար Կրակովում ապրող՝ բոլորն էլ տարեց: Մի ուրբաթ երեկո ես այցելեցի Կրակովի միակ մնացած սինագոգը: Այդ գիշեր իմ տխրությունը վերածվեց սգի և անսփոփ վշտի: Եվս մեկ անգամ ես կասկածի տակ առա Լեհաստան վերադառնալու ողջամտությունը: Ես գրեցի:

40 ՏԱՐԻ ԱՆՅ

Ինչու եմ եկել ճեղքելու այս ավերածությունը,
Երբ կատաղի զգացմունքներս քնած զազանի պես
Պատռում են փորոտիքս և խնջույք սարքում իմ վախով,
Մինչև համտեսեմ դառնությունն անցյալի:

Ես երևի վերադարձել եմ պատճառը գտնելու,
Օգնելո՞ւ բացատրել տգեղությունն ու
դավաճանությունը:

Արդյոք ես չէի պլանավորել մարտահրավեր
Աստծու շիտակությանը
Եվ փորձել հասկանալ այս խենթությունը:

Բայց... Հատուկ իմաստ չկա թաքցնելու,
Չկան գաղտնիքներով լի գրպաններ բացահայտելու
Ո՛չ ամպրոպ, ո՛չ կայծակ, ո՛չ մեծ ճշմարտություն
բացատրելու՝
Միայն մի հրեշավոր չարիք, որ տանջի միտքս:



*Կանգնած Բիրկենաուի դիակիզարանի մոխիրների մոտ: Սոնյան
Բեռնարդ կարդինալ Լոի, Ֆրանցիսեկ կարդինալ Մախարսկիի և
Հակազրպարտանքի² Լիզայից Լեոնարդ Չեքիսի հետ:*

² Anti Defamation League – Հայտնի ամերիկյան կազմակերպություն է՝
հիմնադրված 1913 թվականին, որ պայքարում է հակասեմիտիզմի դեմ:

Իհարկե, իմ հարցերին պատասխաններ չկային, բայց միննույն է, ես շարունակեցի իմ ճամփորդությունը դեպի անցյալը: Կրակովում ես կանգնեցի գետտոյի պատի մոտ (Umschlag Platz) և հիշեցի այն գիշերը, երբ մորս ինձնից տարան: Ես աղոթեցի այն բլրին, որտեղ ժամանակին Պլազովն էր գտնվում, և հիշեցի վերջին անգամ հորս տեսնելը:

Մեր խումբը ուղևորվեց Օսվենցիմ, և առաջին անգամ հրեաներն ու քրիստոնյաները այնտեղ միասին աղոթեցին: Ես կարդացի իմ բանաստեղծությունների մի մասը և կիսեցի հետևյալ խոհերս ուխտագնաց ընկերներիս հետ:

«Քառասուն տարի ես փորձել եմ պատկերացնել այս աննկարագրելի սարսափի վայր վերադառնալը: Ի՞նչ կզգայի ես: Ի՞նչ կմտածեի ես: Ի՞նչ զգացում կունենայի կանգնած իմ ժողովրդի գերեզմանոցի վրա: Հարցերը ճնշող են: Պետք է նշեմ իմ սիրելի ծնողներ Յանեկի և Ադելայի անունները: Պետք է թվարկեմ իմ անձնական սիրելիների ցնցող քանակը՝ անմեղ տղամարդիկ, կանայք և երեխաներ՝ դատապարտված մահվան ու մորթվելու»:

Ինձ հետաքրքրում էին այս խիստ կարևոր փորձառության հակասությունները: Կանգնելն իմ ժողովրդի գերեզմանի վրա անիրական էր և ավերիչ, բայց միասին լացելը դիակլիզարանի մոխիրների մեջ, հրեաների և քրիստոնյաների գրկախառնումը՝ դա իրական էր:

Մեր՝ Օսվենցիմ այցելելու գիշերը ես գրեցի:

ՎԵՐԱԴԱՐՁ ՕՍՎԵՆՑԻՄ

Սա անիրական իրականություն է,
Մի դատարկ ու հեռավոր զգացում,
Ես հավերժությունը պիտի նվիրեմ
Այս կորստի վիթխարի զգացմունքին:

Փոխարենը շփոթված եմ, գրգռված,
Ես պատրաստվել էի այլ տրամադրության՝
Տխրության, խենթության համար,
Բայց ոչ այս հանդարտ, ահարկու դատարկության
համար:

Ցավն, անշուշտ, կգա մի ժամանակ անց,
Խելագարությամբ, զայրույթով, անզամ արցունքներով,
Եվ ես կողջունեմ այն հին ընկերներին,
Որոնց հպումից էլ չեմ վախենում:

Այս երեկո բոլոր զգացմունքներս սխալ են,
Ես տենչում եմ բերել ցավի խայթոցը,
Որ նորից զգամ կենդանի, հասկանալի,
Որ անզգայությունն է, որ տանել չեմ կարող:

Եվ միևնույն է, ես հույս ունեմ, որ արևը կծագի,
Մեկ անզամ ևս մարդկությանը ջերմացնելու,

Որ փակի վերքերը և ապաքինի սպիները
Այս անհրական իրականության:

Օսվենցիմից հետո ես պետք է դեմ առ դեմ գայի մի վերջին հիշողության հետ: Ես գիտեի՝ չեմ կարող հեռանալ Կրակովից առանց վերադառնալու իմ թաղամասը, իմ փողոցը և այն տունը, որում մի ժամանակ ապրել էի: Մինչ աչքը թարթելի և սկսում էի իմ ուղևորության այս վերջին փուլը:

Քանի որ քշում էինք Կազիմիերց թաղամասի փողոցներով, ես երդվեցի զգացմունքներս զսպել: Մենք ուղղվեցինք դեպի Վիսլա գետը և սկզբում կանգ առանք Դիեթլա թիվ 1 հասցեում, այն տունը, ուր մի ժամանակ ապրել էր Նորբերտը: Ես պատկերացրի Նորբերտին՝ իր եղբայրների հետ ֆուտբոլ խաղալիս, հետո շտապելիս՝ Բլանկայի հետ հանդիպելու: Միբոս մի փոքր ավելի արագ խփեց, երբ վեր ու վար նայեցի փողոցին: Այն իրականում շատ չէր փոխվել: Հանկարծակի ես հայտնվեցի Դիեթլա 21-ի առջև՝ իմ մանկության հասցեում:

Չնայած խառն ապրանքների փոքր խանութն այլևս չկար, և շենքերը մի քիչ բացթողի վիճակում էին, ամեն ինչ թվաց ծանոթ: Միբոս խփելով բարձրացա երկու հարկ և թակեցի ընտանիքիս բնակարանի դուռը: Երբ տարեց մի կին բացեց դուռը, բացատրեցի, որ ժամանակին այդտեղ էի ապրել և խնդրեցի ներս մտնել:

Հանկարծ ես կանգնած էի մորս խոհանոցում: Նայեցի պատին հենված փոքր սեղանին և տեսա ինձ այնտեղ նստած՝

տնային աշխատանք անելիս: Ասես զմայլված աչք գցեցի ճաշասենյակ և տեսա ծնողներիս Շաբբաթի ճաշին³՝ մոմերը վառված, գինին լցված: Եվ հստակորեն կարող էի լսել բազմոցին նստած քրոջս հռհռոցը:

Հետո անցա պատշգամբ: Ցած նայելով դեպի բակը՝ ես կարող էի տեսնել ինձ, որպես մի փոքրիկ աղջիկ կլաս խաղալիս՝ երկու ծառերի տակ: Այդ ծառերը խիստ հատուկ էին, որովհետև երբ Բլանկան և ես ծնվել էինք, հայրս տնկել էր մի ծառ ամեն մեկիս համար:

Հանկարծակի ես դուրս եկա զմայլանքից և կապվեցի ներկայի հետ: Այդ ծառերը՝ արդյոք դրանք դեռ կային: Միանգամից կարիք ունեի պատասխանն իմանալու: Բայց և նույնպես ես վախենում էի պատասխանից: Կարող է ծառե՞րն էլ էին անհետացել, ինչպես իմ ժողովուրդը:

Անվճռական ես ցած նայեցի դեպի բակ: Այնտեղ՝ այդ մութ ու կեղտոտ վայրում, ես տեսա մի ծառ, նրա արմատները երևում էին՝ ջարդելով ու ճեղքելով, ճաքած ու անհավասար բակի գետինը: Մեկ ծա՛ռ: Մեկ ծառ գոյատևել էր: Ինձ համար այն դարձավ կյանքի խորհրդանիշը:

Երբ տուն վերադարձա, ես պատմեցի Բլանկային ծառի մասին: Ինչպես միշտ, քույրս խիստ առատաձեռն էր: Իրեն հատուկ հումորի զգացումով Բլանկան հայտարարեց. «Դա քո ծառն է: Ես այն քեզ եմ տալիս: Ես երբեք դրա մասին բանաստեղծություն չեի գրի, բայց դու կգրես, այդպես չէ՞»:

Ես գրեցի:

³ Շաբբաթ – հրեական կրոնի հանգստի օրը:

ԿԵՆԱՅ ԾԱՌԸ⁴

Կանգնած է մի ծառ, միայնակ մի ծառ,
Տնկված ինձ համար թշնամի երկրում,
Տնկված սիրով, հորս ձեռքերով,
Իմ ծնվելու օրը:

Արմատները ծռմռված են ու մաշված,
կոտրված ու ղլղրված,
Կարծես կյանքը դադարել է կամ չի եղել երբեք:

Չնայած դրան ծառի վերջույթները ձգվում են
դեպի արևը,
Եվ մեկ (կամ երկու) տերևներով
Կանաչ ու քնքուշ հրաժարվեցին հանձնվել
Ու համարձակվեցին գոյատևել: Ծառը դեռ ապրում է:

Տեսա իմ ծառը, իմ ծննդյան ծառը՝
Տնկված ինձ համար՝ հորս ձեռքերով:
Նա կանգնած է հանդուգն, հալածված, մենակ,
Վերջինը, միակը... ծառը կենաց:

⁴ Բառացի թարգմանությունը կլիներ կյանքի ծառը: Անգլերեն՝ „The Tree of Life“:

Այս հուշագրությունը իմ զավակների,

քրոջս զավակների


և նրանց զավակների՝

Դոնի, Սանդրայի, Անդրեայի, Նախմանի, Տալի, Ռոզի, Դարի,

Ջոնի, Էլիզաբեթի, Բարբարայի, Ստյուարտի, Էշլիի, Ալիսայի,

Աբիգեյլի, Ջոշուայի, Ռաքելի և նրանցից հետո

եկողների համար է:



Գետտոյի և ճամբարների վայրերը, ուր Ստեփան բանտարկված էր:

Քարտեզը գծել է Չիմի Չոունզը
(Ատերեալները Պատմությանը և մեզ հետ կազմակերպության աշխատակից)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ՍՈՆՅԱ ՎԱՅՑԻ ԴԱՍԵՐԸ ՀԱՎԵՐԺԻ ՀԱՄԱՐ ԵՆ -----	V
A. DOLUKHANYAN SONIA WEITZ'S LESSONS ARE FOR ETERNITY -----	VIII
A. DOLUKHANYAN LES LEÇONS DE SONIA WEITZ POUR L'ÉTERNITÉ -----	XII
А. ДОЛУХАНЫН УРОКИ СОНИ ВАЙЦ ДЛЯ ВЕЧНОСТИ -----	XV
ԱՌԵՐԵՍՎԵԼՔ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԵՁ ՀԵՏ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴ -----	1
ՆԱԽԱԲԱՆ -----	3
ԱՌԱՋԱԲԱՆ -----	5
1 Լույսի բեկորներ (1928-1939) -----	8
2 Դեպի խավար (1939-1941) -----	20
3 Գետտոն (1941-1943) -----	27
4 Պլազով. մարտ 1943 – դեկտեմբեր 1944 -----	50
5 Օսվենցիմ և նրանից դուրս. հունվար 1945 -----	76
6 Բերգեն–Բելզեն և Վենուգրերգ. փետրվար – ապրիլ, 1945 ----	88
7 Մաուֆհաուզեն. մայիս 1945 -----	109
8 Տեղահանված մարդկանց ճամբարները. 1945-1948 -----	118
9 Ես ազատ եմ -----	143
ՎԵՐՋԱԲԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁԸ -----	154

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրված է Yom Ha' Shoah-ին -----	7
Գաղտնի հարսանիք -----	18
Լուռ արձագանք -----	26
Խաղաղ ժամանակ -----	33
Ինչպես կլիմանայինք -----	37
Մորս հիշատակին -----	45
Հաղթանակ -----	58
Ափսոսանք -----	64
Պլագովից Բաղդադ -----	66
Մահվան երթ -----	80
Անբասիր քրիստոնյաները -----	86
Սառցելուլս -----	91
Լացե՛ք, մանուկնե՛ր, լացե՛ք -----	98
Կյանքի նվերը -----	104
Անասնատար վագոնները -----	107
Իմ սևամորթ փրկիչը -----	111
Վերամիավորումը մի հրաշք -----	115
Հորս հիշատակին -----	116
Տարի – ժամանակ -----	121
Էլ ի՞նչ կորավ -----	127
Քարերը չեն լալիս -----	129
Իմ Արևմտյան պատը -----	135
Ծննդյան իրավունք -----	136

Սպիներ (և ստերեոտիպացում) -----	140
Որտե՞ղ էր մարդը -----	141
«Իր եղբոր պահապանը» բանաստեղծությունից -----	145
Պատմության խեղաթյուրողներ -----	146
Հոլոքոստի մինի-սերիալը -----	149
«Եվ լույս եղավ» բանաստեղծությունից -----	152
40 տարի անց -----	155
Վերադարձ Օսվենցիմ -----	158
Կենաց ծառը -----	161